

## ԳԼՈՒԽ 1. ԱՄՈՒՄՆՈՒԹՅՈՒՆ

### Ք1. ԱՄՈՒՄՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

- 1.1.1. Ի՞նչ կարգով է կատարվում ամուսնադրությունը
- 1.1.2. Ի՞նչ կարգով է կատարվում ամուսնության գրանցումը ՔԿԱԳ մարմիններում
- 1.1.3. Ի՞նչ փաստաթղթեր է պահանջվում ներկայացնել ամուսնությունը գրանցելու համար
- 1.1.4. Ի՞նչ փաստաթղթով է հաստատվում ամուսնության գրանցման փաստը
- 1.1.5. Ի՞նչ է ամուսնության գրանցման փաստի ձանաչումը

### Ք2. ԱՄՈՒՄՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

- 1.2.1. Որո՞նք են ամուսնադրության պայմանները
- 1.2.2. Որո՞նք են ամուսնադրությունն արգելող հանգամանքները
- 1.2.3. Ի՞նչ ազդեցություն է ունենում ամուսնությունն անչափահասի գործունակության վրա

### Ք3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՔԱՂԱՔԱԳԻՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՄՈՒՄՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 1.3.1. Ի՞նչ ձևով և կարգով է կատարվում օտարերկրյա քաղաքացիների մասնակցությամբ ամուսնադրությունը Հայաստանի Հանրապետության տարածքում
- 1.3.2. Որո՞նք են ՀՀ տարածքում օտարերկրյա քաղաքացիների մասնակցությամբ ամուսնադրության պայմանները
- 1.3.3. Կարո՞ղ է, արդյոք, օտարերկրյա քաղաքացիների միջև ամուսնադրությունը կատարվել Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա պետությունների դեսպանություններում կամ հյուպատոսություններում

### Ք4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԿԱՏԱՐԿԱԾ ԱՄՈՒՄՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃԱՆԱԶՈՒՄԸ

- 1.4.1. Կարո՞ղ է, արդյոք, ՀՀ քաղաքացիների ամուսնադրությունը կատարվել Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս
- 1.4.2. Ի՞նչ կարգով ու պայմաններով է կատարվում ՀՀ քաղաքացու և օտարերկրյա քաղաքացու միջև ամուսնադրությունը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս
- 1.4.3. ՀՀ-ում ձանաչվու՞մ են, արդյոք, ՀՀ տարածքից դուրս օտարերկրյա քաղաքացիների միջև կատարված ամուսնադրությունները

## ԳԼՈՒԽ 2. ԱՄՈՒՄԻՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### Ք1. ԱՄՈՒՄԻՆՆԵՐԻ ԱՆՋՆԱԿԱՆ ՈՉ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

- 2.1.1. Ի՞նչ անձնական ոչ գույքային իրավունքներ ունեն ամուսինները
- 2.1.2. Պարտավո՞ր են, արդյոք, ամուսինները բնակվել համատեղ
- 2.1.3. Ի՞նչ ազգանուն կարող են ընտրել ամուսիններն ամուսնանալիս
- 2.1.4. Եթե ամուսնանալիս ամուսիններից մեկն ընդունել է մյուս ամուսնու ազգանունը, ամուսնալուծության դեպքում, պարտադի՞ր է այդ ազգանվան փոփոխումը մինչամուսնական ազգանվամբ

### Ք2. ԱՄՈՒՄԻՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

- 2.2.1. Ո՞ր գույքն է հանդիսանում ամուսինների ընդհանուր համատեղ սեփականություն
- 2.2.2. Նշանակություն ունի՞, արդյոք, թե ամուսիններից յուրաքանչյուրն ինչ մասնակցություն է ունեցել ընդհանուր համատեղ սեփականության ձևավորմանը
- 2.2.3. Կարո՞ղ է, արդյոք, փաստական ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող անձանց համատեղ ձեռք բերած գույքը համարվել նրանց համատեղ սեփականությունը
- 2.2.4. Ո՞ր գույքը կարող է մտնել համատեղ սեփականության կազմի մեջ
- 2.2.5. Բնակելի տունը, որը ձևակերպված է ամուսիններից մեկի անունով, հանդիսանու՞մ է, արդյոք, ամուսինների համատեղ սեփականություն
- 2.2.6. Ո՞ր դեպքերում է ամուսնության ընթացքում սեփականաշնորհված բնակարանը հանդիսանում ամուսինների համատեղ սեփականությունը
- 2.2.7. Կարո՞ղ է, արդյոք, ամուսինների ընդհանուր համատեղ սեփականությունն ամուսնության ընթացքում վերածվել ընդհանուր բաժնային սեփականության

Ք3. ԱՄՈՒՍԻՆՆԵՐԻՑ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

- 2.3.1. Ո՞ր գույքն է հանդիսանում ամուսիններից յուրաքանչյուրի սեփականություն
- 2.3.2. Կարող է, արդյոք, ամուսիններից մեկի սեփականություն հանդիսացող գույքը ճանաչվել ամուսինների համատեղ սեփականություն
- 2.3.3 Ի՞նչ կարգով է ամուսիններից մեկի գույքը ճանաչվում ամուսինների համատեղ սեփականություն

Ք4. ԱՄՈՒՍԻՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ ՁՏԵՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՀԵՏ ԿԱՊԿԱԾ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

- 2.4.1. Ի՞նչ կարգով է օգտագործվում, տնօրինվում և տիրապետվում ամուսինների ընդհանուր համատեղ սեփականությունը
- 2.4.2. Կարող է, արդյոք, ամուսիններից մեկը կնքել համատեղ սեփականության ներքո գտնվող գույքը տնօրինելու գործարք՝ առանց մյուս ամուսնու համաձայնության
- 2.4.3. Եթե ամուսիններից մեկը գրավ է դնում ամուսինների համատեղ սեփականություն հանդիսացող բնակելի տունը, պահանջվում է, արդյոք, մյուս ամուսնու համաձայնությունը
- 2.4.4. Ե՞րբ կարող է անվավեր ճանաչվել ամուսինների համատեղ սեփականություն հանդիսացող գույքի հետ կապված՝ ամուսիններից մեկի կնքած գործարքը

Ք5. ԱՄՈՒՍԻՆՆԵՐԻ ՄԻՍՅԱՆՑ ԳՈՒՅՔԸ ԺԱՌԱՆԳԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ

- 2.5.1. Ի՞նչ իրավունքներ ունի ամուսինը մահացած ամուսնու գույքի նկատմամբ
- 2.5.2. Ո՞ր դեպքերում ամուսինն իրավունք չունի ժառանգելու մահացած ամուսնու գույքը
- 2.5.3. Ամուսնալուծված ամուսիններն ունե՞ն, արդյոք, միմյանց գույքի նկատմամբ ժառանգման իրավունք
- 2.5.4. Փաստական ամուսնական հարաբերությունների մեջվ գտնվող անձինք ունե՞ն, արդյոք, միմյանց գույքը ժառանգելու իրավունք
- 2.5.5. Ի՞նչ կարգով է ժառանգվում ամուսինների համատեղ սեփականության ներքո գտնվող բնակելի գույքը

Ք6. ԱՄՈՒՍԻՆՆԵՐԻ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ

- 2.6.1. Հնարավո՞ր է, արդյոք, ամուսինների համատեղ սեփականության ներքո գտնվող գույքի բաժանումը ամուսնության ընթացքում
- 2.6.2. Ի՞նչ կարգով է բաժանվում ամուսինների համատեղ սեփականության ներքո գտնվող գույքը, եթե այդ կապակցությամբ ամուսինների միջև վեճ չկա
- 2.6.3. Ի՞նչ հետևանքներ է ունենում ամուսինների համատեղ սեփականության ներքո գտնվող գույքի բաժանումը
- 2.6.4. Կարող է, արդյոք, ամուսինների համատեղ սեփականություն հանդիսացող գույքը բաժանվել ոչ հավասար բաժիններով
- 2.6.5. Ի՞նչ կարգով է բաժանվում ամուսինների համատեղ սեփականության ներքո գտնվող գույքը, եթե այդ կապակցությամբ ամուսինների միջև առկա է վեճ
- 2.6.6. Ամուսինների համատեղ սեփականության ներքո գտնվող բնակելի տան բաժանման ի՞նչ տարբերակներ են հնարավոր
- 2.6.7. Ինչպե՞ս է բաժանվում ամուսինների համատեղ սեփականության ներքո գտնվող բնակելի տունը՝ այդ կապակցությամբ վեճի առկայության դեպքում
- 2.6.8. Ո՞ր դեպքերում է բնակելի տունը թողնվում ամուսիններից մեկին, իսկ մյուսին տրվում դրամական փոխհատուցում
- 2.6.9. Ինչպե՞ս է որոշվում ամուսնու բաժնի դիմաց փոխհատուցման գումարի չափը
- 2.6.10. Ո՞ր դեպքում դատարանը կարող է ամուսիններին պարտավորեցնել վաճառել իրենց համատեղ սեփականությունը հանդիսացող բնակելի տունը և նրանց միջև բաշխել վաճառքից ստացված գումարը՝ իրենց բաժիններին համապատասխան
- 2.6.11. Ամուսնալուծության դեպքում ամուսիններից մեկի սեփականությունը հանդիսացող բնակարանում գրանցված մյուս ամուսինն ի՞նչ իրավունքներ ունի այդ բնակարանի նկատմամբ

Ք7. ԱՄՈՒՍԻՆՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՍՅԱՆՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ

- 2.7.1. Կարող է, արդյոք, ամուսիններից մեկի անձնական պարտավորությունների դիմաց բռնագանձում տարածվել մյուս ամուսնու անձնական սեփականությունը հանդիսացող գույքի վրա
- 2.7.2. Ո՞ր դեպքում է ամուսիններից մեկի անձնական պարտավորությունների դիմաց բռնագանձում տարածվում ամուսինների համատեղ սեփականության մեջ այդ ամուսնու ունեցած բաժնի վրա

- 2.7.3. Ի՞նչ պաշտպանության միջոցներ ունի այն ամուսինը, երբ մյուս ամուսնու անձնական պարտավորությունների դիմաց բռնագանձում է տարածվել իր անձնական սեփականությունը հանդիսացող գույքի կամ ամուսինների համատեղ սեփականության մեջ իր բաժնի վրա
- 2.7.4. Ո՞ր դեպքում է հնարավոր ամուսիններից մեկի ստանձնած պարտավորությունների դիմաց բռնագանձում տարածել ամուսինների ամբողջ ընդհանուր սեփականության վրա
- 2.7.5. Ո՞ր պարտավորություններն են համարվում ամուսինների ընդհանուր պարտավորություններ

### ԳԼՈՒԽ 3. ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

#### Ք 1. ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

- 3.1.1. Որո՞նք են ամուսնության դադարման հիմքերը
- 3.1.2. Ի՞նչ հետևանքներ կարող է ամուսիններից մեկին մահացած ճանաչելու հետևանքով դադարած ամուսնության համար ունենալ այդ ամուսնու հայտնվելը

#### Ք 2. ԱՄՈՒՍՆԱԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

- 3.2.1. Ի՞նչ կարգով է կատարվում ամուսնալուծությունը
- 3.2.2. Ո՞ր դեպքերում է ամուսնալուծությունը կատարվում քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում
- 3.2.3. Ո՞ր դեպքերում կարող է քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում ամուսնալուծությունը կատարվել ամուսնու միակողմանի դիմումի հիման վրա
- 3.2.4. Կարո՞ղ է, արդյոք, ամուսնությունը վերականգնվել անհայտ բացակայող ճանաչված ամուսնու հայտնվելու դեպքում
- 3.2.5. Ո՞ր դեպքում է ամուսնալուծությունը կատարվում դատական կարգով
- 3.2.6. Ո՞ր դեպքերում ամուսինը չի կարող ամուսնալուծության վերաբերյալ հայց հարուցել
- 3.2.7. Ի՞նչ փաստաթղթեր է անհրաժեշտ ներկայացնել դատարան՝ ամուսնալուծության վերաբերյալ հայց հարուցելիս
- 3.2.8. Կարո՞ղ է, արդյոք, ամուսնալուծության վերաբերյալ հայցադիմումի հետ միասին ներկայացվել գույքի բաժանման, երեխաների խնամքի և ամուսնալուծության հետ կապված այլ հարցերի վերաբերյալ հայցեր
- 3.2.9. Ի՞նչ հիմքերով դատարանը կարող է բավարարել ամուսնալուծության վերաբերյալ հայցը
- 3.2.10. Նշանակու՞մ է, արդյոք, դատարանը ժամանակ՝ ամուսինների հաշտվելու համար
- 3.2.11. Ի՞նչ կարգով է գրանցվում ամուսնալուծությունը
- 3.2.12. Ի՞նչ կարգով է գրանցվում անչափահաս երեխաներ չունեցող ամուսինների փոխադարձ համաձայնությամբ կատարվող ամուսնալուծությունը
- 3.2.13. Ո՞ր պահից է դադարած համարվում դատական կարգով կատարված ամուսնալուծությունը

#### Ք 3. ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻ ԵՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՄՈՒՍԻՆՆԵՐԻ ԱՄՈՒՍՆԱԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ

- 3.3.1. Ի՞նչ կարգով է կատարվում ՀՀ քաղաքացի և օտարերկրյա քաղաքացի ամուսինների ամուսնալուծությունը ՀՀ տարածքում
- 3.3.2. Կարո՞ղ են, արդյոք, օտարերկրյա պետությունում բնակվող ՀՀ քաղաքացիներն ամուսնալուծվել Հայաստանի Հանրապետության դիվանագիտական կամ հյուպատոսական մարմիններում
- 3.3.3. Ո՞ր դեպքերում է օտարերկրյա պետությունում ՀՀ քաղաքացու մասնակցությամբ ամուսնալուծությունը վավերական ճանաչվում Հայաստանի Հանրապետությունում

#### Ք 4. ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ԱՆՎԱԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ

- 3.4.1. Ո՞ր դեպքերում ամուսնությունը կարող է անվավեր ճանաչվել
- 3.4.2. Ո՞վ կարող է ամուսնությունն անվավեր ճանաչելու պահանջով հայց հարուցել
- 3.4.3. Որո՞նք են ամուսնության անվավերության հետևանքները

### ԳԼՈՒԽ 4. ԾՆՈՂՆԵՐ ԵՎ ԶԱՎԱԿՆԵՐ

#### Ք 1. ԾՆՈՂԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 4.1.1. Ի՞նչ իրավունքներ և պարտականություններ ունեն ծնողներն իրենց երեխաների հանդեպ

- 4.1.2. Ծնողների անջատ բնակության դեպքում ո՞ր ծնողն է հանդիսանում երեխայի օրինական ներկայացուցիչը
- 4.1.3. Ի՞նչ վեճեր կարող են ծագել ծնողների միջև երեխաների դաստիարակության կապակցությամբ
- 4.1.4. Ի՞նչ կարգով է որոշվում երեխայի ապրելու վայրը՝ նրա ծնողների անջատ բնակության դեպքում
- 4.1.5. Երեխայի ապրելու վայրը որոշելիս դատարանը հաշվի առնու՞մ է, արդյոք, երեխայի համաձայնությունը
- 4.1.6. Եթե փոխվել է այն ծնողի ընտանեկան դրությունը, որի հետ ապրում է երեխան, կարո՞ղ է, արդյոք, մյուս ամուսինը դիմել դատարան՝ երեխայի ապրելու վայրը կրկին որոշելու պահանջով
- 4.1.7. Ո՞վ կարող է հայց հարուցել երեխայի ապրելու վայրը որոշելու կապակցությամբ
- 4.1.8. Ինչպե՞ս է ապահովվում անջատ ապրող ծնողի երեխայի հետ շփվելու իրավունքը
- 4.1.9. Երեխան, ունի՞, արդյոք, պապի և տատի հետ շփվելու իրավունք
- 4.1.10. Ե՞րբ են դադարում ծնողական իրավունքները

**Ք2. ԾՆՈՂԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻՑ ԶՐԿԵԼՈ**

- 4.2.1. Ի՞նչ նպատակ է հետապնդում ծնողական իրավունքներից զրկելը
- 4.2.2. Ո՞ր դեպքերում է հնարավոր ծնողական իրավունքներից զրկելը
- 4.2.3. Ի՞նչ ենք հասկանում ծնողական պարտականությունների կատարումից խուսափել ասելով
- 4.2.4. Ի՞նչ ենք հասկանում ծնողական իրավունքների չարաշահում ասելով
- 4.2.5. Ի՞նչ դրսևորումներ կարող է ունենալ երեխայի նկատմամբ դաժան վերաբերմունքը
- 4.2.6. Ի՞նչ կարգով է կատարվում ծնողական իրավունքներից զրկումը
- 4.2.7. Ի՞նչ իրավունքներից է զրկվում ծնողը ծնողական իրավունքներից զրկվելու դեպքում
- 4.2.8. Ի՞նչ հետևանքներ է ունենում ծնողական իրավունքներից զրկելն այն երեխայի համար, որի նկատմամբ ծնողական իրավունքներից զրկվել է ծնողը
- 4.2.9. Երեխան, ունի՞, արդյոք, ժառանգման իրավունք իր այն ծնողի գույքի նկատմամբ, ով զրկված է եղել ծնողական իրավունքներից
- 4.2.10. Հնարավո՞ր է, արդյոք, ծնողական իրավունքների վերականգնումը

**Ք3. ԾՆՈՂՆԵՐԻ ԵՎ ԵՐԵՄԱՆԵՐԻ ԱԼԻՄԵՆՏԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

- 4.3.1. Ի՞նչ նպատակ է հետապնդում ծնողների կողմից իրենց զավակների համար ալիմենտի վճարումը
- 4.3.2. Ի՞նչ չափով է բռնագանձվում անչափահաս երեխայի համար վճարվող ալիմենտը
- 4.3.3. Ինչպե՞ս է որոշվում անչափահաս երեխայի համար վճարվող ալիմենտի չափը, եթե ծնողն ունի ոչ կանոնավոր եկամուտ
- 4.3.4. ՈՒՆԵ՞մ, արդյոք, ալիմենտ ստանալու իրավունք չափահաս զավակները
- 4.3.5. Ի՞նչ չափով է բռնագանձվում չափահաս անաշխատունակ զավակի համար վճարվող ալիմենտը
- 4.3.6. Ո՞ր դեպքերում դատարանը կարող է նվազեցնել ալիմենտի չափը
- 4.3.7. Ո՞վ կարող է հայց հարուցել ալիմենտի չափը պակասեցնելու կամ դրա վճարից ազատելու պահանջով
- 4.3.8. Կարո՞ղ է, արդյոք, ավելացվել ալիմենտի չափը
- 4.3.9. Արդյոք, բռնագանձվու՞մ է ալիմենտ, այն անչափահաս երեխայի համար, ով տեղավորված է մանկական հիմնարկում
- 4.3.10. Ալիմենտ վճարող ծնողը պարտավո՞ր է, արդյոք, կատարել երեխայի խնամքի հետ կապված լրացուցիչ ծախսերը
- 4.3.11. Ո՞ր դեպքերում է դադարեցվում ծնողի կողմից զավակների համար ալիմենտի վճարումը
- 4.3.12. Կարո՞ղ են, արդյոք, ծնողներն ալիմենտ պահանջել իրենց չափահաս զավակներից
- 4.3.13. Ինչպե՞ս է որոշվում ծնողների ապրուստի համար բռնագանձվող միջոցների չափը
- 4.3.14. Ամուսիններից մեկն իրավունք ունի՞, արդյոք, ամուսինն ալիմենտ պահանջելու մյուս ամուսնուց
- 4.3.15. Ի՞նչ չափով է բռնագանձվում ամուսնու համար վճարվող ալիմենտը
- 4.3.16. Ի՞նչ հիմքով կարելի է ամուսնուն զրկել մյուս ամուսնուց ալիմենտ ստանալու իրավունքից կամ սահմանափակել այդ իրավունքը
- 4.3.17. Ի՞նչ կարգով է կատարվում ալիմենտի հոժարակամ վճարումը
- 4.3.18. Ի՞նչ եկամուտներից կարող է ալիմենտ բռնագանձվել

4.3.19. Որո՞նք են այն եկամուտները, որոնց վրա ալիմենտի բռնագանձումը տարածվել չի կարող

## **ԳԼՈՒԽ 5. ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՒԱՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ**

### **Ք 1. ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ**

- 5.1.1. Ո՞րն է երեխաների նկատմամբ խնամակալության և հոգաբարձության նպատակը
- 5.1.2. Ի՞նչ տարբերություն կա խնամակալության և հոգաբարձության միջև
- 5.1.3. Ո՞ր դեպքերում է սահմանվում խնամակալություն կամ հոգաբարձություն
- 5.1.4. Ո՞ր մարմինն է սահմանում հոգաբարձություն և խնամակալություն
- 5.1.5. Ի՞նչ կարգով են սահմանվում խնամակալություն և հոգաբարձություն
- 5.1.6. Ո՞վ կարող է նշանակվել խնամակալ կամ հոգաբարձու
- 5.1.7. Ի՞նչ հանգամանքներ են հաշվի առնվում խնամակալ կամ հոգաբարձու նշանակելիս
- 5.1.8. Հաշվի առնվում է, արդյոք, երեխայի համաձայնությունը խնամակալ կամ հոգաբարձու նշանակելիս

### **Ք 2. ԽՆԱՄԱԿԱԼԻ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԻ ԻՐԱԿՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

- 5.2.1. Ի՞նչ իրավունքներ ունեն խնամակալը և հոգաբարձուն
- 5.2.2. Ի՞նչ պարտականություններ ունեն խնամակալը և հոգաբարձուն

### **Ք 3. ԽՆԱՄԱԿԱԼԻ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՂԱՐՈՒՄԸ**

- 5.3.1. Ո՞ր դեպքերում է խնամակալը կամ հոգաբարձուն ազատվում իր պարտականությունների կատարումից
- 5.3.2. Ո՞ր դեպքերում է խնամակալը կամ հոգաբարձուն հեռացվում իր պարտականությունների կատարումից
- 5.3.3. Ո՞ր դեպքերում է դադարեցվում խնամակալությունը կամ հոգաբարձությունը

## **ԳԼՈՒԽ 6. ՈՐԴԵԳՐՈՒՄ**

### **Ք 1. ՈՐԴԵԳՐՄԱՆ ԿԱՐԳԸ**

- 6.1.1. Ի՞նչ իրավաբանական հետևանքներ է առաջացնում որդեգրումը
- 6.1.2. Ո՞ր երեխաներն են ենթակա որդեգրման
- 6.1.3. Ո՞վ կարող է երեխա որդեգրել
- 6.1.4. Ի՞նչ կարգով է կատարվում ՀՀ քաղաքացիների կողմից երեխայի որդեգրումը
- 6.1.5. Ի՞նչ փաստաթղթեր պետք է ներկայացնի ՀՀ քաղաքացին որպես որդեգրողի թեկնածու հաշվառելիս
- 6.1.6. Ի՞նչ փաստաթղթեր է անհրաժեշտ ներկայացնել երեխայի որդեգրման վերաբերյալ որոշում կայացնելու համար
- 6.1.7. Պարտադիր է, արդյոք, ծնողների համաձայնությունը երեխայի որդեգրման համար
- 6.1.8. Պահանջվում է, արդյոք, որդեգրվող երեխայի համաձայնությունը
- 6.1.9. Ի՞նչ կարգով է կատարվում որդեգրման գրանցումը

### **Ք 2. ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԵՐԵՒԱ ՈՐԴԵԳՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ**

- 6.2.1. Ի՞նչ կարգով է կատարվում օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի կողմից ՀՀ քաղաքացի հանդիսացող երեխայի որդեգրումը
- 6.2.2. Ի՞նչ փաստաթղթեր է պահանջվում ներկայացնել օտարերկրյա քաղաքացուն կամ քաղաքացիություն չունեցող անձին որպես որդեգրողի թեկնածու հաշվառելու համար

### **Ք 3. ՈՐԴԵԳՐՈՒՄՆ ԱՆԿԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ**

- 6.3.1. Ո՞ր դեպքերում որդեգրումը կարող է վերացվել
- 6.3.2. Ո՞ր դեպքերում որդեգրումը կարող է անվավեր ճանաչվել
- 6.3.3. Ի՞նչ հետևանքներ ունեն որդեգրումը վերացնելը և անվավեր ճանաչելը
- 6.3.4. Ո՞վ կարող է հայց հարուցել որդեգրումն անվավեր ճանաչելու կամ վերացնելու պահանջով
- 6.3.5. Կարո՞ղ է, արդյոք որդեգրումը վերացվել երեխայի չափահաս դառնալուց հետո

**Հավելված թիվ 1** - Հայցադիմում ամուսնալուծության վերաբերյալ

**Հավելված թիվ 2** - Հայցադիմում ամուսնալուծության և գույքի բաժանման վերաբերյալ

**Հավելված թիվ 3** - Հայցադիմում գույքի բաժանման վերաբերյալ

**Հավելված թիվ 4** - Հայցադիմում երեխայի համար ալիմենտի բռնագանձման մասին

**Հավելված թիվ 5** - Դիմում երեխայի համար ալիմենտի գանձման մասին

## Ն Ա Ն Ա Ք Ա Ն

Ընտանեկան հանրամատչելի իրավաբանական գրադարանի՝ «Ընտանեկան իրավունք» վերտառությամբ սույն թողարկման մեջ արծարծված են ամուսնաընտանեկան իրավահարաբերություններին առնչվող՝ առավել հաճախ հանդիպող և քաղաքացիներին հետաքրքրող հարցերը:

Ամուսնաընտանեկան իրավահարաբերություններն այն իրավահարաբերություններն են, որոնց յուրաքանչյուր քաղաքացի մասնակից է դառնում իր կյանքի ընթացքում: Քաղաքացիներն ամուսնանում են, ծնում զավակներ՝ նրանց նկատմամբ ստանձնելով որոշակի իրավունքներ և պարտականություններ, համատեղ ամուսնական կյանքում իրենց վաստակով ձեռք են բերում գույք, այդ գույքի կապակցությամբ կնքում գործարքներ: Ե՛վ ամուսնանալիս, և՛ ամուսնության ընթացքում, և՛ երեխաների դաստիարակության կապակցությամբ, և ամուսնալուծվելիս քաղաքացիներն ստիպված են լինում կարգավորել իրավական բնույթի մի շարք հարցեր:

Սույն թողարկումը նպատակ ունի աջակցելու քաղաքացիներին՝ առանց իրավաբանական մասնագիտական օգնության կողմնորոշվել ամուսնական կյանքում առավել հաճախ ծագող մի շարք իրավական հարցերում:

Ամուսնաընտանեկան իրավահարաբերությունների ոլորտին առնչվող իրավական վեճերի կարգավորումը, որպես կանոն, քիչ է մտահոգում այն ամուսիններին, ովքեր ապրում են համերաշխ, չունեն տարածայնություններ երեխաների դաստիարակության հարցում, փոխադարձ համաձայնությամբ տիրապետում, օգտագործում և տնօրինում են իրենց համատեղ սեփականությունը:

Առավել հաճախ ամուսինների միջև իրավական լուծում պահանջող հարցեր ծագում են ամուսնալուծվելիս: Ամուսնալուծության արդյունքում նախկին ամուսինները կանգնում են այնպիսի իրավական հարցերի և վեճերի լուծման առջև, ինչպիսիք են ամուսինների համատեղ սեփականության ներքո գտնվող գույքի բաժանումը, երեխաների դաստիարակության և խնամքի կազմակերպումը, երեխաների և/կամ ամուսնու համար ապրուստի միջոց ստանալը և այլն:

Ամուսնաընտանեկան իրավահարաբերությունների ոլորտին են վերաբերում նաև ծնողազուրկ երեխաների կամ որևէ պատճառով ծնողական խնամքից զրկված երեխաների խնամքի և դաստիարակության կազմակերպման հարցերը: Նման երեխաների խնամքի կազմակերպման ձևեր են խնամակալությունն ու հոգաբարձությունը, երեխաների որդեգրումը:

Որոշակի առանձնահատկություններ ունեն օտարերկրյա քաղաքացիների մասնակցությամբ ամուսնաընտանեկան իրավահարաբերությունները: Օրենսդրությունն առանձին կարգավորում է նախատեսում օտարերկրյա քաղաքացիների մասնակցությամբ ամուսնադրության, ամուսնալուծության, օտարերկրյա քաղաքացիների կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում երեխաներ որդեգրելու համար:

Սույն թողարկման մեջ տեղ են գտել ամուսնաընտանեկան իրավահարաբերությունների ոլորտին առնչվող վերոհիշյալ հարցերի պարզաբանումներն ու պատասխանները: Առանձին հարցերի պարզաբանումներ, ընթերցողին ավելի մատչելի դարձնելու համար, ներկայացված են կոնկրետ իրավիճակների և օրինակների միջոցով:

Հուսանք, որ ընտանեկան հանրամատչելի գրադարանի այս հերթական թողարկումը գործնական օգնություն կլինի մեր քաղաքացիների համար և կնպաստի նրանց իրավունքների պաշտպանությանը:

# ԳԼՈՒԽ 1. ԱՄՈՒՄՆՈՒԹՅՈՒՆ

## Ք1. ԱՄՈՒՄՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

### **1.1.1. Ի՞նչ կարգով է կատարվում ամուսնադրությունը**

Համաձայն ՀՀ ամուսնության և ընտանիքի օրենսգրքի (այսուհետև՝ ԱՐՕ)՝ Հայաստանի Հանրապետությունում ամուսնադրությունը կատարվում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում (այսուհետև՝ ՔԿԱԳ մարմիններ): Իրավաբանական տեսանկյունից ճանաչվում է միայն այն ամուսնադրությունը, ամուսինների իրավունքներ և պարտականություններ առաջանում են միայն այն ամուսնադրության հիման վրա, որը կատարվել է ՔԿԱԳ մարմիններում: Ամուսինների իրավունքներն ու պարտականություններն առաջանում են ամուսնությունը ՔԿԱԳ մարմիններում գրանցելու պահից:

Ամուսնական իրավահարաբերություններ, իրավական հետևանքներ չի կարող առաջացնել կրոնական ծիսակատարությամբ, տեղական սովորույթների համաձայն կատարված ամուսնադրությունը:

Ամուսինների իրավունքներ և պարտականություններ չեն առաջացնում, իրավաբանական տեսանկյունից ամուսնադրություն չեն համարվում փաստական ամուսնական հարաբերությունները (քաղաքացիական ամուսնություն):

### **1.1.2. Ի՞նչ կարգով է կատարվում ամուսնության գրանցումը ՔԿԱԳ մարմիններում**

Ամուսնությունը գրանցվում է ամուսնացողներից մեկի կամ նրանց ծնողների բնակության վայրի ՔԿԱԳ տարածքային բաժնում՝ ամուսնացողների դիմումի հիման վրա: Ամուսնության գրանցումը կատարվում է դիմումը տալու օրվանից հետո մեկամսյա ժամկետում: Այս ժամկետը հարգելի պատճառների առկայության դեպքում, ամուսնացողների համատեղ խնդրանքով կարող է կրճատվել կամ երկարաձգվել: Հարգելի պատճառներ են համարվում ծանր հիվանդությունը, համատեղ երեխաներ ունենալը, ամուսնացող կնոջ հղիությունը, բանակ զորակոչվելը, ժամկետային զինվորական ծառայության մեջ գտնվելը: Նշված հանգամանքների առկայության դեպքում ամուսնության գրանցումը կատարվում է եռօրյա ժամկետում:

Ամուսնությունը գրանցվում է միայն ամուսնացող անձանց ներկայությամբ: Ամուսնության գրանցումը լիազորագրով կամ ներկայացուցչի միջոցով չի թույլատրվում: Առանձին դեպքերում ամուսնության գրանցումը կարող է կատարվել հիվանդանոցում, տանը կամ այլ վայրերում՝ ամուսնանալ ցանկացող անձանց ներկայությամբ:

### **1.1.3. Ի՞նչ փաստաթղթեր է պահանջվում ներկայացնել ամուսնությունը գրանցելու համար**

Ամուսնությունը գրանցելու համար ՔԿԱԳ մարմիններին դիմելիս՝ ամուսնացողները պետք է ներկայացնեն անձը հաստատող փաստաթղթեր: Այն անձինք, ովքեր նախկինում ամուսնացած են եղել, պետք է ներկայացնեն ամուսնությունը դադարած լինելու փաստը հավաստող փաստաթղթեր, այն է՝ ամուսնալուծության վկայական, ամուսնու մահվան վկայականը, ամուսնուն մահացած ճանաչելու մասին դատարանի վճիռը և այլն:

Օտարերկրյա քաղաքացուց պահանջվում է ներկայացնել նաև նրա քաղաքացիության պետության համապատասխան մարմինների կամ դեսպանության կողմից տրված տեղեկանք՝ ամուսնության գրանցում չունենալու մասին:

### **1.1.4. Ի՞նչ փաստաթղթով է հաստատվում ամուսնության գրանցման փաստը**

Ամուսնության գրանցման փաստը հաստատող փաստաթուղթ է հանդիսանում ամուսնության վկայականը:

Բացի դրանից, ՀՀ քաղաքացիների անձը հաստատող փաստաթղթերում ՔԿԱԳ տարածքային բաժնիների կողմից կատարվում են ամուսնության գրանցման մասին համապատասխան նշումներ. նշվում են մյուս ամուսնու ազգանունը, անունը, հայրանունը,

ծննդյան ամիսը, ամսաթիվը, տարեթիվը, ամուսնության գրանցման համարը, տեղը և ժամանակը:

### **1.1.5. Ի՞նչ է ամուսնության գրանցման փաստի ճանաչումը**

Այն դեպքում, երբ ժամանակի ընթացքում ամուսնության գրանցումը հավաստող փաստաթուղթը՝ ամուսնության վկայականը, ոչնչանում կամ կորում է, և ՔԿԱԳ մարմիններում էլ չի պահպանվել տվյալ ամուսնության վերաբերյալ գրառումը, ծագում է ամուսնության գրանցման փաստը հաստատելու անհրաժեշտություն: Ամուսնության գրանցման փաստը կարող է հաստատվել միայն դատարանի կողմից:

Հաճախ շփոթում են ամուսնության փաստի հաստատում և ամուսնության գրանցման փաստի հաստատում հասկացությունները: Դատական պրակտիկայում հանդիպում են դեպքեր, երբ ելնելով փաստական ամուսնական հարաբերությունների մեջ գտնվելու հանգամանքից, քաղաքացիները դիմում են դատարան՝ ամուսնության փաստը հաստատելու պահանջով: Մինչդեռ դատարանն իրավասու չէ հաստատելու ամուսնության փաստը, քանի որ օրենքը ճանաչում է միայն ՔԿԱԳ մարմիններում գրանցված ամուսնությունը: Դատարանը կարող է հաստատել միայն ՔԿԱԳ մարմիններում գրանցված ամուսնության գրանցման փաստը, եթե ՔԿԱԳ մարմիններում չի պահպանվել ամուսնության մասին գրառումը և ամուսինների մոտ չի պահպանվել ամուսնության վկայականը:

## **Ք2. ԱՄՈՒՍՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

### **1.2.1. Որո՞նք են ամուսնադրության պայմանները**

Ամուսնադրության համար առաջին հերթին անհրաժեշտ է ամուսնացող անձանց կամավոր համաձայնությունը: Այս սկզբունքն ամրագրված է ամուսնաընտանեկան իրավահարաբերություններին առնչվող միջազգային իրավական փաստաթղթերում: Մարդու իրավունքների հռչակագրի 16 հոդվածում ամրագրված է. «Ամուսնադրությունը կարող է տեղի ունենալ միայն ամուսնացող երկու կողմի ազատ ու լիակատար համաձայնության դեպքում»: Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 12 հոդվածն ամրագրում է ամուսնության տարիքի հասած տղամարդկանց և կանանց ամուսնանալու և ընտանիք կազմելու իրավունքը:

Ամուսնադրության պայման է նաև օրենքով սահմանված՝ ամուսնական տարիքի հասած լինելը: ԱԸՕ 14 հոդվածը տղամարդկանց համար որպես ամուսնական տարիք է սահմանել 18 տարին, կանանց համար՝ 17 տարին:

### **1.2.2. Որո՞նք են ամուսնադրությունն արգելող հանգամանքները**

Ամուսնադրությունը չի կարող կատարվել հետևյալ հանգամանքներից որևէ մեկի առկայությամբ.

- երբ ամուսնացողներից մեկն արդեն այլ ամուսնության մեջ է գտնվում,
- երբ ամուսնացողները գտնվում են ուղիղ վերընթաց և վայրընթաց ազգակցության մեջ կամ հարազատ և համահայր կամ համամայր եղբայրներ և քույրեր են,
- երբ ամուսնացողներից մեկը դատական կարգով անգործունակ է ճանաչվել:

Ամուսնադրությունն արգելող այս հանգամանքների ցանկն սպառիչ է, և որևէ այլ պատճառ չի կարող խոչընդոտել ամուսնադրությանը:

**Ծանոթագրություն:** Անձը, որը հոգեկան խանգարման հետևանքով չի կարող հասկանալ իր գործողությունների նշանակությունը կամ կառավարել դրանք, կարող է դատական կարգով անգործունակ ճանաչվել:

### **1.2.3. Ի՞նչ ազդեցություն է ունենում ամուսնությունն անչափահաս գործունակության վրա**

Քաղաքացու գործունակությունը, այն է՝ իր գործողություններով քաղաքացիական իրավունքներ ձեռք բերելու և պարտականություններ ստանձնելու ունակությունը, լրիվ ծավալով ծագում է չափահաս, այսինքն՝ տասնութ տարեկան դառնալու պահից: Սակայն այն դեպքում, երբ կինն ամուսնանում է 17 տարեկան հասակում, նրա գործունակությունը լրիվ ծավալով ծագում է ամուսնության գրանցման պահից: Ամուսնության ուժով լրիվ ծավալով գործունակություն ձեռք բերած ամուսնացած կնոջ գործունակությունը պահպանվում է նաև այն դեպքում, երբ նա ամուսնալուծվում է մինչև 18 տարեկան դառնալը:

Եթե ամուսնության ուժով լրիվ ծավալով գործունակություն ձեռք բերած կնոջ ամուսնությունն անվավեր է ճանաչվում մինչև նրա 18 տարեկան դառնալը, ապա



ամուսնության անվավեր ճանաչումն ինքնին չի հանգեցնում անչափահաս կնոջ լրիվ ծավալով գործունակության կորստին: Դատարանն ամուսնությունն անվավեր ճանաչելիս կարող է վճիռ կայացնել անչափահաս կնոջ լրիվ ծավալով գործունակության կորստի մասին:

### Ք 3. Հայաստանի Հանրապետության տարածքում օտարերկրյա քաղաքացիների մասնակցությամբ ամուսնադրության առանձնահատկությունները

#### **1.3.1. Ի՞նչ ձևով և կարգով է կատարվում օտարերկրյա քաղաքացիների մասնակցությամբ ամուսնադրությունը Հայաստանի Հանրապետության տարածքում**

Հայաստանի Հանրապետության տարածքում ինչպես օտարերկրյա քաղաքացիների, այնպես էլ ՀՀ քաղաքացու և օտարերկրյա քաղաքացու միջև ամուսնադրության ձևը որոշվում է ՀՀ օրենսդրությամբ (ԱԸՕ, հոդված 218): Այսինքն՝ օտարերկրյա քաղաքացիների մասնակցությամբ ամուսնադրությունը կատարվում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում:

#### **1.3.2. Որո՞նք են ՀՀ տարածքում օտարերկրյա քաղաքացիների մասնակցությամբ ամուսնադրության պայմանները**

ՀՀ տարածքում ՀՀ քաղաքացու և օտարերկրյա քաղաքացու միջև ամուսնադրության պայմանները որոշվում են հետևյալ կերպ. ապագա ամուսիններից յուրաքանչյուրի համար ամուսնադրության պայմանները որոշվում են նրա քաղաքացիության պետության օրենսդրությամբ:

Այսպես, եթե ամուսնադրությունը կատարվում է ՀՀ քաղաքացու և Ֆրանսիայի քաղաքացու միջև, վերջինիս առնչությամբ պետք է պահպանվեն ֆրանսիական օրենսդրությամբ սահմանված՝ ամուսնադրության պայմանները (ամուսնական տարիքը, ամուսնադրության վերաբերյալ կողմերի համաձայնությունը), իսկ ՀՀ քաղաքացու առնչությամբ կիրառվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ամուսնադրության պայմանները:

Եթե Հայաստանի Հանրապետության տարածքում կատարվում է երկու տարբեր պետությունների քաղաքացիներ հանդիսացող օտարերկրյա քաղաքացիների ամուսնադրություն, ապա այս դեպքում ևս նրանցից յուրաքանչյուրի առնչությամբ կիրառվում են իր քաղաքացիության պետության օրենսդրությամբ սահմանված՝ ամուսնադրության պայմանները:

#### **1.3.3 Կարո՞ղ է, արդյոք, օտարերկրյա քաղաքացիների միջև ամուսնադրությունը կատարվել Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա պետությունների դեսպանություններում կամ հյուպատոսություններում**

Օտարերկրյա քաղաքացիների ամուսնադրությունը կարող է կատարվել Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա պետությունների դեսպանություններում կամ հյուպատոսություններում՝ հետևյալ պայմաններով.

- եթե տվյալ օտարերկրյա քաղաքացու քաղաքացիության պետությունում փոխադարձաբար վավերական են ճանաչվում Հայաստանի Հանրապետության դեսպանություններում կամ հյուպատոսություններում կատարված ամուսնադրությունները,
- եթե ամուսնադրության պահին ամուսնացող օտարերկրյա քաղաքացիները այն պետության քաղաքացիներն են, որը ներկայացնում են տվյալ դեսպանությունը կամ հյուպատոսությունը:

### Ք 4. Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս կատարված ամուսնադրությունների ճանաչումը

#### **1.4.1. Կարո՞ղ է, արդյոք, ՀՀ քաղաքացիների միջև ամուսնադրությունը կատարվել ՀՀ տարածքից դուրս**

ՀՀ ամուսնության և ընտանիքի օրենսգիրքը նախատեսում է ՀՀ քաղաքացիների ամուսնադրության կատարումը ՀՀ տարածքից դուրս: ՀՀ տարածքից դուրս ՀՀ

քաղաքացիների միջև ամուսնադրությունը կատարվում է ՀՀ հյուպատոսական հիմնարկներում (ԱԸՕ 219 հոդված):

#### **1.4.2. Ի՞նչ կարգով ու պայմաններով է կատարվում ՀՀ քաղաքացու և օտարերկրյա քաղաքացու միջև ամուսնադրությունը ՀՀ տարածքից դուրս**

ՀՀ տարածքից դուրս քաղաքացու ու օտարերկրյա քաղաքացու միջև ամուսնադրությունը կատարվում է այն պետության օրենսդրությամբ սահմանված ձևով, որի տարածքում կատարվում է ամուսնադրությունը: Օրինակ, եթե ՀՀ քաղաքացու և օտարերկրյա քաղաքացու միջև ամուսնադրությունը կատարվում է մի երկրում, որտեղ ամուսնադրության կրոնական ձևն առաջացնում է իրավաբանական հետևանքներ, նման ամուսնադրությունը ճանաչվում է նաև Հայաստանի Հանրապետությունում:

Ինչ վերաբերում է ամուսնադրության պայմաններին, ապա Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ՀՀ քաղաքացու ու օտարերկրյա քաղաքացու միջև կատարված ամուսնադրությունը Հայաստանի Հանրապետությունում վավերական է ճանաչվում միայն այն դեպքում, եթե պահպանվել են ՀՀ օրենսդրությամբ ամուսնադրության համար սահմանված պայմանները, այսինքն՝ ամուսնացող անձինք հասել են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ամուսնական տարիքի, առկա է նրանց փոխադարձ համաձայնությունը, չկան ՀՀ օրենսդրությամբ սահմանված ամուսնադրության արգելքներ: Օրինակ, եթե ամուսնության մեջ գտնվող ՀՀ քաղաքացու ամուսնադրությունն օտարերկրյա քաղաքացու հետ կատարվում է այնպիսի երկրում, որտեղ ընդունված է բազմակնությունը, նման ամուսնադրությունը չի ճանաչվում Հայաստանի Հանրապետությունում:

#### **1.4.3. ՀՀ-ում ճանաչվում են, արդյոք, ՀՀ տարածքից դուրս օտարերկրյա քաղաքացիների միջև կատարված ամուսնադրությունները**

ՀՀ տարածքից դուրս օտարերկրացիների միջև կատարված ամուսնադրությունը Հայաստանի Հանրապետությունում վավերական է ճանաչվում, եթե կատարվել է այն պետության օրենսդրության համաձայն, որի տարածքում ամուսնադրությունը կատարվել է (ԱԸՕ 219 հոդված):

## **ԳԼՈՒԽ 2. ԱՄՈՒՍԻՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

### [Ք1. ԱՄՈՒՍԻՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՈՉ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ](#)

#### **2.1.1. Ի՞նչ անձնական ոչ գույքային իրավունքներ ունեն ամուսինները**

ՀՀ ամուսնության և ընտանիքի օրենսգրքով նախատեսված՝ ամուսինների անձնական ոչ գույքային իրավունքների շրջանակն այնքան էլ ընդարձակ չէ, ինչը պայմանավորված է այդ իրավունքների առանձնահատկություններով. ամուսինների անձնական ոչ գույքային իրավունքները դժվար է ենթարկել օրենքի ներգործությանը, քանի որ այդ իրավունքների կատարման որակը մեծապես կախված է ամուսինների՝ ընտանիքի նկատմամբ պարտքի և պատասխանատվության գիտակցումից:

ՀՀ ամուսնության և ընտանիքի օրենսգրքը նախատեսում է ամուսինների հետևյալ անձնական ոչ գույքային իրավունքները.

- ամուսինների՝ զբաղմունք և արհեստ ընտրելու ազատությունը,
- ամուսինների՝ բնակության վայր ընտրելու ազատությունը,
- ամուսինների՝ ազգանվան ընտրության իրավունքը:

**Ծանոթագրություն:** Անձնական ոչ գույքային իրավունքներն ունեն հետևյալ առանձնահատկությունները.

- դրանք անբաժանելի են այդ իրավունքները կրողներից,
- անօտարելի են, այն է՝ չեն կարող փոխանցվել այլ անձանց,
- չեն կարող լինել գործարքի օբյեկտ,

- անձնական ոչ գույքային իրավունքները չունեն դրամական համարժեք:

### **2.1.2. Պարտավոր են, արդյոք, ամուսինները բնակվել համատեղ**

ՀՀ ամուսնության և ընտանիքի օրենսգիրքը (19 հոդված) նախատեսում է ամուսինների բնակության վայր ընտրելու ազատության սկզբունքը: Հետևաբար, ամուսիններն իրավունք ունեն բնակվել ինչպես համատեղ, այնպես էլ առանձին:

### **2.1.3. Ի՞նչ ազգանուն կարող են ընտրել ամուսիններն ամուսնանալիս**

Ամուսնանալիս ամուսինները, իրենց ցանկությամբ, ընտրում են կամ ամուսիններից մեկի ազգանունը՝ որպես իրենց ընդհանուր ազգանուն, կամ նրանցից յուրաքանչյուրը պահպանում է իր մինչամուսնական ազգանունը:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը չի նախատեսում ամուսնանալիս կրկնակի ազգանուն ընդունելու իրավունքը: Սակայն, եթե ամուսնացողներից մեկն արդեն իսկ կրում է կրկնակի ազգանուն, ապա ՔԿԱԳ տարածքային բաժինն իրավունք չունի մերժելու մյուս ամուսնուն ընտրելու այն՝ որպես ընդհանուր ազգանուն: Ամուսնացողների՝ ընդհանուր ազգանուն կրելու ցանկությունը պետք է արտահայտված լինի ամուսնության մասին դիմումում:

Եթե ամուսնացողներից մեկն ընդունել է մյուսի ազգանունը, ապա նրա անձնագրի առաջին էջում կատարվում է գրառում այն մասին, որ անձնագիրը ենթակա է փոխանակման մեկամսյա ժամկետում:

### **2.1.4. Եթե ամուսնանալիս ամուսիններից մեկն ընդունել է մյուս ամուսնու ազգանունը, ամուսնալուծության դեպքում պարտադիր է այդ ազգանվան փոփոխումը մինչամուսնական ազգանվամբ**

Ամուսնանալիս ամուսնու ազգանունն ընտրած ամուսինն ամուսնալուծության դեպքում իրավունք ունի ինչպես պահպանելու այդ ազգանունը, այնպես էլ փոխել իր ազգանունը և ընդունելու իր մինչամուսնական ազգանունը (ԱԸՕ, հոդված 41):

## **Ք2. ԱՄՈՒՍԻՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

### **2.2.1. Ո՞ր գույքն է հանդիսանում ամուսինների ընդհանուր համատեղ սեփականություն**

Այն գույքը, որն ամուսինները ձեռք են բերել ամուսնության ընթացքում, հանդիսանում է ամուսինների ընդհանուր համատեղ սեփականությունը:

**Ծանոթագրություն:** Երկու կամ ավելի անձանց սեփականության ներքո գտնվող գույքը, որի նկատմամբ սեփականության իրավունքում որոշված չէ սեփականատերերից յուրաքանչյուրի բաժինը, կոչվում է ընդհանուր համատեղ սեփականություն:

### **2.2.2. Նշանակություն ունի՞, արդյոք, թե ամուսիններից յուրաքանչյուրն ինչ մասնակցություն է ունեցել ընդհանուր համատեղ սեփականության ձևավորմանը**

Անկախ նրանից, թե ամուսիններից յուրաքանչյուրն ինչ մասնակցություն ու ներդրում է ունեցել ամուսինների համատեղ սեփականության ձևավորման գործում, նրանք երկուսն էլ այդ համատեղ սեփականության ներքո գտնվող գույքի նկատմամբ ունեն հավասար իրավունքներ: Ամուսնության ընթացքում մի ամուսնու վաստակի հաշվին ձեռք բերված գույքը համարվում է ամուսինների համատեղ սեփականությունը նույնիսկ այն դեպքում, երբ մյուս ամուսինը չի ունեցել ինքնուրույն վաստակ՝ տնային տնտեսությունը վարելու, երեխաներին խնամելու կամ որևէ այլ հարգելի պատճառով (հիվանդություն, երկարատև բացակայություն և այլն):

### **2.2.3. Կարո՞ղ է, արդյոք, փաստական ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող անձանց՝ համատեղ ձեռք բերած գույքը համարվել նրանց համատեղ սեփականությունը**

Համատեղ սեփականություն է հանդիսանում միայն այն ամուսինների համատեղ կյանքում ձեռք բերված գույքը, որոնց ամուսնությունն օրենքով սահմանված կարգով գրանցված է ՔԿԱԳ մարմիններում: Փաստական ամուսնական հարաբերությունների մեջ (քաղաքացիական

ամուսնություն) գտնվող անձանց՝ համատեղ ձեռք բերած գույքը չի համարվում նրանց համատեղ սեփականությունը, քանի որ ամուսինների իրավունքներ և պարտականություններ, այդ թվում՝ գույքային իրավունքներ առաջացնում է միայն ՔԿԱԳ մարմիններում գրանցված ամուսնությունը:

#### **2.2.4. Ո՞ր գույքը կարող է մտնել համատեղ սեփականության կազմի մեջ**

Ամուսինների համատեղ սեփականության կազմի մեջ կարող է մտնել ցանկացած գույք, որը հանված չէ շրջանառությունից:

Համատեղ սեփականության կազմի մեջ մտնում են ոչ միայն կոնկրետ իրերը, այլև գույքային իրավունքները:

Հարկ է նշել, որ համատեղ սեփականության կազմի մեջ մտնում են իրավունքները, բայց ոչ ամուսինների պարտականությունները և պարտքերը:

#### **2.2.5. Բնակելի տունը, որը ձևակերպված է ամուսիններից մեկի անունով, հանդիսանում է, արդյոք, ամուսինների համատեղ սեփականություն**

Որպես կանոն, բնակելի տան առուվաճառքը կատարվում է ամուսիններից մեկի անունից, և ամուսինների համատեղ կյանքում գնված բնակելի տունը ձևակերպվում է ամուսիններից մեկի անունով: Սակայն ամուսիններից մեկի անունով բնակելի տան ձևակերպումը չի նշանակում, որ վերջինս այդ տան միակ սեփականատերն է. մյուս ամուսինը հանդիսանում է այդ տան համասեփականատերը, և տունը ամուսինների համատեղ սեփականությունն է:

#### **2.2.6. Ո՞ր դեպքերում է ամուսնության ընթացքում սեփականաշնորհված բնակարանը հանդիսանում ամուսինների համատեղ սեփականությունը**

Հնարավոր են հետևյալ իրավիճակները.

**Հարց:** Ես և ամուսինս գրանցված ենք եղել տարբեր բնակարաններում: Ամուսինս սեփականաշնորհել է բնակարանը, որում գրանցված է ինքը: Սեփականաշնորհված բնակարանը հանդիսանում է, արդյոք, մեր համատեղ սեփականությունը:

**Պատասխան:** Նշված սեփականաշնորհված բնակարանը Ձեր ամուսնու սեփականությունն է, և Դուք այդ բնակարանի նկատմամբ սեփականության իրավունք չունեք:

**Հարց:** Բնակարանը, որում գրանցված ենք եղել ես և ամուսինս, սեփականաշնորհվել է ամուսնուս անվամբ՝ իմ համաձայնությամբ: Ունե՞մ, արդյոք, սեփականության իրավունք այդ բնակարանի նկատմամբ:

**Պատասխան:** Բնակարանը հանդիսանում է Ձեր և Ձեր ամուսնու համատեղ սեփականությունը, և Դուք բնակարանի նկատմամբ ունեք այն նույն իրավունքները, ինչ Ձեր ամուսինը:

**Հարց:** Բնակարանը, որում գրանցված ենք եղել ես, որդիս և որդուս կինը, մեր համաձայնությամբ սեփականաշնորհվել է ամուսնուս անվամբ: Որդիս և նրա կինն ունե՞ն, արդյոք, սեփականության իրավունք բնակարանի նկատմամբ:

**Պատասխան:** Եվ Դուք, և Ձեր որդին ու նրա կինը Ձեր ամուսնու հետ հավասար իրավունքներով հանդիսանում եք բնակարանի սեփականատեր:

#### **2.2.7. Կարո՞ղ է, արդյոք, ամուսինների ընդհանուր համատեղ սեփականությունն ամուսնության ընթացքում փոխակերպվել ընդհանուր բաժնային սեփականության**

Ընդհանուր բաժնային և համատեղ սեփականության միջև անհաղթահարելի անջրպետ գոյություն չունի: Ամուսինները կարող են, ցանկության դեպքում, իրենց համատեղ սեփականությունը փոխակերպել ընդհանուր բաժնային սեփականության, այսինքն՝ սեփականության իրավունքում որոշել իրենց բաժինները:

**Ծանոթագրություն:** Երկու կամ ավելի անձանց սեփականության ներքո գտնվող գույքը, որի նկատմամբ սեփականության իրավունքում համասեփականատերերի բաժինները որոշված են, հանդիսանում է ընդհանուր բաժնային սեփականություն:

Եթե ամուսինները ցանկանում են իրենց համատեղ սեփականությունը փոխակերպել բաժնային սեփականության, և նրանց միջև առկա է համաձայնություն սեփականության իրավունքում իրենց բաժինների վերաբերյալ, ապա նրանց համաձայնությունը ձևակերպվում

է գրավոր ձևով և ներկայացվում նոտարական վավերացման: Համատեղ սեփականության իրավունքում ամուսինների բաժինները համարվում են հավասար, սակայն փոխադարձ համաձայնությամբ ամուսինները կարող են սահմանել այլ բաժիններ:

Եթե ամուսինները ցանկանում են իրենց համատեղ սեփականությունը փոխակերպել բաժնային սեփականության, սակայն բաժինները որոշելու կապակցությամբ նրանց միջև համաձայնություն ձեռք չի բերվել, ապա բաժինները որոշելու կապակցությամբ ամուսինների վեճը լուծվում է դատական կարգով:

### Ք3. ԱՄՈՒՍԻՆՆԵՐԻՑ ՅՈՒՐԱՔԱՆՅՈՒՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

#### **2.3.1. Ո՞ր գույքն է հանդիսանում ամուսիններից յուրաքանչյուրի սեփականություն**

Ամուսինների համատեղ ընդհանուր սեփականության կազմի մեջ չի մտնում և ամուսիններից յուրաքանչյուրի սեփականությունն է համարվում հետևյալ գույքը.

- տվյալ ամուսնուն մինչև ամուսնությունը պատկանած գույքը (ծեռնարկությունը, բնակելի տարածությունը, ավտոմեքենան և այլն),
- գույքը, որն ամուսիններից յուրաքանչյուրն ամուսնության ընթացքում ստացել է նվիրատվության կամ ժառանգության կարգով,
- ամուսիններից յուրաքանչյուրի անհատական օգտագործման իրերը (հագուստեղեն, կոշիկեղեն և այլն), բացառությամբ թանկարժեք իրերի և պերճանքի առարկաների:

Անհատական օգտագործման իրերը համարվում են դրանք օգտագործող ամուսնու սեփականությունը՝ անկախ այն հանգամանքից, որ դրանք ձեռք են բերվել ամուսնության ընթացքում և ամուսինների ընդհանուր միջոցների հաշվին:

Այս կամ այն առարկան պերճանքի առարկա համարելու համար կոնկրետ չափանիշներ գոյություն չունեն: Որպես կանոն, պերճանքի առարկա են համարվում այն արժեքավոր իրերը, որոնք չի կարելի անհրաժեշտություն համարել ընտանիքի անդամների կենսական կարիքները հոգալու համար:

**Հարց:** Ամուսնության ընթացքում վաճառել ենք մինչև ամուսնությունը ինձ պատկանած բնակարանը և դրա գումարով գնել ենք ավտոմեքենա: Համարվո՞ւմ է, արդյոք, այդ ավտոմեքենան մեր համատեղ սեփականությունը և, արդյո՞ք՝ այդ ավտոմեքենայի սեփականատեր է նաև ամուսինս:

**Պատասխան:** Ավտոմեքենան ձեռք է բերվել մինչև ամուսնությունը Ձեզ պատկանած գույքի վաճառքից ստացված գումարով, հետևաբար, ավտոմեքենայի նկատմամբ սեփականության իրավունքը պատկանում է միայն Ձեզ, և ավտոմեքենան Ձեր և Ձեր ամուսնու համատեղ սեփականության կազմի մեջ չի մտնում:

#### **2.3.2. Կարո՞ղ է, արդյոք, ամուսիններից մեկի սեփականություն հանդիսացող գույքը ճանաչվել ամուսինների համատեղ սեփականություն**

Հաճախ ամուսնության ընթացքում ամուսինների ընդհանուր վաստակի հաշվին կատարվում է ամուսիններից մեկի սեփականությունը հանդիսացող գույքի (ծեռնարկություն, բնակարան, ավտոմեքենա) վերակառուցում, նորոգում, վերասարքավորում: Նման դեպքերում օրենքը նախատեսում է ամուսնու սեփականությունը հանդիսացող գույքի նկատմամբ համատեղ սեփականության իրավունք սահմանելու հնարավորություն:

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201 հոդվածի, ամուսիններից յուրաքանչյուրի գույքը կարող է ճանաչվել նրանց համատեղ սեփականություն, եթե պարզվի, որ ամուսնության ընթացքում ամուսինների ընդհանուր գույքի կամ մյուս ամուսնու անձնական գույքի հաշվին կատարվել են ներդրումներ, որոնք նշանակալի չափով ավելացրել են այդ գույքի արժեքը:

**Հարց:** Կնոջս հետ միասին բնակվում ենք կնոջս նրա ծնողներից ժառանգություն ստացած տանը: Ամուսնության ընթացքում տունը վերակառուցել են իմ միջոցներով, կառուցել են երկրորդ հարկ: Ունե՞մ, արդյոք, սեփականության իրավունք այդ տան նկատմամբ:

**Պատասխան:** Ձեր կատարած ներդրումներն այնպիսին են, որ նշանակալի չափով ավելացրել են տան արժեքը, հետևաբար, Դուք այդ տան նկատմամբ ձեռք եք բերել համասեփականատիրոջ իրավունքներ, և տունը կարող է ճանաչվել Ձեր և Ձեր կնոջ համատեղ սեփականություն:

#### **2.3.3. Ի՞նչ կարգով է ամուսիններից մեկի գույքը ճանաչվում ամուսինների համատեղ սեփականություն**

Ամուսիններից մեկի գույքը կարող է ամուսինների համատեղ սեփականություն ճանաչվել դատական կարգով՝ այն ամուսնու հայցի հիման վրա, որի սեփականության իրավունքը տվյալ գույքի նկատմամբ պետք է ճանաչվի: Յուրաքանչյուր կոնկրետ գործով դատարանը գնահատում է, թե արդյո՞ք ամուսնության ընթացքում ամուսինների ընդհանուր գույքի կամ հայց ներկայացրած ամուսնու միջոցների հաշվին կատարված ներդրումը նշանակալիորեն է ավելացրել տվյալ գույքի արժեքը:

#### 4. Ամուսինների համատեղ սեփականության ներքո գտնվող գույքի հետ կապված գործարքներ

##### **2.4.1. Ի՞նչ կարգով է օգտագործվում, տնօրինվում և տիրապետվում ամուսինների ընդհանուր համատեղ սեփականությունը**

Օրենքը համատեղ սեփականության օգտագործման, տիրապետման և տնօրինման կարգը սահմանում է՝ ելնելով նրանից, որ ամուսիններին այդ գույքը պատկանում է հավասար հիմունքներով և հավասար բաժիններով: Ամուսինները միասին տիրապետում և օգտագործում են համատեղ սեփականության ներքո գտնվող գույքը: Ամուսինների համատեղ սեփականությունն ամուսինները տնօրինում են (վաճառում, վարձակալության հանձնում, փոխանակում և այլն) փոխադարձ համաձայնությամբ՝ անկախ նրանից, թե որ ամուսինն է կնքում համատեղ սեփականության ներքո գտնվող գույքը տնօրինելու գործարքը:

##### **2.4.2. Կարո՞ղ է, արդյոք, ամուսիններից մեկը կնքել համատեղ սեփականության ներքո գտնվող գույքը տնօրինելու գործարք՝ առանց մյուս ամուսնու համաձայնության**

Ամուսինների համատեղ սեփականության ներքո գտնվող գույքի տնօրինման այն բոլոր գործարքները, որոնք պահանջում են հատուկ ձևակերպում՝ նոտարական գրանցում և/կամ այդ գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցում, ամուսիններից մեկը կարող է կնքել միայն մյուս ամուսնու համաձայնությամբ:

**Ծանոթագրություն:** Նոտարական վավերացման ենթակա են անշարժ գույքի (բնակելի տուն, հողամաս, ձեռնարկություն) հետ կապված բոլոր գործարքները (առուվաճառք, փոխանակում, նվիրատվություն, վարձակալություն), անշարժ գույքի գրավի պայմանագրերը, ինչպես նաև այն բոլոր գործարքները, որոնց նոտարական վավերացումը թեև օրենքով նախատեսված չէ, սակայն գործարքի կողմերը ցանկանում են տվյալ գործարքը վավերացնել նոտարական կարգով:

Ամուսինների համատեղ սեփականության ներքո գտնվող գույքի օտարման նշված գործարքներն ամուսիններից մեկի կողմից նոտարական վավերացման ներկայացվելիս անհրաժեշտ է նոտարական գրասենյակ ներկայացնել նաև մյուս ամուսնու գրավոր համաձայնությունը:

**Հարց:** Ամուսինս երկու տարի է, ինչ բացակայում է հանրապետությունից: Նրա գտնվելու վայրը հայտնի չէ: Ես ցանկանում եմ վաճառել մեր համատեղ սեփականության ներքո գտնվող բնակարանը: Կարո՞ղ եմ, արդյոք, առանց նրա համաձայնության վաճառել բնակարանը:

**Պատասխան:** Եթե Ձեր ամուսնու գտնվելու վայրը հայտնի չէ և Դուք ցանկանում եք նրա բացակայությամբ վաճառել Ձեր բնակարանը, կարող եք դիմել դատարան՝ Ձեր ամուսնուն անհայտ բացակայող ճանաչելու հայցով: Ձեր ամուսնուն անհայտ բացակայող ճանաչելու մասին դատարանի վճռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո Դուք կարող եք բնակարանը վաճառել առանց Ձեր ամուսնու համաձայնության:

**Հարց:** Ցանկանում եմ վաճառել իմ ու ամուսնուս համատեղ սեփականություն հանդիսացող առանձնատունը: Ամուսինս համաձայն չէ: Ինչպե՞ս կարող վաճառել առանձնատունը:

**Պատասխան:** Եթե Ձեր ամուսինը համաձայն չէ առանձնատան վաճառքին, ապա Դուք այն ամբողջությամբ վաճառել չեք կարող: Սակայն Դուք հնարավորություն ունեք վաճառելու ձեր տան նկատմամբ սեփականության իրավունքում Ձեր ունեցած բաժինը: Դրա համար անհրաժեշտ է նախևառաջ որոշել առանձնատան նկատմամբ սեփականության իրավունքում Ձեր և Ձեր ամուսնու բաժինները, այնուհետև առանձնացնել Ձեր բաժինը և հետո այն

վաճառել: Սակայն, հարկ է հիշել, որ Ձեր բաժինը վաճառելու դեպքում Ձեր ամուսինն ունի Ձեր բաժինը գնելու նախապատվության իրավունք: Դուք կարող եք Ձեր բաժինը երրորդ անձի վաճառել այն դեպքում, երբ Ձեր ամուսինը հրաժարվում է այն գնելուց:

#### **2.4.3. Եթե ամուսիններից մեկը գրավ է դնում ամուսինների համատեղ սեփականություն հանդիսացող բնակելի տունը, պահանջվում է, արդյոք, մյուս ամուսնու համաձայնությունը**

Ամուսիններից մեկը կարող է գրավ դնել ամուսինների համատեղ սեփականություն հանդիսացող բնակելի տունը միայն այն դեպքում, եթե այդ կապակցությամբ առկա է մյուս ամուսնու գրավոր համաձայնությունը:

#### **2.4.4. Ե՞րբ կարող է անվավեր ճանաչվել ամուսինների համատեղ սեփականություն հանդիսացող գույքի հետ կապված՝ ամուսիններից մեկի կնքած գործարքը**

Թեև ենթադրվում է, որ համատեղ սեփականության հետ կապված գործարքներ կնքելիս ամուսինները գործում են փոխադարձ համաձայնությամբ, այնուամենայնիվ, ոչ բոլոր դեպքերում է այդ համաձայնությունը առկա լինում: Ուստի օրենսդրությունը նախատեսում է նման իրավիճակներում ամուսինների գույքային իրավունքներն ու շահերը պաշտպանելու միջոցներ: Նման միջոց է հանդիսանում՝ առանց ամուսնու համաձայնության մյուս ամուսնու կնքած գործարքն անվավեր ճանաչելու հնարավորությունը:

Եթե ամուսիններից մեկը համատեղ սեփականության ներքո գտնվող գույքի տնօրինման գործարքը կնքել է առանց մյուս ամուսնու համաձայնության, ապա վերջինիս պահանջով այդ գործարքը կարող է դատական կարգով անվավեր ճանաչվել: Սակայն օրենքը, հաշվի առնելով նաև գործարքի մյուս կողմի շահերի պաշտպանության անհրաժեշտությունը, նախատեսում է գործարքն անվավեր ճանաչելու հետևյալ պայմանը. առանց ամուսնու համաձայնության՝ համատեղ սեփականության տնօրինման վերաբերյալ՝ մյուս ամուսնու կնքած գործարքը կարող է անվավեր ճանաչվել, եթե ապացուցվի, որ գործարքի մյուս կողմն իմացել կամ ակնհայտորեն պետք է իմանար այդ համաձայնության բացակայության մասին (<< քաղաքացիական օրենսգիրք, 198 հոդված):

### **Ք 5. ԱՄՈՒՍԻՆՆԵՐԻ՝ ՄԻՄՅԱՆՑ ԳՈՒՅՔԸ ԺԱՌԱՆԳԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ**

#### **2.5.1. Ի՞նչ իրավունքներ ունի ամուսինը մահացած ամուսնու գույքի նկատմամբ**

Ամուսիններից մեկը հանդիսանում է մյուս ամուսնու առաջին հերթին ժառանգը և ամուսնու մահից հետո, առաջին հերթի մյուս ժառանգների հետ մեկտեղ, իրավիրվում է ժառանգությունն ընդունելու:

**Ծանոթագրություն:** Օրենսդրությունը նախատեսում է ըստ օրենքի՝ չորս հերթի ժառանգներ: Յուրաքանչյուր հաջորդ հերթի ժառանգները ժառանգության իրավունք են ձեռք բերում, եթե ժառանգատուն չունի նախորդ հերթի ժառանգներ կամ այդ ժառանգները հրաժարվել են ժառանգությունն ընդունելուց: Առաջին հերթի ժառանգներ են ժառանգատուի ամուսինը, երեխաները և ծնողները: Նրանք ժառանգում են հավասար բաժիններով: Երկրորդ հերթի ժառանգները ժառանգության իրավունք ձեռք են բերում միայն այն ժամանակ, երբ ժառանգատուն չունի ամուսին, երեխաներ և ծնողներ:

#### **2.5.2. Ո՞ր դեպքերում ամուսինն իրավունք չունի ժառանգելու մահացած ամուսնու գույքը**

Ոչ ըստ օրենքի, ոչ ըստ կտակի ժառանգելու իրավունք չունեն այն անձինք, այդ թվում՝ նաև ժառանգատուի ամուսինը, ովքեր.

- դիտավորությամբ խոչընդոտել են ժառանգատուի վերջին կամքի իրականացմանը (կարող է դրսևորվել տվյալ անձի օգտին կտակ կազմելուն հարկադրելու միջոցով, այլ ժառանգի օգտին կազմված կտակը վերացնելու և այլ ձևերով),
- ժառանգատուին կամ հնարավոր ժառանգներից որևէ մեկին դիտավորյալ զրկել են կյանքից,
- ժառանգատուի կամ հնարավոր ժառանգի դեմ կատարել են մահափորձ:

#### **2.5.3. Ամուսնալուծված ամուսիններն ունե՞ն, արդյոք, միմյանց գույքի նկատմամբ ժառանգման իրավունք**

Ամուսինները, որոնց ամուսնալուծությունն օրենքով սահմանված կարգով գրանցված է քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում, միմյանց գույքը ժառանգելու իրավունք չունեն:

**Հարց:** Ես և ամուսինս երկար տարիներ բնակվել ենք առանձին, մեր միջև ընդհանրապես կապ չի եղել, սակայն մենք օրենքով սահմանված կարգով ամուսնալուծված չենք եղել: Ունե՞մ, արդյոք, ամուսնուս գույքի նկատմամբ ժառանգման իրավունք:

**Պատասխան:** Քանի որ Ձեր ամուսնալուծությունը օրենքով սահմանված կարգով տեղի չի ունեցել, Դուք պահպանել եք Ձեր ամուսնու գույքը ժառանգելու իրավունքը՝ անկախ առանձին բնակվելու փաստից:

#### **2.5.4 Փաստական ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող անձինք ունե՞մ, արդյոք, միմյանց գույքը ժառանգելու իրավունք**

Ամուսնու իրավունքով՝ որպես առաջին հերթի ժառանգ, ժառանգատուի գույքը կարող է ժառանգել միայն այն անձը, ով ժառանգության բացման ժամանակ ժառանգատուի հետ գտնվել է օրինական ամուսնության մեջ, այսինքն՝ նրանց ամուսնությունը գրանցված է եղել քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում: Հանգուցյալի հետ փաստական ամուսնական հարաբերությունների մեջ գտնված անձն իրավունք չունի ժառանգելու նրա գույքը՝ ամուսնու իրավունքով:

**Ծանոթագրություն:** ժառանգության բացման ժամանակը քաղաքացու մահվան օրն է, իսկ նրան մահացած ձանաչելու դեպքում՝ այդ մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրը, եթե վճռում այլ օր սահմանված չէ:

**Հարց:** Ամուսնուս հետ՝ առանց մեր ամուսնությունը գրանցելու, բնակվել ենք 20 տարի: Առաջին ամուսնությունից ամուսինս ունի երկու որդի: Ես 2-րդ կարգի հաշմանդամ եմ և գտնվել եմ ամուսնուս խնամքի ներքո: Կարո՞ղ եմ, արդյոք, ժառանգել ամուսնուս գույքը:

**Պատասխան:** Դուք չեք կարող Ձեր ամուսնու գույքը ժառանգել ամուսնու իրավունքով: Սակայն, Դուք կարող եք, Ձեր ամուսնու գույքի ժառանգմանը հրավիրված երկու որդիների հետ հավասար բաժիններով, ժառանգել Ձեր ամուսնու գույքը՝ այն փաստի հիման վրա, որ Դուք անաշխատունակ եք և առնվազն մեկ տարի գտնվել եք Ձեր ամուսնու խնամքի տակ:

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1220 հոդվածի՝ ըստ օրենքի ժառանգների թվին են պատկանում նաև այն անաշխատունակ անձինք, ովքեր մինչև ժառանգատուի մահն առնվազն մեկ տարի գտնվել են նրա խնամքի ներքո: Ժառանգատուի խնամքի տակ գտնվող անձինք համարվում են ժառանգատուից մշտապես և որպես գոյության հիմնական աղբյուր՝ օգնություն ստացող անձինք: Հարկ է նշել, որ ժառանգատուի խնամքի տակ գտնվելու համար պարտադիր չէ, որպեսզի ժառանգատուից պարբերաբար և որպես գոյության հիմնական աղբյուր՝ ստացվող նյութական օգնությունը լինի տվյալ անձի գոյության միակ միջոցը: Այդ նյութական միջոցը պետք է լինի տվյալ անաշխատունակ անձի գոյության «հիմնական», բայց ոչ «միակ» աղբյուրը: Նյութական օգնության առանձին ոչ պարբերական դեպքերը չեն կարող հիմք հանդիսանալ անձանց ժառանգատուի խնամքի տակ գտնվող անձ համարելու համար: Ժառանգատուից անջատ բնակվելու փաստը չի կարող ազդեցություն ունենալ անձի՝ ժառանգատուի խնամքի տակ գտնվելու փաստը հաստատելու համար:

Անձի՝ ժառանգատուի խնամքի տակ գտնվելու փաստի՝ դատական կարգով հաստատումը պարտադիր պահանջ չէ: Վեճի բացակայության դեպքում՝ նոտարը կարող է համապատասխան տեղեկանքի հիման վրա հաստատված համարել այդ փաստը:

#### **2.5.5. Ի՞նչ կարգով է ժառանգվում ամուսինների համատեղ սեփականության ներքո գտնվող բնակելի տունը**

Քանի որ ամուսինների համատեղ սեփականության մեջ նրանց բաժինները համարվում են հավասար (եթե ամուսինների միջև այլ համաձայնություն ձեռք չի բերվել), ապա ամուսիններից մեկի մահվան դեպքում նախևառաջ առանձնացվում է բնակելի տան՝ կենդանի մնացած ամուսնու բաժինը: Մահացած ամուսնու ժառանգները, այդ թվում նաև կինը, ժառանգում են միայն բնակելի տան այն բաժինը, որը պատկանել է հանգուցյալին: Կենդանի մնացած ամուսինը՝ ամուսնու իրավունքով, որպես առաջին հերթի ժառանգ, մյուս առաջին հերթի ժառանգների (երեխաներ և ծնողներ) հետ հավասար բաժիններով ժառանգություն է ստանում մահացած ամուսնու բաժնից:



**Հարց:** Ամուսինս մահացել է: Նրա առաջին հերթի ժառանգներն ենք ես և երկու որդիներս: Առանձնատունը, որը կառուցել ենք մեր ամուսնության ընթացքում, մեր համատեղ սեփականությունն է: Առանձնատան ո՞ր մասի նկատմամբ ես իրավունքներ ունեմ:

**Պատասխան:** Քանի որ առանձնատունը Ձեր և Ձեր ամուսնու համատեղ սեփականությունն է, ապա Դուք և Ձեր որդիները ժառանգել կարող եք Ձեր ամուսնու բաժինը, այն է՝ առանձնատան 1/2-ը. մյուս 1/2-ը Ձեզ է պատկանում սեփականության իրավունքով: Ձեր ամուսնու բաժնից հավասար բաժիններով Դուք և Ձեր որդիները պետք է ստանաք ժառանգություն՝ յուրաքանչյուրը այդ բաժնի 1/3-ը: Արդյունքում սեփականության իրավունքով Ձեզ կպատկանի առանձնատան 2/3 մասը, այն է՝  $1/2 + 1/2 \times 1/3 = 1/2 + 1/6 = 4/6 = 2/3$  մասը:

**Հարց:** Ամուսինս մեր համատեղ սեփականությունը հանդիսացող բնակելի տունն ամբողջությամբ կտակել է իր առաջին ամուսնությունից ծնված որդուն: Կարո՞ղ է, արդյոք, ամուսնուս որդին ժառանգել բնակելի տունն ամբողջությամբ:

**Պատասխան:** Թեև կտակը կազմվել է ամբողջ բնակելի տան վերաբերյալ, այնուամենայնիվ, ձեր ամուսինը բնակելի տունն ամբողջությամբ տնօրինելու իրավունք չունեք: Նա կարող էր կտակով տնօրինել միայն բնակելի տան նկատմամբ համատեղ սեփականության իրավունքում իր ունեցած բաժինը, այն է՝ տան կեսը (եթե ամուսինների համաձայնությամբ բաժինների այլ չափ որոշված չի եղել): Հետևաբար, կտակն այն մասով, որը վերաբերում է բնակելի տան համատեղ սեփականության իրավունքում ունեցած Ձեր բաժնին, պետք է անվավեր ճանաչվի, և Ձեր ամուսնու որդին կարող է ժառանգություն ստանալ միայն բնակելի տան՝ ձեր ամուսնու բաժինը:

## Ք6. ԱՄՈՒՍԻՆՆԵՐԻ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ

### **2.6.1. Հնարավո՞ր է, արդյոք, ամուսինների համատեղ սեփականության ներքո գտնվող գույքի բաժանումն ամուսնության ընթացքում**

Շատերն այն պատկերացումն ունեն, որ ամուսինների համատեղ սեփականության ներքո գտնվող գույքը կարող է բաժանվել կամ դրանից բաժին առանձնացվել ամուսնալուծության դեպքում: Սակայն կյանքի տարբեր իրավիճակներում ամուսինների համատեղ սեփականություն հանդիսացող գույքը բաժանելու անհրաժեշտություն կարող է առաջանալ նաև ամուսնության ընթացքում, ամուսինների համատեղ կյանքի ընթացքում: Ամուսնության ընթացքում ամուսինների համատեղ սեփականություն հանդիսացող գույքը բաժանելու պատճառ կարող է հանդիսանալ ամուսիններից մեկի՝ որևէ մեկին իր բաժինը նվիրելու կամ վաճառելու ցանկությունը, ամուսիններից մեկի պարտքերը համատեղ սեփականության մեջ ունեցած իր բաժնի հաշվին մարելու անհրաժեշտությունը և այլն:

### **2.6.2. Ի՞նչ կարգով է բաժանվում ամուսինների համատեղ սեփականության ներքո գտնվող գույքը, եթե այդ կապակցությամբ ամուսինների միջև վեճ չկա**

Եթե ամուսինների համատեղ սեփականություն հանդիսացող գույքը բաժանելու կապակցությամբ ամուսինների միջև չկան տարածայնություններ, և նրանց միջև առկա է փոխադարձ համաձայնություն և՛ համատեղ սեփականության մեջ նրանց ունեցած բաժինների, և՛ այդ բաժիններն առանձնացնելու եղանակի կապակցությամբ, ապա համատեղ սեփականության ներքո գտնվող գույքի բաժանումը կատարվում է առանց դատարանի միջամտության: Այս պարագայում ամուսիններից պահանջվում է դիմել նոտարական գրասենյակ: Բաժանումը կարող է կատարվել ամուսիններից յուրաքանչյուրին ընդհանուր սեփականության մեջ իր բաժնի նկատմամբ նոտարական գրասենյակի կողմից սեփականության վկայական տալու միջոցով կամ համատեղ սեփականություն հանդիսացող գույքը բաժանելու մասին ամուսինների միջև կնքված պայմանագիրը նոտարական գրասենյակի կողմից վավերացնելու միջոցով:

### **2.6.3. Ի՞նչ հետևանքներ է ունենում ամուսինների համատեղ սեփականության ներքո գտնվող գույքի բաժանումը**

Ամուսինների համատեղ սեփականության ներքո գտնվող գույքի բաժանման արդյունքում դադարում է համատեղ կյանքում ձեռք բերված գույքի նկատմամբ ամուսինների համատեղ սեփականության իրավունքը, ամուսիններից յուրաքանչյուրը դառնում է իր բաժնի սեփականատերը և դրանով ձեռք է բերում այդ բաժինը միանձնյա տնօրինելու իրավունք: Ամուսիններից յուրաքանչյուրը կորցնում է մյուսի բաժնի նկատմամբ իր իրավունքները:

**Հարց:** Ամուսնալուծված ենք և առանձնատունը բաժանվել է իմ ու ամուսնուս միջև: Կարո՞ղ եմ առանց նախկին ամուսնուս համաձայնության վաճառել իմ բաժինը:

**Պատասխան:** Դուք ձեր բաժնի միանձնյա սեփականատերն եք և ազատորեն կարող եք տնօրինել այն: Սակայն այն վաճառելիս պետք է հիշեք, որ Ձեր ամուսինն ունի ձեր բաժինը գնելու նախապատվության իրավունք:

#### **2.6.4. Կարո՞ղ է, արդյոք, ամուսինների համատեղ սեփականություն հանդիսացող գույքը բաժանվել ոչ հավասար բաժիններով**

Ամուսինների միջև ընդհանուր գույքը բաժանվում կամ նրանցից մեկի բաժինն առանձնացվում է ընդհանուր գույքի նկատմամբ իրավունքում ամուսիններից յուրաքանչյուրի բաժինը նախապես որոշելուց հետո (<< քաղաքացիական օրենսգիրք, հոդված 199):

Օրենքը նախատեսում է համատեղ սեփականության իրավունքում ամուսինների բաժինների հավասարության կանխավարկածը: Այսինքն՝ եթե ամուսիններն իրենց բաժինների այլ չափեր չեն սահմանում, նրանց բաժինները համարվում են հավասար: Սակայն ամուսինները կարող են փոխադարձ համաձայնությամբ (կամ դատական կարգով) իրենց համատեղ սեփականության ներքո գտնվող գույքը բաժանել ոչ հավասար բաժիններով:

#### **2.6.5. Ի՞նչ կարգով է բաժանվում ամուսինների համատեղ սեփականության ներքո գտնվող գույքը, եթե այդ կապակցությամբ ամուսինների միջև առկա է վեճ**

Որպես կանոն, ամուսինների ընդհանուր գույքը բաժանելու կապակցությամբ ամուսինների միջև փոխադարձ համաձայնությունը բացակայում է ամուսնալուծության դեպքում:

Ընդհանուր գույքը բաժանելու կապակցությամբ ամուսինների միջև վեճի առկայության պայմաններում գույքի բաժանումը կատարվում է կամ ընդհանուր գույքից ամուսիններից մեկի բաժինն առանձնացվում է դատական կարգով:

Դատարանը նախևառաջ պարզում է ամուսինների համատեղ սեփականության ներքո գտնվող գույքի կազմը, կատարում յուրաքանչյուր իրի գնահատում, դրանց արժեքներն ի մի բերելով՝ որոշում է բաժանման ենթակա ամբողջ գույքի ընդհանուր արժեքը: Որպես կանոն, ընդհանուր գույքի բաժանումը կատարվում է բնեղենով: Առանձին իրեր բաժանվում են այնպիսի հաշվարկով, որ վերջին հաշվով ամուսիններից յուրաքանչյուրին հատկացված իրերի արժեքների գումարը համարժեք լինի նրանց բաժիններին: Եթե ընդհանուր գույքի բաժանման արդյունքում հնարավոր չէ գույքի բաժանումը բնեղենով կատարել այնպես, որ ապահովվի այդ համարժեքությունը, և ամուսիններից մեկին հատկացված գույքի արժեքը գերազանցում է նրան հասանելիք բաժինը, այդ անհամաչափությունը վերացվում է մյուս ամուսնուն դրամական փոխհատուցում տրամադրելու միջոցով:

**Օրինակ:** Ամուսինների բաժինները համատեղ սեփականության մեջ հավասար են: Ամուսինների համատեղ սեփականության ներքո գտնվող գույքի կազմի մեջ մտնում է կահույքը և ավտոմեքենան: Ամուսիններից մեկին հատկացվել է կահույքը, մյուսին՝ ավտոմեքենան, որի արժեքը գերազանցում է կահույքի արժեքը: Ամուսնուն, ում հատկացվել է կահույքը, պետք է վճարվի դրամական փոխհատուցում՝ կահույքի և ավտոմեքենայի արժեքների տարբերության չափով:

#### **2.6.6. Ամուսինների համատեղ սեփականության ներքո գտնվող բնակելի տան բաժանման ի՞նչ տարբերակներ են հնարավոր**

Հնարավոր են ամուսինների համատեղ սեփականության ներքո գտնվող բնակելի տունն ամուսինների միջև բաժանելու կամ ամուսիններից մեկի բաժինն առանձնացնելու հետևյալ տարբերակները.

- բաժիններն առանձնացվում են բնեղենով (կարող է կատարվել ամուսինների փոխադարձ համաձայնությամբ. վեճի առկայության դեպքում՝ դատական կարգով),
- բնակելի տունը հանձնվում է ամուսիններից մեկին, իսկ մյուսին իր բաժնի դիմաց վճարվում է դրամական փոխհատուցում,
- բնակելի տունը վաճառվում է և վաճառքից գոյացած գումարը բաժանվում է ամուսինների միջև (այս տարբերակը ևս կարող է կիրառվել ինչպես ամուսինների փոխադարձ համաձայնությամբ, այնպես էլ դատական կարգով, եթե ամուսիններից մեկն առարկում է դրա դեմ),
- դատարանը սահմանում է բնակելի տնից օգտվելու կարգ:

### **2.6.7. Ինչպե՞ս է բաժանվում ամուսինների համատեղ սեփականության ներքո գտնվող բնակելի տունը՝ այդ կապակցությամբ վեճի առկայության դեպքում**

Ամուսինների համատեղ սեփականության ներքո գտնվող բնակելի տունն ամուսինների միջև բաժանելու կամ ամուսիններից մեկի բաժինն առանձնացնելու կապակցությամբ առկա վեճը լուծվում է դատական կարգով:

Դատարանը նախևառաջ որոշում է տվյալ բնակելի տան նկատմամբ սեփականության իրավունքում ամուսիններից յուրաքանչյուրի բաժինը, այսինքն՝ համատեղ սեփականությունը փոխակերպվում է բաժնային սեփականության: Եթե տվյալ բնակելի տան պայմաններն այնպիսին են, որ թույլ են տալիս ամուսինների բաժինների առանձնացումը կատարել բնեղենով, ապա բաժինների առանձնացումը կատարվում է բնեղենով:

Ամուսինների՝ բնակելի տան բաժինների առանձնացումը բնեղենով հնարավոր է միայն այն դեպքում, եթե ամուսիններից յուրաքանչյուրն իր բաժնի առանձնացման արդյունքում կարող է ունենալ առանձին մուտք, սանհանգույց, օժանդակ տարածք:

Հաճախ բնեղենով բաժանումն անհնարին է լինում նույնիսկ վերակառուցումներ կատարելու դեպքում: Բաժինները բնեղենով առանձնացնելու անհնարինության դեպքում դատարանը կարող է սահմանել բնակելի տնից օգտվելու կարգ:

**Ծանոթագրություն:** Բնակելի տունը բնեղենով համասեփականատերերի միջև բաժանելը նշանակում է նրանց հատկացնել տան ինքնուրույն, միմյանցից առանձնացված և մեկուսացված բաժիններ, որոնցից յուրաքանչյուրը պետք է ունենա առանձին մուտք, սանհանգույց և օժանդակ հարմարություններ ունենալու հնարավորություն:

### **2.6.8. Ո՞ր դեպքերում է բնակելի տունը թողնվում ամուսիններից մեկին, իսկ մյուսին տրվում դրամական փոխհատուցում**

Եթե հնարավոր չէ ամուսինների բաժիններն առանձնացնել բնեղենով և, միաժամանակ, տվյալ բնակելի տանն ամուսինների միաժամանակյա բնակությունն անհնարին է, ապա բնակելի տունը կարող է տրվել ամուսիններից մեկին, իսկ մյուսին իր բաժնի դիմաց վճարվել դրամական փոխհատուցում:

Որպես կանոն, այն հարցի լուծումը, թե որ ամուսնուն է թողնվում բնակելի տունը, որոշվում է ըստ նրա, թե որ ամուսնու անունով է ձևակերպված տունը, թե արդյոք փոխհատուցում ստացող ամուսինն ու՞նի այլ բնակության վայր, թե ամուսիններից ով առավել շատ ունի տվյալ բնակելի տան կարիքը:

Պետք է հիշել, որ իր բաժնի դիմաց դրամական փոխհատուցում ստանալը համասեփականատիրոջ ոչ թե պարտականությունն է, այլ իրավունքը: Հետևաբար, դրամական փոխհատուցումը տրվում է այն ստացող ամուսնու համաձայնության դեպքում: Սակայն դատարանը կարող է ամուսիններից մեկին հատկացնել բնակելի տունը և նրան թույլատրել դրամական փոխհատուցում վճարել մյուս ամուսնուն նույնիսկ վերջինիս համաձայնության բացակայության դեպքում, եթե այդ ամուսնու բաժինն աննշան է և նա բնակելի տան օգտագործման մեջ էական շահ չունի (ունի բնակության այլ վայր և այլն):

Իր բաժնի դիմաց փոխհատուցում ստացած ամուսինը կորցնում է իր բաժնի նկատմամբ սեփականության իրավունքը:

### **2.6.9. Ինչպե՞ս է որոշվում ամուսնու բաժնի դիմաց փոխհատուցման գումարի չափը**

Հաճախ ամուսնու բաժնի դիմաց դրամական փոխհատուցման գումարի չափը որոշվում է ամուսինների փոխադարձ համաձայնությամբ: Սակայն նման համաձայնության բացակայության դեպքում այդ գումարի չափը որոշվում է դատարանի կողմից, որը ելնում է բնակելի տան՝ բաժանման պահին գոյություն ունեցող շուկայական արժեքից: Բնակելի տան գնահատումը կատարվում է համապատասխան փորձագետի կողմից:

### **2.6.10. Ո՞ր դեպքում դատարանը կարող է ամուսիններին պարտավորեցնել վաճառել իրենց համատեղ սեփականություն հանդիսացող բնակելի տունը և նրանց միջև բաշխել տան վաճառքից ստացված գումարը՝ իրենց բաժիններին համապատասխան**

Ամուսինների համատեղ սեփականություն հանդիսացող բնակելի տունն ամուսինների միջև բաժանելու հնարավոր տարբերակներից է նաև այդ բնակելի տան վաճառքը և վաճառքից գոյացած գումարի բաշխումն ամուսինների միջև: Սակայն սա առավել հազվադեպ հանդիպող տարբերակներից է, և կիրառվում է միայն, եթե ամուսինների՝ բնակելի տան բաժինները բնեղենով առանձնացնելը, ինչպես նաև ամուսիններից մեկին իր բաժնի դիմաց փոխհատուցում

տրամադրելն ակնհայտորեն անհնարին է: Այս դեպքում դատարանն իրավունք ունի վճիռ կայացնելու բնակելի տունը հրապարակային սակարկություններով վաճառելու մասին՝ ստացված գումարը հետագայում բաշխելով ամուսինների միջև՝ իրենց բաժիններին համաչափ (<< քաղաքացիական օրենսգիրք, 197 հոդված):

**2.6.11. Ամուսնալուծության դեպքում ամուսիններից մեկի սեփականությունը հանդիսացող բնակարանում գրանցված մյուս ամուսինն ի՞նչ իրավունքներ ունի այդ բնակարանի նկատմամբ**

Տարածված իրավիճակ է, երբ ամուսիններից մեկը գրանցված է և բնակվում է մյուս ամուսնու սեփականությունը հանդիսացող բնակարանում: Ամուսնալուծության դեպքում ամուսիններին հետաքրքրում է, թե գրանցված ամուսինն ինչ իրավունքներ ունի այդ բնակարանի նկատմամբ:

Ամուսնալուծման արդյունքում իրավահարաբերությունների դադարման, ամուսնալուծության փաստը չի կարող հիմք հանդիսանալ ամուսնու բնակարանում գրանցված նախկին ամուսնու՝ տվյալ բնակելի տարածությունից օգտվելու իրավունքը դադարեցնելու համար: Բնակելի տարածությունից օգտվելու իրավունքը նախկին ամուսինը պահպանում է բնակարանի սեփականատիրոջ հետ ընտանեկան հարաբերությունների դադարման դեպքում ևս (<< բնակարանային օրենսգիրք, 120 հոդված): Հետևաբար, ամուսնալուծությունից հետո էլ ամուսիններն ունեն տվյալ բնակարանից օգտվելու հավասար իրավունքներ՝ անկախ նրանից, թե տվյալ բնակարանն ամուսիններից ում է պատկանում: Ամուսնալուծության դեպքում ամուսիններից մեկի սեփականությունը հանդիսացող բնակելի տարածության մյուս ամուսնու օգտագործման իրավունքը կարող է դադարեցվել դատական կարգով այդ ամուսնուն փոխհատուցում վճարելու միջոցով:

**Հարց:** Ես և կինս ամուսնալուծվել ենք: Ամուսնալուծությունից հետո կինս շարունակում է գրանցված մնալ իմ սեփականությունը հանդիսացող բնակարանում: Կարո՞ղ եմ, արդյոք, առանց նրա համաձայնության վաճառել բնակարանը:

**Պատասխան:** Ըստ էության, Ղուք կարող եք Ձեր բնակարանը վաճառել և այդ բնակարանի հետ կապված ցանկացած գործարք կատարել առանց Ձեր կնոջ համաձայնության: Սակայն դժվար կգտնվի մի գնորդ, որը կհամաձայնի գնել մի բնակարան, որի նկատմամբ մեկ այլ անձ դեռևս ունի օգտագործման իրավունք:

**Ք7. ԱՄՈՒՍԻՆՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՄՅԱՆՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ**

**2.7.1. Կարո՞ղ է, արդյոք, ամուսիններից մեկի անձնական պարտավորությունների դիմաց բռնագանձում տարածվել մյուս ամուսնու անձնական սեփականությունը հանդիսացող գույքի վրա**

Նախևառաջ պարզաբանենք, թե որոնք են ամուսնու անձնական պարտավորությունները: Ամուսնու անձնական պարտավորություններն են.

- այն բոլոր պարտավորությունները, որոնք նա ստանձնել է մինչև ամուսնությունը,
- ամուսնության ընթացքում տվյալ ամուսնու ստանձնած պարտավորությունները, որոնք նպատակ են ունեցել բավարարելու միայն իր շահերը,
- այն պարտավորությունները, որոնք կապված են տվյալ ամուսնու անձի հետ, այն է՝ ալիմենտ վճարելու պարտավորությունը, այլոց կյանքին, առողջությանը կամ գույքին պատճառված վնասը հատուցելու պարտավորությունը:

Ընդհանուր կանոնի համաձայն՝ ամուսիններից յուրաքանչյուրն իր անձնական պարտավորությունների համար պատասխանատու է իր գույքով: Մի ամուսնու պարտավորությունների դիմաց բռնագանձումը կարող է տարածվել միայն այդ ամուսնու գույքի վրա: Ամուսինը մյուս ամուսնու անձնական պարտավորությունների համար պատասխանատու չէ ոչ ամուսինների ընդհանուր սեփականության մեջ ունեցած իր բաժնով, ոչ էլ իր անձնական գույքով:

**Հարց:** Ամուսինս վարկ է վերցրել իր հոր տունը վերակառուցելու նպատակով: Կարո՞ղ է, արդյոք, նրա վարկային պարտավորությունների դիմաց բռնագանձում տարածվել ծնողներիցս ժառանգություն ստացած ավտոմեքենայի և իմ ու ամուսնուս համատեղ սեփականությունը հանդիսացող բնակարանի վրա:

**Պատասխան:** Ձեր ամուսնու վարկային պարտավորություններն անձնական պարտավորություններ են, որոնց համար նա պատասխանատու է միայն իր գույքով, այն է՝ ինչպես իր անձնական սեփականությունը հանդիսացող գույքով, այնպես էլ Ձեզ հետ ունեցած ընդհանուր սեփականության մեջ ունեցած իր բաժնով: Ոչ Ձեր ծնողներից ժառանգություն

ստացած ավտոմեքենայի, ոչ Ձեր ու Ձեր ամուսնու համատեղ սեփականությունը հանդիսացող բնակարանում Ձեր բաժնի վրա բռնագանձում տարածվել չի կարող:

### **2.7.2. Ո՞ր դեպքում է ամուսիններից մեկի անձնական պարտավորությունների դիմաց բռնագանձում տարածվում ամուսինների համատեղ սեփականության մեջ այդ ամուսնու ունեցած բաժնի վրա**

Այն դեպքում, երբ պարտապան ամուսնու անձնական սեփականություն հանդիսացող գույքն անբավարար է նրա պարտքերը մարելու համար, պարտատերն իրավունք ունի ներկայացնել պարտապան ամուսնու՝ համատեղ սեփականության մեջ ունեցած բաժինն առանձնացնելու պահանջ՝ դրա վրա բռնագանձում տարածելու համար:

Ամուսիններից մեկի պարտքերը մարելու համար համատեղ սեփականության մեջ նրա բաժնի վրա բռնագանձում տարածելիս՝ նախևառաջ անհրաժեշտ է որոշել համատեղ սեփականության մեջ պարտապան ամուսնուն պատկանող բաժնի չափը և առանձնացնել այն: Եթե այդ բաժինը հնարավոր չէ բնեղենով առանձնացնել կամ մյուս ամուսինն առարկում է դրա դեմ, պարտատերն իրավունք ունի այդ ամուսնուց պահանջել շուկայական գնով գնելու պարտապան ամուսնու բաժինը: Այդ բաժինը գնելուց մյուս ամուսնու հրաժարվելու դեպքում պարտատերն իրավունք ունի դիմելու դատարան՝ համատեղ սեփականության մեջ պարտապան ամուսնու բաժինը հրապարակային սակարկությունների միջոցով վաճառելու պահանջով (<< Քաղաքացիական օրենսգիրք, 200 հոդված):

### **2.7.3. Ի՞նչ պաշտպանության միջոցներ ունի այն ամուսինը, երբ նրա ամուսնու անձնական պարտավորությունների դիմաց բռնագանձում է տարածվել իր անձնական սեփականությունը հանդիսացող գույքի կամ ամուսինների համատեղ սեփականության մեջ իր բաժնի վրա**

Գործնականում քիչ չեն դեպքերը, երբ անօրինական կարգով մի ամուսնու անձնական պարտավորություններով բռնագանձում է տարածվում ամուսինների համատեղ սեփականություն հանդիսացող ամբողջ գույքի կամ մյուս ամուսնու անձնական սեփականության վրա: Հաճախակի են այնպիսի իրավիճակները, երբ որպես հայցի ապահովման միջոց՝ անօրինական կարգով արգելանք է դրվում մյուս ամուսնու գույքի վրա: Նման դեպքերում ամուսինը, որի գույքի վրա բռնագանձում է տարածվել կամ արգելանք է դրվել, կարող է դիմել դատարան՝ գույքն արգելանքից հանելու պահանջով:

**Ծանոթագրություն:** Գույքի վրա արգելանք դնելը ներառում է գույքագրումը, գույքի տնօրինելն արգելելը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ օգտագործման իրավունքը սահմանափակելը, այն առգրավելը և ի պահ հանձնելը: Գույքի վրա արգելանք դնելը սահմանափակում է այդ գույքի սեփականատիրոջ իրավունքը: Գույքը, որի վրա արգելանք է դրված, չի կարող վաճառվել, նվիրվել, փոխանակվել կամ տնօրինվել որևէ այլ կերպ:

### **2.7.4. Ո՞ր դեպքում է հնարավոր ամուսիններից մեկի ստանձնած պարտավորությունների դիմաց բռնագանձում տարածել ամուսինների ամբողջ ընդհանուր սեփականության վրա**

Ամուսիններից մեկի ստանձնած պարտավորությունների դիմաց բռնագանձումն ամուսինների ամբողջ ընդհանուր սեփականության վրա տարածվելը հնարավոր է.

- եթե այդ պարտավորությունները ամուսինների ընդհանուր պարտավորություններն են,
- ամուսիններից մեկի կատարած հանցագործությամբ պատճառված վնասը հատուցելիս՝ եթե քրեական գործի դատավճռով հաստատված է, որ այդ գույքը ձեռք է բերվել հանցավոր ձանապարհով հայթայթված միջոցների հաշվին:

### **2.7.5. Ո՞ր պարտավորություններն են համարվում ամուսինների ընդհանուր պարտավորություններ**

Ամուսինների ընդհանուր պարտավորություններն այն պարտավորություններն են, որոնք թեկուզ ստանձնել է ամուսիններից մեկը, սակայն այդ պարտավորություններով ստացված միջոցներն օգտագործվել են հոգուտ ամբողջ ընտանիքի շահերի: Այն փաստը, որ ամուսիններից մեկի ստանձնած պարտավորություններով ստացված բոլոր միջոցներն օգտագործվել են ընտանիքի կարիքների համար, հոգուտ ամբողջ ընտանիքի շահերի (ԱԸՕ, հոդված 23), հաստատվում է դատարանի կողմից:

Ամուսինների ընդհանուր պարտավորություններ են նաև այն պարտավորությունները, որոնք ծագում են ամուսինների կողմից երրորդ անձանց կյանքին, առողջությանը կամ գույքին համատեղ վնաս պատճառելու արդյունքում:

Ամուսինների ընդհանուր պարտավորություններով պատասխանատու են երկու ամուսիններն էլ, և բռնագանձումը տարածվում է նրանց ընդհանուր գույքի վրա:

### ԳԼՈՒԽ 3. ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

#### Ք 1. ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

##### **3.1.1. Որո՞նք են ամուսնության դադարման հիմքերը**

Ամուսնությունը դադարում է գոյություն ունենալուց ամուսիններից մեկի մահվան կամ ամուսիններից մեկին դատական կարգով մահացած ճանաչելու արդյունքում:

Ամուսինների կենդանության օրոք ամուսնության դադարման հիմքը ամուսնալուծությունն է:

**Ծանոթագրություն:** Քաղաքացին դատարանով կարող է մահացած ճանաչվել, եթե նրա բնակության վայրում երեք տարվա ընթացքում տեղեկություններ չկան նրա գտնվելու վայրի մասին:

##### **3.1.2. Ի՞նչ հետևանքներ կարող է ունենալ ամուսիններից մեկին մահացած ճանաչելու հետևանքով դադարած ամուսնության համար այդ ամուսնու հայտնվելը**

Դատական կարգով մահացած ճանաչված անձի հայտնվելու կամ նրա գտնվելու վայրը հայտնաբերելու դեպքում դատարանը վերացնում է տվյալ անձին մահացած ճանաչելու վերաբերյալ վճիռը: Ամուսնությունը կարող է վերականգնվել ամուսինների համատեղ դիմումի հիման վրա, եթե միայն մյուս ամուսինն այդ ընթացքում նորից չի ամուսնացել:

#### Ք 2. ԱՄՈՒՍՆԱԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

##### **3.2.1. Ի՞նչ կարգով է կատարվում ամուսնալուծությունը**

ՀՀ ամուսնության և ընտանիքի օրենսգրքի համաձայն՝ ամուսնալուծությունը կարող է կատարվել.

- ամուսինների համատեղ դիմումի հիման վրա՝ քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում,

- ամուսնու միակողմանի դիմումի հիման վրա՝ քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում,
- ամուսինների փոխադարձ համաձայնությամբ՝ դատական կարգով,
- ամուսիններից մեկի համաձայնության բացակայությամբ՝ դատական կարգով:

**3.2.2. Ո՞ր դեպքերում է ամուսնալուծությունը կատարվում քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում**

Ամուսինների համատեղ դիմումի հիման վրա՝ ամուսնալուծությունը կատարվում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում, եթե.

- ամուսինների միջև առկա է փոխադարձ համաձայնություն ամուսնալուծության կապակցությամբ, և
- ամուսնալուծվող ամուսինները չունեն անչափահաս երեխաներ:

**3.2.3 Ո՞ր դեպքերում կարող է քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում ամուսնալուծությունը կատարվել ամուսնու միակողմանի դիմումի հիման վրա**

Համաձայն ՀՀ ամուսնության և ընտանիքի օրենսգրքի 39 հոդվածի՝ ամուսնու միակողմանի դիմումի հիման վրա, անկախ անչափահաս երեխաների առկայությունից, ամուսնալուծությունը քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում հնարավոր է, երբ մյուս ամուսինը.

- ճանաչվել է անհայտ բացակայող,
- հոգեկան հիվանդության կամ տկարամտության հետևանքով դատական կարգով անգործունակ է ճանաչվել,
- հանցանք կատարելու համար դատապարտվել է ազատազրկման երեք տարուց ոչ պակաս ժամկետով,
- չկա ալիմենտի, գույքի բաժանության կամ երեխաների վերաբերյալ վեճ:

**Ծանոթագրություն:** Դատական կարգով անձը կարող է անհայտ բացակայող ճանաչվել, եթե նրա բնակության վայրում մեկ տարվա ընթացքում չկան տեղեկություններ նրա գտնվելու վայրի մասին:

**3.2.4. Կարո՞ղ է, արդյոք, ամուսնությունը վերականգնվել անհայտ բացակայող ճանաչված ամուսնու հայտնվելու դեպքում**

Դատական կարգով անհայտ բացակայող ճանաչված անձի հայտնվելու կամ նրա գտնվելու վայրը հայտնաբերելու դեպքում դատարանը վերացնում է տվյալ անձին անհայտ բացակայող ճանաչելու մասին վճիռը:

Եթե ամուսնու միակողմանի դիմումի հիման վրա ամուսնալուծությունը կատարվել է քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում, ապա ամուսնությունը վերականգնվում է ՔԿԱԳ մարմին՝ ամուսինների կողմից համատեղ դիմում ներկայացնելու միջոցով՝ եթե միայն մյուս ամուսինն այդ ընթացքում նորից չի ամուսնացել: Ամուսնությունը վերականգնելու համար ամուսիններից որևէ այլ գործողություն, բացի ՔԿԱԳ մարմին դիմում ներկայացնելուց, չի պահանջվում:

Եթե ամուսնալուծությունը կատարվել է դատական կարգով, ապա ամուսինները պետք է դիմեն դատարան՝ ամուսնալուծության վերաբերյալ վճիռը վերացնելու պահանջով, որից հետո ամուսիններն ամուսնությունը վերականգնելու վերաբերյալ համատեղ դիմում են ներկայացնում ՔԿԱԳ մարմին:

**3.2.5. Ո՞ր դեպքում է ամուսնալուծությունը կատարվում դատական կարգով**

Ամուսնալուծությունը կատարվում է դատական կարգով, եթե.

- ամուսիններն ունեն անչափահաս երեխաներ,
- ամուսիններից մեկը համաձայն չէ ամուսնալուծությանը. ընդ որում, անչափահաս երեխաների բացակայությունն այս դեպքում նշանակություն չունի:

**3.2.6. Ո՞ր դեպքերում ամուսինը չի կարող ամուսնալուծության վերաբերյալ հայց հարուցել**

Ամուսինը չի կարող առանց կնոջ համաձայնության ամուսնալուծության վերաբերյալ հայց հարուցել կնոջ հղիության ժամանակ և երեխայի ծննդից հետո մեկ տարվա ընթացքում (ՀՀ

ԱԸՕ, 31 հոդված): Ամուսնալուծության հայց հարուցելու այս արգելքը վերաբերում է միայն ամուսնուն. նշված ժամանակահատվածում կինն ազատ է հարուցելու ամուսնալուծության վերաբերյալ հայց:

### **3.2.7. Ի՞նչ փաստաթղթեր է անհրաժեշտ ներկայացնել դատարան՝ ամուսնալուծության վերաբերյալ հայց հարուցելիս**

Ամուսնալուծության պահանջով դատարան դիմելիս հայցվորից պահանջվում է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.

- հայցադիմում ամուսնալուծության վերաբերյալ (տես հավելված 1): Եթե երկու ամուսինն էլ համաձայն են ամուսնալուծությանը, ապա հայցադիմումը պետք է լինի հակիրճ. նույնիսկ կարելի է չնշել ամուսնալուծության պատճառները: Ամուսնալուծության ամուսիններից մեկի համաձայն չլինելու դեպքում, անհրաժեշտ է նկարագրել ամուսնալուծության պատճառները,
- ամուսնության վկայականը,
- երեխաների ծննդյան վկայականները,
- եթե ամուսնալուծությունը կատարվում է երկու ամուսինների համաձայնությամբ, ապա անհրաժեշտ է ներկայացնել նաև մյուս ամուսնու գրավոր համաձայնությունը:

### **3.2.8. Կարո՞ղ է, արդյոք, ամուսնալուծության վերաբերյալ հայցադիմումի հետ միասին ներկայացվել ամուսինների համատեղ սեփականության ներքո գտնվող գույքի բաժանման, երեխաների խնամքի և ամուսնալուծության հետ կապված այլ հարցերի վերաբերյալ հայցեր**

Ամուսնալուծության վերաբերյալ հայցի հետ միասին հայցվորը կարող է դատարան ներկայացնել ամուսնական իրավահարաբերությունների հետ կապված այլ հայցեր ևս: Որպես կանոն, ամուսնալուծության վերաբերյալ հայց հարուցելիս առաջանում է հետևյալ հայցերը ներկայացնելու անհրաժեշտություն.

- երեխաների համար ալիմենտի բռնագանձման վերաբերյալ հայց,
- ամուսնու համար ալիմենտի բռնագանձման վերաբերյալ հայց,
- ամուսինների գույքի բաժանման վերաբերյալ հայց,
- երեխայի դաստիարակությունն ամուսիններից մեկին հանձնելու վերաբերյալ հայց:

### **3.2.9. Ի՞նչ հիմքերով դատարանը կարող է բավարարել ամուսնալուծության վերաբերյալ հայցը**

ՀՀ ամուսնության և ընտանիքի օրենսգիրքը չի մատնանշում այն հիմքերը, որոնց առկայությամբ դատարանը պետք է կամ կարող է ամուսնալուծության մասին վճիռ կայացնել: Համաձայն ՀՀ ԱԸՕ 33 հոդվածի, ամուսնությունը լուծվում է, եթե դատարանը պարզում է, որ ամուսինների հետագա համատեղ կյանքը և ընտանիքի պահպանումն անհնարին են դարձել: Դատարանն ամուսնալուծությունը թույլատրում է միայն այն դեպքում, երբ դատաքննությամբ ապացուցվում է նման վիճակի առկայությունը:

### **3.2.10. Նշանակու՞մ է, արդյոք, դատարանը ժամանակ՝ ամուսինների հաշտվելու համար**

Դատարանն ամուսնալուծության վերաբերյալ գործ քննելիս՝ կարող է ձեռնարկել ամուսիններին հաշտեցնելու միջոցներ: Դատարանն իրավասու է հետաձգել գործի քննությունը և նշանակել ժամկետ՝ ամուսինների հաշտվելու համար: Այդ ժամկետը չի կարող գերազանցել վեց ամիսը:

Եթե դատարանի նշանակած ժամկետում ամուսինները հաշտվում են, ամուսնալուծության վերաբերյալ գործը կարճվում է:

### **3.2.11. Ի՞նչ կարգով է գրանցվում ամուսնալուծությունը**

Քաղաքացիական կացության ակտերի մարմիններում գրանցման է ենթակա ինչպես ՔԿԱԳ մարմիններում կատարված, այնպես էլ դատական կարգով կատարված ամուսնալուծությունը: Ամուսնալուծությունը գրանցվում է ամուսինների կամ նրանցից մեկի բնակության վայրի ՔԿԱԳ տարածքային բաժնում: Ամուսնալուծության վերաբերյալ գրանցում կատարելիս՝ ՔԿԱԳ տարածքային բաժնն ամուսնալուծված անձանց տալիս է ամուսնալուծության վկայական և ամուսնալուծության մասին նշումներ է կատարում նրանց անձնագրերում:



**Հարց:** Ամուսնալուծության մասին դատարանի վճիռը մտել է ուժի մեջ: Այժմ նախկին ամուսինս բացակայում է քաղաքից: Կարո՞ղ եմ, արդյոք, ամուսնալուծությունը ՔԿԱԳ մարմնում գրանցել առանց նրա ներկայության:

**Պատասխան:** Ձեր նախկին ամուսնու բացակայությունը խոչընդոտ չէ ամուսնալուծությունը ՔԿԱԳ մարմնում գրանցելու համար, քանի որ ՀՀ ԱԸՕ 203 հոդվածը թույլատրում է դատարանի վճռի հիման վրա ամուսնալուծությունը գրանցել նաև ամուսնալուծված ամուսիններից մեկի դիմումի համաձայն: Պարզապես, այս դեպքում, Ձեր ամուսինը չի կարող նոր ամուսնություն գրանցել, քանի դեռ չի ստացել ամուսնալուծության վկայական:

### **3.2.12. Ի՞նչ կարգով է գրանցվում անչափահաս երեխաներ չունեցող ամուսինների փոխադարձ համաձայնությամբ կատարվող ամուսնալուծությունը**

Ամուսնալուծության գրանցումը ՔԿԱԳ տարածքային բաժնի կողմից կատարվում է ամուսինների համատեղ դիմումի հիման վրա: Ամուսնալուծության գրանցումը կարող է կատարվել ամուսիններից մեկի բացակայությամբ, եթե այդ ամուսինը հարգելի պատճառով (ծանր հիվանդություն, զինվորական ծառայություն, երկարատև գործուղում, հեռավոր վայրում ապրելը և այլն) չի կարող ներկայանալ ՔԿԱԳ տարածքային բաժնի, և եթե նրա անունից ներկայացվել է ամուսնալուծվելու վերաբերյալ նրա համաձայնությունը հաստատող դիմում՝ իր բացակայությամբ ամուսնալուծությունը գրանցելու խնդրանքով:

Ամուսնալուծությունը գրանցվում և ամուսնալուծված ամուսիններին ամուսնալուծության վկայականներ տալը կատարվում է ՔԿԱԳ տարածքային բաժնի կողմից՝ ամուսնալուծության մասին դիմում տալու օրվանից 3 ամիս հետո:

### **3.2.13. Ո՞ր պահից է դադարած համարվում ամուսնությունը, եթե ամուսնալուծությունը կատարվում է դատական կարգով**

Ամուսնալուծությունն ինչպես քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում, այնպես էլ դատական կարգով կատարելու դեպքում ամուսնությունը դադարած է համարվում ամուսնալուծությունը ՔԿԱԳ տարածքային բաժնում գրանցելու պահից, այսինքն՝ ամուսնությունը դադարելու ամիսը, ամսաթիվը և տարեթիվը համարվում է ոչ թե ամուսնալուծության մասին դատարանի վճռի օրինական ուժի մեջ մտնելու օրը, այլ ամուսիններից թեկուզ մեկի կողմից ՔԿԱԳ տարածքային բաժնում ամուսնալուծությունը գրանցելու օրը:

**Հարց:** Մեր ամուսնալուծության վերաբերյալ դատարանի վճիռն ուժի մեջ է մտել մեկ տարի առաջ, սակայն մինչև այժմ ամուսնալուծությունը գրանցված չէ ՔԿԱԳ մարմնում և մեզ տրված չէ ամուսնալուծության վկայական: Կարող եմ մեր ամուսնությունը դադարած համարել:

**Պատասխան:** Չնայած նրան, որ ամուսնալուծության վերաբերյալ դատարանի վճիռն ուժի մեջ է մտել, Ձեր ամուսնությունը դադարած չի համարվում, քանի որ օրենքն ամուսնության դադարման պահ է համարում ամուսնալուծությունը ՔԿԱԳ մարմնում գրանցելու օրը: Եթե Դուք այժմ ամուսնալուծությունը գրանցեք ՔԿԱԳ մարմնում, ապա ամուսնությունը դադարած կհամարվի գրանցումը կատարելու պահից, և ոչ թե ամուսնալուծության վերաբերյալ դատարանի վճիռն ուժի մեջ մտնելու օրվանից:

## **[Ք3. ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻ ԵՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՍՈՒՄՆԵՆԵՐԻ ԱՍՈՒՄՆԱԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԱՈՒՆՁՆԱՀՍԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ](#)**

### **3.3.1. Ի՞նչ կարգով է կատարվում ՀՀ քաղաքացի և օտարերկրյա քաղաքացի ամուսինների ամուսնալուծությունը ՀՀ տարածքում**

Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիների և ՀՀ քաղաքացիների ամուսնալուծությունը կատարվում է ՀՀ օրենսդրության համաձայն (ԱԸՕ, հոդված 220):

ՀՀ տարածքում ՀՀ օրենսդրության հիման վրա է կատարվում նաև օտարերկրյա քաղաքացիների ամուսնալուծությունը: Կճանաչվի՞, արդյոք, ՀՀ տարածքում կատարված՝ օտարերկրյա քաղաքացիների ամուսնալուծությունն իրենց քաղաքացիության պետությունում, թե ոչ, որոշվում է ըստ այդ օտարերկրյա քաղաքացիների քաղաքացիության պետության օրենսդրության:

**3.3.2. Կարող են, արդյոք, օտարերկրյա պետությունում բնակվող ՀՀ քաղաքացիներն ամուսնալուծվել Հայաստանի Հանրապետության դիվանագիտական կամ հյուպատոսական մարմիններում**

Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս բնակվող ՀՀ քաղաքացիները կարող են ամուսնալուծության հարցով դիմել տվյալ օտարերկրյա պետությունում ՀՀ դիվանագիտական կամ հյուպատոսական մարմիններին: ՀՀ դիվանագիտական կամ հյուպատոսական մարմիններում ամուսնալուծությունը կատարել հնարավոր է միայն այն դեպքում, եթե տվյալ ամուսնությունը կարող է լուծվել քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում, այն է՝ երբ ամուսնալուծվող ամուսինները չունեն անչափահաս երեխաներ և երկու ամուսինն էլ համաձայն են ամուսնալուծությանը:

**3.3.3. Ո՞ր դեպքերում է օտարերկրյա պետությունում ՀՀ քաղաքացու մասնակցությամբ ամուսնալուծությունը վավերական ճանաչվում Հայաստանի Հանրապետությունում**

ՀՀ քաղաքացու և օտարերկրյա քաղաքացու ամուսնալուծությունը կարող է կատարվել նաև օտարերկրյա պետությունում այդ պետության օրենսդրության հիման վրա: Սակայն այդ ամուսնալուծությունը Հայաստանի Հանրապետությունում վավերական է ճանաչվում միայն այն դեպքում, եթե ամուսնալուծության պահին ամուսնալուծվող ամուսիններից թեկուզ մեկը բնակվել է ՀՀ տարածքից դուրս:

Օտարերկրյա պետության իրավասու մարմիններում կարող է կատարվել նաև ՀՀ քաղաքացիների ամուսնալուծությունը: Այս ամուսնալուծությունը Հայաստանի Հանրապետությունում վավերական է ճանաչվում միայն այն դեպքում, եթե ամուսնալուծության պահին երկու ամուսիններն էլ բնակվել են ՀՀ տարածքից դուրս (ՀՀ ԱԾՕ, հոդված 220):

**Ք4. ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ԱՆՎԱԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ**

**3.4.1. Ո՞ր դեպքերում ամուսնությունը կարող է անվավեր ճանաչվել**

Ամուսնությունը կարող է անվավեր ճանաչվել, եթե խախտվել են օրենսդրությամբ սահմանված ամուսնադրության պայմանները: ՀՀ ամուսնության և ընտանիքի օրենսգրքը նախատեսում է ամուսնությունն անվավեր ճանաչելու հետևյալ հիմքերը.

- ամուսնացող անձանց փոխադարձ կամավոր համաձայնության բացակայությունը: Ամուսնացող անձանց կամավոր համաձայնությունը բացակայում է, եթե անձն իր համաձայնությունն արտահայտել է հարկադրանքի, խաբեության, մոլորության ազդեցությամբ կամ ամուսնադրության պահին գտնվել է այնպիսի վիճակում, որ չի կարողացել կառավարել իր գործողությունները:

- ամուսնադրությունը կատարվել է ամուսնական տարիքի չհասած անձանց միջև,
- ամուսնադրությունը կատարվել է ամուսնադրությունն արգելող հանգամանքների առկայությամբ (ամուսնացողներից մեկն անգործունակ է, ամուսնացողների մեջ առկա է ազգակցական կապ, ամուսնացողներից մեկը գտնվում է ամուսնության մեջ),
- ամուսնադրությունը կատարվել է առանց ընտանիք կազմելու մտադրության (կեղծ ամուսնություն):

**3.4.2. Ո՞վ կարող է ամուսնությունն անվավեր ճանաչելու պահանջով հայց հարուցել**

Ամուսնու՝ ամուսնացած տարիքի հասած չլինելու հիմքով ամուսնությունն անվավեր ճանաչելու պահանջով դատարան կարող են դիմել ամուսնական տարիքի չհասած անձի ծնողները, օրինական ներկայացուցիչը՝ խնամակալը կամ հոգաբարձուն, ինչպես նաև ամուսնական տարիքի չհասած անձը՝ չափահաս դառնալուց հետո:

Եթե ամուսնությունն անվավեր ճանաչելու համար հիմք է հանդիսանում ամուսնությունն արգելող հանգամանքի առկայությունը, ապա ամուսնությունն անվավեր ճանաչելու վերաբերյալ հայց կարող են հարուցել ամուսինները, այն անձինք, որոնց իրավունքները խախտվել են այդ ամուսնությամբ, խնամակալության և հոգաբարձության մարմինները:

Հարկադրաբար կատարված ամուսնությունը կարող է անվավեր ճանաչվել հարկադրանքի ազդեցությամբ ամուսնացած կնոջ հայցի հիման վրա:

**3.4.3 Որո՞նք են ամուսնության անվավերության հետևանքները**

Անվավեր ճանաչված ամուսնությունն անվավեր է համարվում ամուսնադրության պահից, այն է՝ ամուսնությունը ՔԿԱԳ մարմնում գրանցելու պահից: Նման ամուսնությունը չեղյալ է հայտարարվում և համարվում է երբևէ գոյություն չունեցած: Ամուսնության անվավեր ճանաչումը չի ազդում այդ ամուսնությունից ծնված երեխաների իրավունքների վրա:

## ԳԼՈՒԽ 4. ԾՆՈՂՆԵՐ ԵՎ ԶԱՎԱԿՆԵՐ

### Ք1. ԾՆՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

#### **4.1.1. Ի՞նչ իրավունքներ և պարտականություններ ունեն ծնողներն իրենց երեխաների հանդեպ**

Ծնողներն իրավունք ունեն և միաժամանակ պարտավոր են դաստիարակել իրենց երեխաներին: Երեխային դաստիարակելու իրավունքը ծնողի անձնական անօտարելի իրավունքն է: Այդ իրավունքից կարելի է զրկել միայն օրենքով սահմանված կարգով:

Ծնողների մյուս իրավունքները և պարտականությունները, ըստ էության, բխում են երեխային դաստիարակելու՝ ծնողի իրավունքից: Այս իրավունքից է բխում երեխայի հետ շփվելու՝ ծնողի իրավունքը: Երեխայից անջատ ապրող ծնողն իրավունք ունի մասնակցելու երեխայի դաստիարակությանը և շփվելու նրա հետ:

Ծնողներն իրավունք ունեն ընտրելու այն ուսումնական հաստատությունը, որտեղ պետք է կրթություն ստանան իրենց երեխաները: Ծնողների այս իրավունքն ամրագրված է նաև Մարդու իրավունքների հռչակագրում, որի

26-րդ հոդվածի համաձայն՝ ծնողներն իրենց մանկահասակ երեխաների համար կրթատեսակ ընտրելու գործում ունեն առաջնայնության իրավունք: Ծնողների այս իրավունքն ամրագրված է նաև Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին 1966թ. դաշնագրում, որի 13-րդ հոդվածը դաշնագրի մասնակից պետություններին պարտավորեցնում է հարգել ծնողների և, համապատասխան դեպքերում, խնամակալների՝ իրենց երեխաների համար, պետական իշխանության կողմից ստեղծված դպրոցներից բացի, այլ դպրոցների ընտրության ազատությունը, որոնք համապատասխանում են պետության կողմից սահմանվող կամ հաստատվող նվազագույն ստանդարտներին:

Ծնողներն իրավունք ունեն նաև երեխային հետ պահանջել ցանկացած անձից, ով երեխային իր մոտ է պահում առանց օրինական հիմքի կամ դատարանի վճռի:

Ծնողների պարտականությունն է հոգ տանել երեխայի ֆիզիկական և հոգեկան զարգացման համար:

Բացի երեխային դաստիարակելու հետ կապված իրավունքներից ու պարտականություններից, օրենսդրությունը նախատեսում է նաև ծնողների՝ իրենց երեխաների իրավունքներն ու շահերը ներկայացնելու իրավունքն ու պարտականությունը:

#### **4.1.2. Ծնողների անջատ բնակության դեպքում ո՞ր ծնողն է հանդիսանում երեխայի օրինական ներկայացուցիչը**

Ամուսնալուծության կամ այլ պատճառներով ծնողների անջատ բնակության դեպքում ծագում է այն հարցը, թե որ ծնողը պետք է հանդես գա որպես երեխայի օրինական ներկայացուցիչ: Որպես կանոն, նման դեպքում երեխայի օրինական ներկայացուցիչն այն ծնողն է, ով անմիջականորեն դաստիարակում է երեխային:

#### **4.1.3. Ի՞նչ վեճեր կարող են ծագել ծնողների միջև երեխաների դաստիարակության կապակցությամբ**

Երեխաների դաստիարակության կապակցությամբ ծնողների միջև ծագող հնարավոր վեճերը (հիմնականում՝ ամուսնալուծության դեպքում) կարող են վերաբերել.

- ծնողների անջատ բնակության դեպքում՝ երեխայի ապրելու վայրը որոշելուն,
- անջատ ապրող ծնողի՝ երեխայի հետ շփվելու իրավունքի ապահովմանը,
- երեխայի հետ շփվելու՝ պապի և տատի իրավունքի ապահովմանը:

#### **4.1.4. Ի՞նչ կարգով է որոշվում երեխայի ապրելու վայրը՝ նրա ծնողների անջատ բնակության դեպքում**

Եթե անջատ բնակվող ծնողները փոխադարձ համաձայնությամբ չեն կարողանում որոշել, թե որ ծնողի մոտ պետք է ապրի երեխան, ապա երեխայի ապրելու վայրը որոշվում է դատական կարգով:

Երեխայի ապրելու վայրը որոշելու վերաբերյալ վեճը դատարանի կողմից կարող է քննության առնվել.

- մինչև ամուսնալուծությունը,
- ամուսնալուծության գործընթացում,
- ամուսնալուծությունից հետո:

Որպես կանոն, նման վեճ ծագում և լուծվում է ամուսնալուծության գործընթացում:

Դատարանը երեխայի ապրելու վայրը որոշելու վերաբերյալ վեճը լուծելիս՝ որոշում է, թե որ ծնողը պետք է հանդես գա որպես երեխայի անմիջական դաստիարակ, որ ծնողին պետք է նախապատվություն տրվի:

Դատարանն այս հարցերը լուծելիս՝ ելնում է միմիայն երեխայի շահերից և, մասնավորապես, հաշվի է առնում, որ.

- ծնողները երեխային դաստիարակելու հարցում ունեն հավասար իրավունքներ. ոչ մայրը, ոչ հայրը որևէ արտոնություն չունեն,
- հաշվի են առնվում նաև երեխայի կապվածությունը ծնողներից յուրաքանչյուրի հետ, երեխայի տարիքը, սեռը, ծնողների բարոյական և այլ անձնական որակները,
- դատարանի համար նշանակություն ունեցող հանգամանք է նաև ծնողների զբաղմունքի տեսակը, աշխատանքային ռեժիմը, նյութական և ընտանեկան դրությունը: Թեև ծնողի՝ լավ դաստիարակ լինելու հանգամանքը չի կարող պայմանավորվել նրա մասնագիտությամբ կամ կրթությամբ, սակայն նրա աշխատանքային ռեժիմը երեխայի դաստիարակության համար կարևոր գործոն է:

#### **4.1.5. Երեխայի ապրելու վայրը որոշելիս դատարանը հաշվի առնու՞մ է, արդյոք, երեխայի համաձայնությունը**

Դատարանը երեխայի ապրելու վայրը որոշելու վերաբերյալ վեճը լուծելիս, որպես կանոն, հաշվի է առնում նաև երեխայի կարծիքը: Օրենսդրությունը չի սահմանում երեխայի այն տարիքը, որի դեպքում դատարանի կողմից պարտադիր է երեխայի կարծիքը հաշվի առնելը: Սակայն, բնականաբար, դատարանի կողմից հաշվի է առնվում այն երեխայի կարծիքը, ով ի վիճակի է արտահայտելու իր կարծիքն ու ցանկությունը՝ թե իր համար որ ծնողի հետ բնակությունն է նախընտրելի: Ըստ օրենսդրության ընդհանուր տրամաբանության և դատական պրակտիկայի՝ հաշվի է առնվում 10 տարին լրացած երեխաների կարծիքը:

Սակայն ամեն դեպքում երեխայի կարծիքը դատարանի համար պարտադիր չի համարվում. այն դատարանի կողմից հաշվի է առնվում և գնահատվում մյուս ապացույցների հետ համակցության մեջ:

**4.1.6. Եթե փոխվել է այն ծնողի ընտանեկան դրությունը, որի հետ ապրում է երեխան, կարող է, արդյոք, մյուս ամուսինը դիմել դատարան՝ երեխայի ապրելու վայրը կրկին որոշելու պահանջով**

Ի տարբերություն այլ դատական վեճերի, երեխայի ապրելու վայրը որոշելու վերաբերյալ վեճը դատարանի կողմից կարող է քննության առարկա դառնալ կրկին: Դատարանը քննության է առնում երեխայի ապրելու վայրը որոշելու վերաբերյալ հարցը՝ անկախ նրանից, թե նախկինում նույն պահանջով հայց քննության առնվել է, թե ոչ:

Ամուսինների կյանքում ժամանակի ընթացքում կարող են կատարվել այնպիսի հանգամանքների փոփոխություններ, որոնք հաշվի են առնվել դատարանի կողմից երեխայի ապրելու վայրը որոշելու վերաբերյալ վեճը լուծելիս (ընտանեկան դրության, բնակարանային պայմանների, ծնողի աշխատանքային ռեժիմի փոփոխություն և այլն): Նման փոփոխությունները կարող են հիմք հանդիսանալ երեխայի ապրելու վայրը որոշելու վերաբերյալ դատարանի նախկին վճռից սկզբունքորեն տարբերվող այլ վճիռ կայացնելու և երեխայի դաստիարակությունը մյուս ծնողին հանձնելու համար:

**4.1.7. Ո՞վ կարող է հայց հարուցել երեխայի ապրելու վայրը որոշելու կապակցությամբ**

Որպես կանոն, երեխայի ապրելու վայրը որոշելու պահանջով հայց հարուցում է այն ծնողը, ով ցանկանում է, որ երեխան ապրի իր հետ: Սակայն բացառված չէ այն իրավիճակը, երբ երեխան ապրում է մի ծնողի հետ, և այդ ծնողը ցանկություն ունի երեխային հանձնել մյուս ծնողին, որն առարկում է դրա դեմ:

**4.1.8. Ինչպե՞ս է ապահովվում անջատ ապրող ծնողի՝ երեխայի հետ շփվելու իրավունքը**

Ծնողներից յուրաքանչյուրը երեխային անձամբ դաստիարակելու իրավունք ունի նաև ամուսնալուծությունից հետո՝ անկախ երեխայից անջատ ապրելու հանգամանքից: Սակայն անջատ ապրող ծնողը, բնականաբար, ի վիճակի չէ լիարժեք կերպով մասնակցել երեխայի դաստիարակությանը, հատկապես, երբ մյուս ամուսինը խոչընդոտում է երեխայի և անջատ ապրող ծնողի շփմանը:

Անջատ ապրող ծնողի՝ երեխայի հետ շփվելու իրավունքի ապահովմանն է ուղղված ՀՀ ամուսնության և ընտանիքի օրենսգրքի 65 հոդվածը, որը պարտավորեցնում է ծնողին, ում հետ երեխան ապրում է, չխոչընդոտել մյուս ծնողին՝ մասնակցելու երեխայի դաստիարակությանը և շփվելու երեխայի հետ: Բացառություն են կազմում այն իրավիճակները, երբ անջատ ապրող ծնողի հետ շփումը կարող է խանգարել երեխայի բնականոն դաստիարակությանը և նրա վրա վնասակար ազդեցություն թողնել:

Անջատ ապրող ծնողի՝ երեխայի հետ շփվելու կապակցությամբ ծնողների միջև տարաձայնությունները կարող են լուծվել դատական կարգով:

**Հարց:** Դատարանը վճռել է երեխային թողնել ապրելու մոր հետ: Սակայն կինս ամեն կերպ խոչընդոտում է իմ և երեխայի տեսակցություններին: Ի՞նչ միջոցներ կարող եմ ձեռնարկել:

**Պատասխան:** Դուք կարող եք դիմել խնամակալության և հոգաբարձության մարմին՝ դիմումում նշելով, որ երեխայի մայրը ձեզ հնարավորություն չի տալիս տեսակցելու երեխային: Խնամակալության և հոգաբարձության մարմինը պարտավոր է կանչել ձեր կնոջը և բացատրություններ ստանալ նրա նման վարքագծի վերաբերյալ: Ձեր կնոջ վարքագիծն օրինաչափ կհամարվի միայն այն դեպքում, եթե կարողանա ապացույցներ ներկայացնել առ այն, որ Ձեզ հետ երեխայի շփումը խանգարում է երեխայի բնականոն դաստիարակությանը և կարող է նրա վրա վնասակար ազդեցություն գործել: Եթե ներկայացված ապացույցները լինեն հիմնավոր, խնամակալության և հոգաբարձության մարմինն իրավունք ունի Ձեզ որոշակի ժամանակով զրկել երեխայի հետ շփվելու իրավունքից: Նման ապացույցներ չներկայացնելու դեպքում՝ Ձեր կնոջ վարքագիծը համարվում է ոչ օրինաչափ, և խնամակալության ու հոգաբարձության մարմինը կարող է Ձեր կնոջից պահանջել դադարեցնելու Ձեր երեխայի հետ շփվելու իրավունքի խախտումը և ենթարկվել իր համապատասխան ցուցումներին:

Եթե Ձեր կինը շարունակի խոչընդոտել երեխայի հետ ձեր շփմանը, ապա կարող եք դիմել դատարան: Դատարանը կարող է ոչ միայն պարտավորեցնել վերացնելու երեխայի հետ շփվելու իրավունքի խախտումը, այլ նաև կարող է սահմանել երեխայի հետ շփվելու կարգ:

#### **4.1.9. Պապը և տատն ունե՞ն, արդյոք, երեխայի հետ շփվելու իրավունք**

Երեխային անհրաժեշտ են շփումները ոչ միայն հոր և մոր, այլ նաև ընտանիքի այլ անդամների հետ, որոնք բնակվում են երեխայից անջատ: Նրանց հետ շփումը և հաղորդակցությունը շատ հաճախ օգտակար և անհրաժեշտ պայման են երեխայի անձի ձևավորման համար: Ուստի ՀՀ ամուսնության և ընտանիքի օրենսգիրքը երեխայի հետ շփվելու իրավունքը վերապահել է ոչ միայն երեխայի հորն ու մորը, այլ նաև նրա պապին ու տատին: Այն դեպքում, երբ ծնողները հրաժարվում են պապին կամ տատին հնարավորություն տալ շփվելու թոռների հետ, խնամակալության և հոգաբարձության մարմինները կարող են ծնողներին պարտավորեցնել պապին և տատին տալ թոռների հետ շփվելու հնարավորություն:

#### **4.1.10. Ե՞րբ են դադարում ծնողական իրավունքները**

Ծնողական իրավունքները ծագում են երեխայի ծննդյան պահից և դադարում երեխայի՝ չափահաս (18 տարեկան) դառնալով: Սակայն ծնողական իրավունքները կարող են դադարել նաև մինչև երեխայի չափահաս դառնալը, եթե.

- տասնվեց տարին լրացած անչափահասը, ով աշխատում է աշխատանքային պայմանագրով կամ զբաղվում է ձեռնարկատիրական գործունեությամբ, օրենքով սահմանված կարգով ճանաչվում է լրիվ գործունակ,
- անչափահաս զավակն ամուսնանում է մինչև 18 տարեկան դառնալը:

**Ծանոթագրություն:** Տասնվեց տարին լրացած անչափահասը, ով աշխատում է աշխատանքային պայմանագրով կամ ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությամբ զբաղվում է ձեռնարկատիրական գործունեությամբ, կարող է լրիվ գործունակ ճանաչվել (էմանսիպացիա) խնամակալության ու հոգաբարձության մարմնի որոշման հիման վրա: Եթե անչափահասի ծնողները, որդեգրողները կամ հոգաբարձուն համաձայն չեն նրան լրիվ գործունակ ճանաչելուն, ապա լրիվ գործունակ ճանաչելը կատարվում է դատական կարգով:

### **Ք 2. ԾՆՈՂԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻՑ ԶՐԿԵԼԸ**

#### **4.2.1. Ի՞նչ նպատակ է հետապնդում ծնողական իրավունքներից զրկելը**

Ծնողական իրավունքները պետության կողմից քաղաքացիներին տրվում են, որպեսզի ծնողները պատշաճ կերպով խնամեն և դաստիարակեն իրենց երեխաներին: Ծնողներին օժտելով ծնողական իրավունքներով՝ պետությունը միաժամանակ հոգ է տանում, որպեսզի ծնողները չչարաշահեն իրենց այդ իրավունքները:

Ծնողական իրավունքները չարաշահելու և ոչ ի շահ երեխայի օգտագործելու դեմ կիրառվող միջոց է ծնողական իրավունքներից զրկելը: Այս միջոցը կիրառվում է այն դեպքերում, երբ անհրաժեշտ է երեխաներին պաշտպանել իրենց իսկ ծնողներից:

Ծնողական իրավունքներից զրկելը կատարվում է յուրաքանչյուր երեխայի առնչությամբ: Նույն անձը կարող է ծնողական իրավունքներից զրկվել մի երեխայի առնչությամբ՝ պահպանելով, սակայն, ծնողական իրավունքները մյուս երեխայի նկատմամբ:

Ծնողական իրավունքներից զրկելը հանդիսանում է բացառիկ միջոց: Այդ միջոցի բացառիկությունն արտահայտվում է նրանում, որ այն կիրառվում է միայն դատական կարգով և օրենքով սպառիչ կերպով սահմանված հիմքերի հիման վրա:

#### **4.2.2. Ո՞ր դեպքերում է հնարավոր ծնողական իրավունքներից զրկելը**

Ծնողական իրավունքներից զրկելու հիմքերն սպառիչ կերպով սահմանված են ՀՀ ամուսնության և ընտանիքի օրենսգրքի 68 հոդվածով: Այդ հիմքերն են.

- ծնողների՝ երեխային դաստիարակելու իրենց պարտականությունների կատարումից խուսափելը,
- ծնողական իրավունքների չարաշահումը,
- երեխաների հետ դաժանաբար վարվելը,
- իրենց բարոյագուրկ, հակահասարակական վարքագծով երեխայի վրա վնասակար ազդեցություն գործելը,
- ծնողի խրոնիկական ալկոհոլիկ կամ թմրադեղամոլ լինելը:

Թվարկված պատճառներից բացի որևէ այլ պատճառ չի կարող հիմք հանդիսանալ ծնողական իրավունքներից զրկելու համար:

#### **4.2.3. Ի՞նչ ենք հասկանում ծնողական պարտականությունների կատարումից խուսափել ասելով**

Ծնողների առաջնային պարտականությունն է հոգ տանել իրենց երեխաների առողջության, նրանց ֆիզիկական և հոգևոր զարգացման համար:

Ծնողական պարտականություններից խուսափելը նախևառաջ դրսևորվում է երեխայի համար հոգ տանելուց ծնողի ցանկության բացակայության մեջ: Եթե ծնողը երեխային թողնում է առանց սննդի, հագուստի. դրանք ծնողի կողմից երեխայի համար հոգ տանելու պարտականությունը չկատարելու ապացույցներ են: Բնականաբար, խոսքը չի վերաբերում այն իրավիճակներին, երբ երեխային առանց ապրուստի անհրաժեշտ միջոցների թողնելը հետևանք է ընտանիքի խիստ ծանր նյութական վիճակի: Երեխային առանց ֆիզիկական և հոգևոր զարգացման համար անհրաժեշտ միջոցների թողնելը կարող է ծնողական իրավունքներից զրկելու հիմք հանդիսանալ, եթե ծնողների նման վարքագծում առկա է դիտավորություն, կամ այն անտարբեր վերաբերմունքի արդյունք է:

#### **4.2.4. Ի՞նչ ենք հասկանում ծնողական իրավունքների չարաշահում ասելով**

Ծնողական իրավունքների չարաշահումը կարող է ունենալ տարբեր դրսևորումներ: Ծնողական իրավունքների չարաշահումը, որպես կանոն, դրսևորվում է նրանում, որ ծնողները երեխաներին հարկադրում են կատարել այնպիսի գործողություններ, որոնք հակասում են երեխայի շահերին: Մասնավորապես, ծնողական իրավունքների չարաշահումը կարող է դրսևորվել երեխայի կրթություն ստանալուն արգելք հանդիսանալու, երեխային մուրացկանության հարկադրելու, երեխային ալկոհոլի օգտագործման հակելու միջոցով:

#### **4.2.5. Ի՞նչ դրսևորումներ կարող է ունենալ երեխայի նկատմամբ դաժան վերաբերմունքը**

Թեև ՀՀ ամուսնության և ընտանիքի օրենսգիրքը չի բացահայտում երեխայի նկատմամբ «դաժան վերաբերմունք» հասկացության բովանդակությունը, գործնականում, երեխայի նկատմամբ դաժան վերաբերմունքը կարող է ունենալ հետևյալ դրսևորումները.

- երեխայի նկատմամբ ֆիզիկական բռնության կիրառումը, այն է՝ ծեծը, ֆիզիկական ցավ պատճառելը,
- հոգեկան բռնության կիրառումը, ինչը կարող է դրսևորվել երեխայի կամքը ճնշելու, նրա նկատմամբ սպառնալիք կիրառելու, երեխայի մեջ վախի զգացում առաջացնելու միջոցով,
- երեխայի նկատմամբ սեռական ոտնձգությունների կատարումը:

#### **4.2.6. Ի՞նչ կարգով է կատարվում ծնողական իրավունքներից զրկումը**

Անձին ծնողական իրավունքներից կարող է զրկել միայն դատարանը: Այս կամ այն անձին ծնողական իրավունքներից զրկելու պահանջով դատարան կարող են դիմել.

- երեխայի ծնողներից մեկը՝ մյուս ծնողին ծնողական իրավունքներից զրկելու կապակցությամբ,
- երեխայի խնամակալը կամ հոգաբարձուն,
- պետական կամ հասարակական կազմակերպությունները:

#### **4.2.7. Ի՞նչ իրավունքներից է զրկվում ծնողը ծնողական իրավունքներից զրկվելու դեպքում**

Նախևառաջ ծնողական իրավունքներից զրկվելու դեպքում ծնողը զրկվում է իր երեխային անձամբ դաստիարակելու և նրա հետ շփվելու իրավունքից: Ծնողական իրավունքներից զրկվելու արդյունքում դադարեցվում է երեխայի և ծնողի միջև անձնական մշտական շփումը, այլապես ծնողական իրավունքներից զրկելը կդառնար անիմաստ: Սակայն ծնողական իրավունքներից զրկված ծնողի՝ երեխայի հետ շփվելու իրավունքի բացակայությունը չի նշանակում, որ երեխայի և ծնողի միջև չի կարող լինել որևէ կապ: Համաձայն ՀՀ ամուսնության և ընտանիքի օրենսգրքի 73 հոդվածի՝ ծնողական իրավունքներից զրկված ծնողի խնդրանքով խնամակալության ու հոգաբարձության մարմինները կարող են թույլ տալ նրան տեսակցելու երեխայի հետ, եթե ծնողի հետ շփումը վնասակար ազդեցություն չի թողնի երեխայի վրա:

Ծնողական իրավունքներից զրկված ծնողն այլևս իր երեխայի օրինական ներկայացուցիչը չէ և չի կարող ներկայացնել երեխայի շահերը պետական կամ հասարակական կազմակերպություններում, երեխայի անունից կնքել գործարքներ:

Ծնողական իրավունքներից զրկված ծնողը հետագայում՝ իր այն զավակի չափահաս դառնալուց հետո, որի նկատմամբ ծնողական իրավունքներից զրկվել է, իրավունք չունի պահանջելու ապրուստի միջոց: Բացի այդ, ծնողական իրավունքներից զրկված ծնողը չի կարող ժառանգել իր այն զավակի գույքը, որի նկատմամբ ծնողական իրավունքներից զրկվել է: Օրենքը ծնողական իրավունքներից զրկված ծնողին համարում է «անարժան ժառանգ»:

Ծնողական իրավունքներից զրկված անձինք չեն կարող երեխա որդեգրել, լինել խնամակալ կամ հոգաբարձու:

Նշված իրավունքներից զրկվելով հանդերձ, ծնողական իրավունքներից զրկված ծնողը պահպանում է երեխայի ապրուստը հոգալու պարտականությունը:

#### **4.2.8. Ի՞նչ հետևանքներ է ունենում ծնողական իրավունքներից զրկելն այն երեխայի համար, որի նկատմամբ ծնողական իրավունքներից զրկվել է ծնողը**

Ծնողին ծնողական իրավունքներից զրկելու արդյունքում առաջին հերթին վերանում է երեխայի կյանքի, առողջության ու դաստիարակության համար նախկինում գոյություն ունեցած վտանգը:

Երեխայի շահերի և իրավունքների պաշտպանության պարտականությունը ծնողական իրավունքներից զրկված ծնողից փոխանցվում է ծնողին փոխարինած անձանց, այդ թվում՝ նաև մանկական հիմնարկներին, որոնց խնամքին է հանձնվում երեխան:

Երեխայի նկատմամբ նրա ծնողի ծնողական իրավունքների դադարեցման արդյունքում երեխան կարող է անարգել որդեգրվել, նրա նկատմամբ կարող է սահմանվել խնամակալություն (հոգաբարձություն):

#### **4.2.9. Երեխան ունի՞, արդյոք, ժառանգման իրավունք իր այն ծնողի գույքի նկատմամբ, ով զրկված է եղել ծնողական իրավունքներից**

Եթե ծնողական իրավունքներից զրկված ծնողը չի կարող ժառանգել իր այն երեխայի գույքը, ում նկատմամբ զրկված է եղել ծնողական իրավունքներից, ապա այդ երեխան ազատ է ժառանգելու այդ ծնողի գույքը:

Սակայն տվյալ երեխան զրկվում է ծնողական իրավունքներից զրկված ծնողի գույքը ժառանգելու իրավունքից, եթե մինչև այդ ծնողի մահը նա որդեգրվել է այլ անձանց կողմից:

#### **4.2.10. Հնարավո՞ր է, արդյոք, ծնողական իրավունքների վերականգնումը**

Ծնողական իրավունքների վերականգնումը հնարավոր է, եթե ծնողի վարքն ու կենցաղաձևը փոխվել են և նա ի վիճակի է իրականացնելու երեխայի դաստիարակությունը: Ծնողական իրավունքների վերականգնումը կատարվում է միայն դատական կարգով: Ծնողական իրավունքները վերականգնելու վերաբերյալ հայցի քննության ընթացքում դատարանը հաշվի է առնում նաև երեխայի կարծիքը, եթե լրացել է նրա 10 տարին:

Օրենքն արգելում է ծնողական իրավունքների վերականգնումն այն դեպքում, երբ երեխան արդեն որդեգրվել է այլ անձանց կողմից:

### **Ք3. ԾՆՈՂՆԵՐԻ ԵՎ ԶԱՎԱԿՆԵՐԻ ԱԼԻՄԵՆՏԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

#### **4.3.1. Ի՞նչ նպատակ է հետապնդում ծնողների կողմից իրենց զավակների համար ալիմենտի վճարումը**

Ամուսնության և ընտանիքի վերաբերյալ օրենսդրության համաձայն՝ ծնողները պարտավոր են խնամել իրենց անչափահաս, ինչպես նաև օգնության կարիք ունեցող չափահաս զավակներին: Երեխաների խնամքը ոչ միայն ծնողների բարոյական պարտքն է, այլ նաև օրենքով սահմանված նրանց պարտականությունը: Որպես կանոն, ծնողներն իրենց այս պարտականությունը կատարում են առանց հարկադրանքի: Սակայն այն դեպքում, երբ ծնողները չեն մասնակցում երեխայի խնամքին, նրանք պարտավորվում են վճարել ալիմենտ (լատիներեն alimentum բառից, որը նշանակում է սնունդ): Ալիմենտը ծնողի կողմից կարող է վճարվել հոժարակամ. հակառակ դեպքում ալիմենտը ծնողից բռնագանձվում է դատական կարգով: Ալիմենտն ունի հստակ նպատակային ուղղվածություն, այն է՝ երեխայի խնամքը, երեխայի գոյության համար անհրաժեշտ միջոցի ապահովումը:

#### **4.3.2. Ի՞նչ չափով է բռնագանձվում անչափահաս երեխայի համար վճարվող ալիմենտը**



« ամուսնության և ընտանիքի օրենսգրքի 78 հոդվածը սահմանում է անչափահաս երեխաներին վճարվող ալիմենտի հետևյալ չափը.

մեկ երեխայի համար բռնագանձվում է ծնողի եկամտի մեկ քառորդը, երկու երեխայի համար՝ մեկ երրորդը, երեք և ավելի երեխաների համար՝ եկամտի կեսը: Ընդ որում, յուրաքանչյուր երեխայի համար բռնագանձվող ալիմենտի չափը չի կարող պակաս լինել նվազագույն աշխատավարձի 25 տոկոսից (նվազագույն աշխատավարձը 5000 դրամ է ):

#### **4.3.3. Ինչպե՞ս է որոշվում անչափահաս երեխայի համար վճարվող ալիմենտի չափը, եթե ծնողն ունի ոչ կանոնավոր եկամուտ**

Այն դեպքում, երբ ալիմենտ վճարելու պարտականություն ունեցող ծնողի եկամուտը փոփոխական է, ոչ կանոնավոր, անչափահաս երեխայի համար ալիմենտը բռնագանձվում է կայուն դրամական գումարով: Այս կարգով է ալիմենտը բռնագանձվում նաև այն դեպքերում, երբ ալիմենտ վճարող ծնողն իր վաստակի մի մասն ստանում է բնամթերքով կամ ծնողի վաստակից բաժնային հարաբերությամբ ալիմենտի բռնագանձումն անհնարին կամ դժվար է: Նշված դեպքերում դատարանը սահմանում է կայուն դրամական գումար, որն ամեն ամիս բռնագանձվում է որպես ալիմենտ:

#### **4.3.4. Ո՞ւնե՞ն, արդյոք, ալիմենտ ստանալու իրավունք չափահաս զավակները**

Ծնողները կրում են ոչ միայն անչափահաս, այլ նաև անաշխատունակ չափահաս զավակներին պահելու պարտավորություն: Հետևաբար, ալիմենտ ստանալու իրավունքը վերապահված է ոչ միայն անչափահաս, այլ նաև չափահաս զավակներին: Չափահաս զավակների՝ ալիմենտ ստանալու իրավունքը, սակայն, պայմանավորված է որոշակի հանգամանքներով: Չափահաս զավակները ալիմենտ ստանալու իրավունք ունեն, եթե.

- անաշխատունակ են, և
- ունեն նյութական օգնության կարիք (ԱԸՕ, 85 հոդված):

Անաշխատունակ են համարվում հաշմանդամները, տասնութ տարեկանից բարձր տարիքի սովորողները՝ մինչև ցերեկային ուսուցման ձևով ուսումնական հաստատություններում ուսման ավարտը, սակայն ոչ ավելի, քան մինչև քսաներեք տարեկան դառնալը:

Անաշխատունակ չափահաս զավակները կարիքավոր են համարվում, եթե նրանց գոյության աղբյուրը (թոշակ, կրթաթոշակ, նպաստ և այլն) ակնհայտորեն անբավարար է նրանց նվազագույն կարիքները բավարարելու համար:

#### **4.3.5. Ի՞նչ չափով է բռնագանձվում չափահաս անաշխատունակ զավակի համար վճարվող ալիմենտը**

Անաշխատունակ չափահաս զավակների համար բռնագանձվող ալիմենտի չափը որոշվում է ամեն ամիս վճարվող կայուն դրամական գումարով: Դատարանն այդ գումարի չափը որոշելիս հաշվի է առնում ծնողների և զավակների նյութական և ընտանեկան դրությունը :

#### **4.3.6. Ո՞ր դեպքերում դատարանը կարող է նվազեցնել ալիմենտի չափը**

Դատարանը կարող է նվազեցնել ալիմենտի չափը՝ հաշվի առնելով ալիմենտ վճարողի և ստացողի նյութական կամ ընտանեկան դրությունը: Դատարանը կարող է ալիմենտի՝ օրենքով սահմանված չափը նվազեցվել հետևյալ դեպքերում.

- եթե ալիմենտ վճարող ծնողն ունի այլ անչափահաս երեխաներ, որոնք օրենքով սահմանված չափով ալիմենտ վճարելու դեպքում ավելի պակաս ապահովված կլինեն, քան ալիմենտ ստացող երեխան,
- եթե ալիմենտ վճարող ծնողն առաջին կամ երկրորդ կարգի հաշմանդամ է,
- եթե ալիմենտ ստացող երեխան աշխատում է և ունի բավարար վաստակ:

Դատարանը կարող է ալիմենտի՝ օրենքով սահմանված չափը նվազեցնել նաև այլ հարգելի պատճառներով:

#### **4.3.7. Ո՞վ կարող է հայց հարուցել ալիմենտի չափը պակասեցնելու կամ դրա վճարից ազատելու պահանջով**

Այնպիսի հանգամանքների առկայության դեպքում, երբ օրենքը հնարավոր է համարում ալիմենտի չափի նվազեցումը կամ ալիմենտի վճարից ազատումը, ալիմենտի չափը նվազեցնելու կամ ալիմենտի վճարից ազատելու պահանջով հայց կարող է հարուցել ալիմենտ վճարող ծնողը:

#### **4.3.8. Կարող է, արդյոք, ավելացվել ալիմենտի չափը**

Այն դեպքում, երբ անչափահաս երեխայի համար վճարվող ալիմենտը բռնագանձվում է կայուն դրամական գումարով, ինչպես նաև չափահաս զավակին ալիմենտ վճարելու դեպքում վճարվող ալիմենտի չափը կարող է ավելացվել, եթե փոփոխվել է ալիմենտ վճարող ծնողի նյութական կամ ընտանեկան դրությունը:

**Հարց:** Դատարանը որպես ամեն ամիս երեխայի համար վճարվող ալիմենտի չափ է սահմանել 10.000 դրամ: Ներկայումս նախկին ամուսինս վաստակում է կրկնակի ավելի, քան վաստակում էր ալիմենտի կայուն դրամական չափը որոշելիս: Կարո՞ղ եմ, արդյոք, հավակնել ալիմենտի չափի ավելացման:

**Պատասխան:** ՀՀ ԱԸՕ 89 հոդվածը Ձեզ հնարավորություն է տալիս դիմելու դատարան՝ ալիմենտի չափն ավելացնելու պահանջով՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ձեր նախկին ամուսնու նյութական դրությունը բարելավվել է:

#### **4.3.9. Արդյոք, բռնագանձվում է ալիմենտ այն անչափահաս երեխայի համար, ով տեղավորված է մանկական հիմնարկում**

Եթե մանկական հիմնարկում տեղավորված երեխայի ծնողներն ազատված չեն երեխաներին պահելու համար վճար մուծելուց, ապա յուրաքանչյուր ծնողից միջոցներ են բռնագանձվում երեխային պահելու համար: Այդ միջոցները բռնագանձվում են այն մանկական հիմնարկի օգտին, որտեղ տեղավորված է երեխան:

ՀՀ Ամուսնության և ընտանիքի օրենսգիրքը (ԱԸՕ, հոդվածներ 78 և 83), սակայն, իրավունք է վերապահում դատարանին նվազեցնել ալիմենտի չափը կամ ծնողներին ազատել մանկական հիմնարկում տեղավորված երեխայի համար ալիմենտի վճարից, եթե դա հիմնավորված է ծնողների նյութական դրությամբ:

#### **4.3.10. Ալիմենտ վճարող ծնողը պարտավո՞ր է, արդյոք, կատարել երեխայի խնամքի հետ կապված լրացուցիչ ծախսերը**

Կարող են ծազել այնպիսի հանգամանքներ, երբ երեխայի խնամքի համար անհրաժեշտ լինեն լրացուցիչ ծախսեր: Որպես այդպիսի հանգամանքներ կարող են լինել երեխայի հիվանդությունը, խեղումը: Այս և նման այլ բացառիկ հանգամանքներում ալիմենտ վճարող ծնողը դատարանի կողմից կարող է մասնակից դարձվել նշված հանգամանքներից առաջացող ծախսերին: Դատարանն այդ ծախսերին ծնողի մասնակցության չափը որոշում է՝ հաշվի առնելով ծնողների նյութական և ընտանեկան դրությունը:

#### **4.3.11. Ո՞ր դեպքերում է դադարեցվում ծնողի կողմից զավակների համար ալիմենտի վճարումը**

Այն դեպքում, երբ ալիմենտը վճարվում է անչափահաս երեխայի համար, ալիմենտի վճարումը դադարեցվում է, երբ՝

- երեխան դառնում է չափահաս,
- երեխան, ում խնամքի համար ալիմենտ էր վճարվում, որդեգրվում է:

Եթե ալիմենտը վճարվում է չափահաս անաշխատունակ և նյութական օգնության կարիք ունեցող զավակի համար, ալիմենտի վճարումը դադարեցվում է, եթե ալիմենտ ստացող զավակն այլևս նյութական օգնության կարիք չունի կամ վերացել է ալիմենտ ստացող չափահաս զավակի անաշխատունակության համար հիմք հանդիսացած հանգամանքը:

#### **4.3.12. Կարո՞ղ եմ, արդյոք, ծնողներն ալիմենտ պահանջել իրենց չափահաս զավակներից**

Աշխատունակ չափահաս զավակները պարտավոր են հոգ տանել իրենց անաշխատունակ, օգնության կարիք ունեցող ծնողների մասին: Անաշխատունակ են համարվում կենսաթոշակային տարիքի հասած ծնողները, ինչպես նաև հաշմանդամ ծնողները: Ծնողների կարիքավորության հարցը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում լուծվում է առանձին: Չափահաս աշխատունակ զավակները կարող են ազատվել ծնողներին պահելու պարտականությունից, եթե վերջիններս խուսափել են ծնողական պարտականությունները կատարելուց: Չափահաս

զավակներից ալիմենտ պահանջելու իրավունք չունեն ծնողական իրավունքներից զրկված ծնողները:

#### **4.3.13. Ինչպե՞ս է որոշվում ծնողների ապրուստի համար բռնագանձվող միջոցների չափը**

Դատարանը որոշում է անաշխատունակ ծնողների խնամքին՝ զավակներից յուրաքանչյուրի մասնակցության չափը՝ սահմանելով ամեն ամիս վճարվող կայուն դրամական գումար: Դատարանը հաշվի է առնում ծնողների և զավակների նյութական և ընտանեկան դրությունը:

#### **4.3.14. Ամուսիններից մեկն իրավունք ունի՞, արդյոք, ալիմենտ պահանջելու մյուս ամուսնուց**

Ամուսնալուծությունից հետո ամուսնուց ապրուստի միջոց պահանջելու իրավունք ունի.

- անաշխատունակ կարիքավոր ամուսինը: Անաշխատունակ են կենսաթոշակային տարիքի հասած անձինք, հաշմանդամները: Ընդ որում, անաշխատունակ կարիքավոր ամուսնու՝ մյուս ամուսնուց ապրուստի միջոց ստանալու իրավունքը գործում է, եթե անձն անաշխատունակ է դարձել մինչև ամուսնալուծությունը կամ ամուսնալուծությունից հետո մեկ տարվա ընթացքում: Իսկ կարիքավորության հանգամանքի առկայությունը յուրաքանչյուր կոնկրետ դեպքի համար որոշվում է առանձին:
- կինը՝ հղիության ժամանակ և երեխան ծննդաբերելուց հետո մեկուկես տարվա ընթացքում, եթե հղիությունն սկսվել է մինչև ամուսնալուծությունը,
- կենսաթոշակային տարիքի հասած ամուսինը, եթե ամուսինները ամուսնական հարաբերությունների մեջ են գտնվել երկար ժամանակ, և ամուսինը կենսաթոշակային տարիքի է հասել ոչ ուշ, քան ամուսնության պահից սկսած հինգ տարում:

Ընդ որում, նշված անձինք կարող են ապրուստի միջոց պահանջել ամուսնուց, եթե վերջինս ունի մյուս ամուսնուն ալիմենտ տալու համար անհրաժեշտ միջոցներ:

#### **4.3.15. Ի՞նչ չափով է բռնագանձվում ամուսնու համար վճարվող ալիմենտը**

Ամուսնուն պահելու համար բռնագանձվող ալիմենտի չափը որոշում է դատարանը՝ կայուն դրամական գումարով: Այդ չափը որոշելու համար հիմք է հանդիսանում ինչպես ալիմենտ ստացող, այնպես էլ ալիմենտ վճարող ամուսնու նյութական և ընտանեկան դրությունը: Ուստի, ցանկացած ժամանակ, երբ փոփոխվում է ամուսինների նյութական կամ ընտանեկան դրությունը, ամուսիններից յուրաքանչյուրը կարող է ալիմենտի չափը փոփոխելու պահանջ ներկայացնել դատարան:

#### **4.3.16. Ի՞նչ հիմքով կարելի է ամուսնուն զրկել մյուս ամուսնուց ալիմենտ ստանալու իրավունքից կամ սահմանափակել այդ իրավունքը**

Օրենքով նախատեսված կատեգորիայի անձանց՝ ամուսնալուծությունից հետո ամուսնուց ապրուստի միջոց ստանալու իրավունքը բացարձակ չէ: ՀՀ ամուսնության և ընտանիքի օրենսգրքի 27 հոդվածը սահմանում է այն հիմքերը, որոնց առկայությամբ դատարանը կարող է տվյալ անձին զրկել ամուսնուց ապրուստի միջոց ստանալու իրավունքից կամ այդ իրավունքը սահմանափակել որոշակի ժամկետով: Այդ հիմքերն են.

- ամուսինների ամուսնության կարճատևությունը,
- ալիմենտ պահանջող ամուսնու վարքը:

#### **4.3.17. Ի՞նչ կարգով է կատարվում ալիմենտի հոժարական վճարումը**

Եթե ալիմենտ վճարելու պարտավորություն ունեցող ծնողը պատրաստ է հոժարական կատարել իր ալիմենտային պարտավորությունները, ապա նա պետք է իր աշխատավայրի կամ կենսաթոշակ, կրթաթոշակ, գործազրկության նպաստ ստանալու վայրի ադմինիստրացիային ներկայացնի դիմում, որի հիման վրա պետք է ալիմենտ պահվի նրա աշխատավարձից, կենսաթոշակից, կրթաթոշակից կամ գործազրկության նպաստից: Նշված դիմումի հիման վրա համապատասխան ադմինիստրացիան յուրաքանչյուր ամիս ալիմենտ վճարողի աշխատավարձից (կենսաթոշակ, կրթաթոշակ, գործազրկության նպաստ) կատարում է ալիմենտի հետպահում և վճարում դիմումում մատնանշված անձին:

#### **4.3.18. Ի՞նչ եկամուտներից կարող է ալիմենտ բռնագանձվել**

Բացի աշխտավարձից, ալիմենտի բռնագանձումը տարածվում է կենսաթոշակի, կրթաթոշակի, ժամանակավոր անաշխատունակության և գործազրկության համար վճարվող նպաստների վրա:

#### **4.3.19. Որո՞նք են այն եկամուտները, որոնց վրա ալիմենտի բռնագանձումը տարածվել չի կարող**

Ալիմենտի բռնագանձումը չի կարող տարածվել այն դրամական գումարների վրա, որոնք ալիմենտ վճարողն ստացել է.

- առողջության, ինչպես նաև կերակրողի մահվանը պատճառված վնասների հատուցման համար,
- երեխայի ծննդյան կապակցությամբ,
- ծառայողական պարտականությունները կատարելիս ստացած հաշմության համար,
- որպես փոխհատուցում՝ վնասակար կամ ծայրահեղ դժվարին պայմաններում աշխատելու համար,
- որպես հաշմանդամության նպաստ,
- որպես տուժող՝ լրացուցիչ սննդի, առողջարանային բուժման, պրոթեզավորման և խնամքի համար,
- աշխատանքից ազատվելու դեպքում՝ որպես արձակման նպաստ:

## **ԳԼՈՒԽ 5. ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՒԱՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ**

### [Ք 1. ԽՆՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ](#)

#### **5.1.1. Ո՞րն է երեխաների նկատմամբ խնամակալության և հոգաբարձության նպատակը**

Երեխաների նկատմամբ խնամակալությունը և հոգաբարձությունը հանդիսանում են ծնողազուրկ երեխաների և առանց ծնողական խնամքի մնացած անչափահաս երեխաների դաստիարակության կազմակերպման ձև: Խնամակալությունը և հոգաբարձությունը սահմանվում են ծնողազուրկ երեխաների, որևէ պատճառով առանց ծնողական խնամքի մնացած երեխաների դաստիարակության, խնամքի և նրանց իրավունքների ու շահերի պաշտպանության նպատակով:

#### **5.1.2. Ի՞նչ տարբերություն կա խնամակալության և հոգաբարձության միջև**

Խնամակալությունը սահմանվում է մինչև 14 տարեկան երեխաների նկատմամբ, իսկ հոգաբարձությունը՝ 14-ից մինչև 18 տարեկան անչափահասների նկատմամբ:

Խնամակալությունը և հոգաբարձությունը տարբերվում են նաև խնամակալի և հոգաբարձուի իրավունքների ու պարտականությունների ծավալով: Խնամակալները հանդես են գալիս իրենց խնամարկյալի անունից, հոգաբարձուները պարզապես իրենց համաձայնությունն են տալիս իրենց խնամարկյալի կողմից գործարքների կնքմանը:

### 5.1.3. Ո՞ր դեպքերում է սահմանվում խնամակալություն կամ հոգաբարձություն

Համաձայն ՀՀ ամուսնության և ընտանիքի օրենսգրքի՝ անչափահաս երեխաների նկատմամբ խնամակալություն կամ հոգաբարձություն կարող է սահմանվել.

- երեխայի ծնողների մահվան դեպքում,
- եթե երեխան չի ապրում իր ծնողների հետ, և ծնողները հրաժարվում են նրան դաստիարակելու պարտականությունից,
- եթե ծնողները հարգելի պատճառներով (գործուղում, հիվանդություն և այլն) բացակայում են վեց ամսից ավելի և անչափահասի շահերը պահանջում են խնամակալության կամ հոգաբարձության սահմանում:

### 5.1.4. Ո՞ր մարմինն է սահմանում հոգաբարձություն և խնամակալություն

Խնամակալություն կամ հոգաբարձություն սահմանում են խնամակալության և հոգաբարձության մարմինները: Խնամակալության և հոգաբարձության մարմիններն են տեղական ինքնակառավարման մարմինները՝ քաղաքապետարանները, գյուղապետարանները, համայնքապետարանները: Խնամակալություն կամ հոգաբարձություն սահմանում է այն տեղական ինքնակառավարման մարմինը, որի տարածքում խնամակալության կամ հոգաբարձության ենթակա անձը կամ խնամակալը (հոգաբարձուն) ունի բնակության վայր:

### 5.1.5. Ի՞նչ կարգով են սահմանվում խնամակալություն և հոգաբարձություն

Խնամակալության և հոգաբարձության մարմինը պետք է խնամակալ կամ հոգաբարձու նշանակի մեկ ամսվա ընթացքում՝ սկսած այն պահից, երբ իրեն հայտնի է դարձել խնամակալություն կամ հոգաբարձություն սահմանելու անհրաժեշտության մասին: Նման անհրաժեշտության մասին խնամակալության և հոգաբարձության մարմինն պարտավոր են հայտնել այն հիմնարկները և անձինք, որոնց հայտնի է ծնողների մահվան, հիվանդության, ծնողներին ծնողական իրավունքներից զրկելու հետևանքով կամ այլ պատճառներով առանց խնամքի մնացած երեխաների մասին:

Մինչև խնամակալի կամ հոգաբարձուի նշանակումը, խնամակալության և հոգաբարձության մարմինը պարտավոր է ժամանակավորապես կազմակերպել երեխայի խնամքը:

### 5.1.6. Ո՞վ կարող է նշանակվել խնամակալ կամ հոգաբարձու

Խնամակալ կամ հոգաբարձու կարող են նշանակվել միայն չափահաս գործունակ անձինք:

**Ծանոթագրություն:** Չափահաս են համարվում 18 տարին լրացած անձինք: Գործունակ են այն անձինք, ովքեր իրենց գործողություններով կարող են իրականացնել քաղաքացիական իրավունքներ և ձեռք բերել պարտականություններ:

Օրենքը միաժամանակ սահմանում է այն անձանց շրջանակը, ովքեր չեն կարող խնամակալ կամ հոգաբարձու լինել: Այդ անձանց թվին պատկանում են.

- ծնողական իրավունքներից զրկված անձինք,
- նախկին որդեգրողները, եթե որդեգրումը վերացվել է նրանց կողմից իրենց պարտականությունները պատշաճորեն չկատարելու հետևանքով,
- դատարանի կողմից անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձինք,
- նախկինում խնամակալ կամ հոգաբարձու նշանակված անձինք, ովքեր իրենց պարտականությունները պատշաճ կերպով չկատարելու համար հեռացվել են խնամակալի կամ հոգաբարձուի պարտականություններից:

### 5.1.7. Ի՞նչ հանգամանքներ են հաշվի առնվում խնամակալ կամ հոգաբարձու նշանակելիս

Օրենքը սահմանում է այն հանգամանքները, որոնք պետք է խնամակալ կամ հոգաբարձու նշանակելիս հաշվի առնի խնամակալության և հոգաբարձության մարմինը: Մասնավորապես, հաշվի են առնվում հնարավոր խնամակալի (հոգաբարձուի) բարոյական որակները, նրա կողմից խնամակալի (հոգաբարձուի) պարտականությունները կատարելու ընդունակությունը (նյութապես ապահովվածությունը, առողջական վիճակը, բնակարանով ապահովված լինելու հանգամանքը): Հաշվի են առնվում նաև, թե ինչ հարաբերություններ գոյություն ունեն հնարավոր խնամակալի (հոգաբարձուի) և երեխայի միջև:

### **5.1.8 Հաշվի առնվում է, արդյոք, երեխայի համաձայնությունը խնամակալ կամ հոգաբարձու նշանակելիս**

Երեխայի նկատմամբ խնամակալություն կամ հոգաբարձություն սահմանելիս երեխայի համաձայնությունն ստանալը պարտադիր է, եթե լրացել է երեխայի 10 տարին, բացառությամբ այն դեպքերի, երբ խնամակալ (հոգաբարձու) չնշանակելը կհակասի երեխայի շահերին:

## **Ք2. ԽՆԱՄԱԿԱԼԻ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

### **5.2.1. Ի՞նչ իրավունքներ ունեն խնամակալը և հոգաբարձուն**

Խնամակալը և հոգաբարձուն հանդիսանում են իրենց խնամարկյալ երեխայի օրինական ներկայացուցիչը, այսինքն՝ նրանք երեխայի շահերը ներկայացնում են բոլոր պետական մարմիններում և անձանց հետ հարաբերություններում:

Խնամակալը և հոգաբարձուն ինքնուրույնաբար որոշում են երեխայի դաստիարակության մեթոդները, ընտրում են այն ուսումնական հաստատությունը, որտեղ պետք է հաճախի իրենց խնամարկյալը:

Խնամակալը և հոգաբարձուն իրավունք ունեն դատական կարգով երեխային վերադարձնելու պահանջ ներկայացնել բոլոր այն անձանց, ովքեր առանց օրինական հիմքի իրենց մոտ են պահում երեխային:

Խնամակալն իր խնամարկյալ երեխայի անունից կատարում է բոլոր անհրաժեշտ գործարքները (առուվաճառքի, փոխանակության կամ այլ գործարքներ):

Ի տարբերություն խնամակալի խնամքի տակ գտնվող մինչև 14 տարեկան երեխաների, հոգաբարձուի խնամքի տակ գտնվող 14-18 տարեկան անչափահասների գործունակության ծավալն ավելի մեծ է, և նրանք իրավունք ունեն ինքնուրույնաբար, առանց հոգաբարձուի համաձայնության, կատարելու օրենքով նախատեսված որոշակի գործարքներ, այն է՝

- տնօրինել իրենց աշխատավարձը,
- կնքել մանր կենցաղային գործարքներ,
- կնքել նոտարական վավերացում չպահանջող՝ անհատույց օգուտներ ստանալուն ուղղված գործարքներ:

Հոգաբարձուի խնամքի տակ գտնվող 14-18 տարեկան խնամարկյալները մնացած բոլոր գործարքները կնքում են հոգաբարձուի համաձայնությամբ:

### **5.2.2. Ի՞նչ պարտականություններ ունեն խնամակալը և հոգաբարձուն**

Օրենքը նախատեսում է խնամակալի հետևյալ պարտականությունները.

- խնամակալները պարտավոր են դաստիարակել իրենց խնամարկյալին, նրանց համար ապահովել անհրաժեշտ կենցաղային պայմաններ, ապահովել նրանց բուժումն ու խնամքը, պաշտպանել նրանց իրավունքներն ու շահերը,

- խնամակալները պարտավոր են բնակվել իրենց խնամարկյալի հետ միասին:

Հոգաբարձուն կարող է իր խնամարկյալից անջատ բնակվել միայն խնամակալության և հոգաբարձության մարմնի թույլտվությամբ, եթե լրացել է խնամարկյալ երեխայի 16 տարին և անջատ բնակությունն անբարենպաստ հետևանքներ չի ունենա երեխայի համար:

Խնամակալն ու հոգաբարձուն իրենց պարտականությունները կատարում են անհատույց:

## **Ք3. ԽՆԱՄԱԿԱԼԻ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՂՂՐՈՒՄԸ**

### **5.3.1. Ո՞ր դեպքերում է խնամակալը կամ հոգաբարձուն ազատվում իր պարտականությունների կատարումից**

Խնամակալը կամ հոգաբարձուն կարող է ազատվել խնամակալի կամ հոգաբարձուի պարտականություններից, եթե.

- երեխաները վերադարձվում են ծնողների դաստիարակությանը (երբ վերականգնվել են երեխայի ծնողի ծնողական իրավունքները, երբ երկարատև բացակայությունից հետո ծնողները վերադարձել են),

- խնամակալի կամ հոգաբարձուի խնամքի տակ գտնվող երեխան որդեգրվում է,

- խնամարկյալ երեխան տեղավորվում է մանակական հիմնարկներում, բուժհիմնարկներում կամ սոցիալական ապահովության մարմիններում:

Տվյալ անձին խնամակալի կամ հոգաբարձուի պարտականություններից ազատելու մասին որոշում կայացնում է խնամակալության և հոգաբարձության մարմինը:

Խնամակալը կամ հոգաբարձուն իրենց պարտականություններից կարող են ազատվել նաև իրենց խնդրանքով, եթե դրա համար առկա են հարգելի պատճառներ: Հարգելի պատճառ կարող են հանդիսանալ խնամակալի կամ հոգաբարձուի հիվանդությունը, նրա նյութական պայմանների փոփոխությունը, անհաշտ հարաբերությունները խնամակալի և խնամարկյալի միջև:

### **5.3.2. Ո՞ր դեպքերում է խնամակալը կամ հոգաբարձուն հեռացվում իր պարտականությունների կատարումից**

Խնամակալության և հոգաբարձության մարմինը կարող է խնամակալին կամ հոգաբարձուին հեռացնել իր պարտականությունների կատարումից, եթե.

- խնամակալը կամ հոգաբարձուն պատշաճ կերպով չեն կատարում իրենց պարտականությունները,
- խնամակալը կամ հոգաբարձուն խնամակալությունը (հոգաբարձությունը) օգտագործում են շահադիտական նպատակներով՝ ի վնաս խնամարկյալի. մասնավորապես, երբ խնամակալը կամ հոգաբարձուն խնամակալությունը (հոգաբարձությունը) օգտագործում են խնամարկյալի գույքը, բնակելի տարածությունն օգտագործելու նպատակով,
- խնամակալը կամ հոգաբարձուն իրենց խնամարկյալին թողնում են առանց հսկողության և անհրաժեշտ նյութական օգնության:

### **5.3.3. Ո՞ր դեպքերում է դադարեցվում խնամակալությունը կամ հոգաբարձությունը**

Խնամակալության ներքո գտնվող երեխայի նկատմամբ խնամակալությունը դադարում է երեխայի 14 տարին լրանալուն պես: 14 տարին լրացած երեխայի խնամակալը դառնում է նրա հոգաբարձուն. դա կատարվում է ինքնաբերաբար, և դրա համար հատուկ որոշում չի պահանջվում:

14-18 տարեկան երեխայի նկատմամբ հոգաբարձությունը դադարում է, խնամարկյալի 18 տարին լրանալուն պես: Այս դեպքում ևս հոգաբարձությունը դադարում է առանց որևէ հատուկ որոշման:

## ԳԼՈՒԽ 6. ՈՐՂԵԳՐՈՒՄ

### Ք1. ՈՐՂԵԳՐՄԱՆ ԿԱՐԳԸ

#### **6.1.1. Ի՞նչ իրավաբանական հետևանքներ է առաջացնում որդեգրումը**

Որդեգրման արդյունքում մի կողմից, դադարում են իրավահարաբերությունները որդեգրվող երեխայի և նրա հարազատ ծնողների միջև, մյուս կողմից՝ երեխայի և որդեգրողների միջև հաստատվում է իրավական կապ, ծագում են ծնողական իրավունքներ և պարտականություններ. կատարվում է ծնողական իրավունքների և պարտականությունների յուրօրինակ փոխանցում երեխայի հարազատ ծնողներից որդեգրողներին:

Համաձայն ՀՀ ասանունության և ընտանիքի օրենսգրքի 124 հոդվածի, որդեգրված երեխաները և նրանց սերունդները որդեգրողի և նրանց ազգականների նկատմամբ ունեն այն նույն իրավունքներն ու պարտականությունները, ինչ երեխաներն ունեն իրենց հարազատ ծնողների և նրանց ազգականների հանդեպ: Որդեգրման արդյունքում որդեգրված երեխան իր հարազատ ծնողների նկատմամբ կորցնում է իրավունքները և ազատվում պարտականություններից:

#### **6.1.2. Ո՞ր երեխաներն են ենթակա որդեգրման**

Որդեգրվել կարող են միայն 18 տարին չլրացած երեխաները: Որդեգրվել կարող են այն երեխաները, ովքեր հաշվառված են որպես որդեգրման ենթակա երեխաներ: Որպես որդեգրման ենթակա երեխաներ հաշվառվում են այն երեխաները, ում ծնողը կամ ծնողները՝

- մահացել են,
- զրկված են ծնողական իրավունքներից,
- դատական կարգով ճանաչվել են անգործունակ, անհայտ բացակայող կամ մահացած,
- մեկ տարուց ավելի երեխայի հետ համատեղ չեն բնակվում և, չնայած խնամակալության և հոգաբարձության մարմինների նախազգուշացմանը, խուսափում են երեխայի դաստիարակությունից,
- տվել են իրենց գրավոր համաձայնությունը երեխայի որդեգրման համար:

Որդեգրման ենթակա երեխաների հաշվառումը կատարում են որդեգրման հարցերով մարզային (Երևանի քաղաքային) հանձնաժողովները:

Որդեգրվել կարող են նաև նշված խմբերի մեջ չմտնող այն երեխաները, որոնք թեև հաշվառված չեն որպես որդեգրման ենթակա երեխաներ, սակայն նրանց ծնողների և որդեգրողների միջև ձեռք է բերվել որդեգրման վերաբերյալ գրավոր նախնական համաձայնություն:

#### **6.1.3. Ո՞վ կարող է երեխա որդեգրել**

Որդեգրումը կատարվում է որդեգրել ցանկացող այն չափահաս անձանց կողմից, ովքեր հաշվառված են որպես որդեգրել ցանկացող անձ: Անձը որպես որդեգրողի թեկնածու հաշվառվում է որդեգրման հնարավորության մասին դրական եզրակացության հիման վրա: Որդեգրման հնարավորության մասին դրական եզրակացությունն ուժի մեջ է մեկ տարի և տրվում է որդեգրման հարցերով հանրապետական կամ մարզային (Երևանի քաղաքային) հանձնաժողովների կողմից:

ՀՀ անունության և ընտանիքի օրենսգրքը սահմանում է այն անձանց շրջանակը, ում արգելվում է երեխա որդեգրել: Այդ անձինք են.

- ծնողական իրավունքներից զրկված անձինք,
- անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձինք,
- նախկին որդեգրողները, եթե որդեգրումը վերացվել է նրանց կողմից իրենց պարտականությունները պատշաճ կերպով չկատարելու հիմքով:

#### **6.1.4. Ի՞նչ կարգով է կատարվում ՀՀ քաղաքացիների կողմից երեխայի որդեգրումը**



Երեխայի որդեգրման կարգը սահմանված է ՀՀ կառավարության 2000թ. փետրվարի 12-ի թիվ 64 որոշմամբ: Համաձայն այդ կարգի՝ ՀՀ քաղաքացիները, ովքեր ցանկանում են երեխա որդեգրել, հաշվառվում են որպես որդեգրողի թեկնածու: Հաշվառումը կատարում է որդեգրման հարցերով այն մարզային (Երևանի քաղաքային) հանձնաժողովը, որի տարածքում որդեգրել ցանկացող անձն ունի բնակության վայր: Հանձնաժողովը, հաշվառման վերաբերյալ ՀՀ քաղաքացու դիմումի հիման վրա, կատարում է դիմողի և նրա կենսապայմանների ուսումնասիրություն և կազմում համապատասխան ակտ: Որդեգրման հնարավորության մասին դրական եզրակացության դեպքում հանձնաժողովը տվյալ անձին հաշվառում է որպես որդեգրողի թեկնածու և լրացնում անձնական քարտ:

Որպես որդեգրողի թեկնածու հաշվառված անձը, ընտրելով որդեգրման ենթակա երեխային, դիմում է իր կամ որդեգրվող երեխայի բնակության վայրի համայնքի ղեկավարին՝ որդեգրման մասին որոշում կայացնելու համար:

#### **6.1.5. Ի՞նչ փաստաթղթեր պետք է ներկայացնի ՀՀ քաղաքացին որպես որդեգրողի թեկնածու հաշվառվելիս**

ՀՀ քաղաքացիները որպես որդեգրողի թեկնածու հաշվառվելիս՝ որդեգրման հարցերով մարզային հանձնաժողովին ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը.

- դիմում,
- անձնագիրը,
- տեղեկանք բնակարանային պայմանների և ընտանիքի կազմի մասին,
- տեղեկանք աշխատավայրից՝ զբաղեցրած պաշտոնի և աշխատավարձի մասին,
- բնութագիր՝ տրված վստահություն վայելող առնվազն երեք անձանց կողմից,
- բժշկական փաստաթուղթ առողջական վիճակի մասին,
- որդեգրման ենթակա երեխայի վերաբերյալ տվյալներ (եթե չունի ընտրած երեխա):

#### **6.1.6. Ի՞նչ փաստաթղթեր է անհրաժեշտ ներկայացնել երեխայի որդեգրման վերաբերյալ որոշում կայացնելու համար**

Որդեգրման մասին որոշում ընդունելու համար համայնքի ղեկավարին պետք է ներկայացվի.

- որդեգրողի թեկնածուի դիմումը՝ երեխային որդեգրելու խնդրանքով,
- որդեգրման հնարավորության մասին մարզային հանձնաժողովի եզրակացությունը,
- որդեգրողի թեկնածուի անձնագիրը,
- առողջական վիճակի մասին փաստաթուղթ,
- տվյալներ որդեգրվող երեխայի մասին,
- եթե որդեգրվող երեխան ունի ծնողներ՝ ծնողների համաձայնությունը, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքը ծնողների համաձայնությունը չի պահանջում,
- եթե երեխան չունի ծնողներ, ապա նրա խնամակալի կամ հոգաբարձուի համաձայնությունը,
- երեխայի ծննդյան վկայականը,
- 10 տարին լրացած երեխայի գրավոր համաձայնությունը որդեգրման վերաբերյալ, բացառությամբ այն դեպքերի, երբ նման համաձայնություն չի պահանջվում:

#### **6.1.7. Պարտադիր է, արդյոք, ծնողների համաձայնությունը երեխայի որդեգրման համար**

Երեխայի որդեգրման համար պարտադիր պայման է երեխայի ծնողների կամ նրա օրինական ներկայացուցչի՝ խնամակալի կամ հոգաբարձուի գրավոր համաձայնությունը: Իր երեխայի որդեգրման համար համաձայնություն տված ծնողը կարող է այդ համաձայնությունը հետ վերցնել, քանի դեռ որդեգրման մասին որոշումը չի կայացվել:

Օրենքը միաժամանակ նախատեսում է այն դեպքերը, երբ որդեգրումը կատարվում է առանց ծնողների համաձայնության: Որդեգրման համար ծնողների համաձայնությունը չի պահանջվում, եթե՝

- ծնողները զրկված են ծնողական իրավունքներից,
- ծնողները ձանաչված են անգործունակ կամ անհայտ բացակայող,
- ծնողները մեկ տարուց ավելի երեխայի հետ համատեղ չեն բնակվում և, չնայած խնամակալության և հոգաբարձության մարմինների նախագգուշացմանը, խուսափում են երեխայի խնամքը հոգալուց:

### **6.1.8. Պահանջվում է, արդյոք, որդեգրվող երեխայի համաձայնությունը**

Երեխայի որդեգրման համար պարտադիր պայման է նաև որդեգրվողի համաձայնությունը, եթե լրացել է նրա 10 տարին: 10 տարին լրացած երեխայի որդեգրումը՝ առանց նրա համաձայնության, թույլատրվում է միայն այն դեպքում, երբ երեխան ապրել է որդեգրողի ընտանիքում և որդեգրողին համարում է իր ծնողը:

### **6.1.9. Ի՞նչ կարգով է կատարվում որդեգրման գրանցումը**

Որդեգրման մասին՝ համայնքի ղեկավարի որոշման հիման վրա որդեգրումը գրանցվում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում: Որդեգրումը գրանցելու համար որդեգրման մասին որոշումը ՔԿԱԳ մարմին ներկայացնելը որոշումը կայացրած համայնքի ղեկավարի պարտավորությունն է:

## **Ք2. ՕՏԱՐԵՐԿՐԻՅԱ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԵՐԵՒԱ ՈՐԴԵԳՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ**

### **6.2.1. Ի՞նչ կարգով է կատարվում օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի կողմից ՀՀ քաղաքացի հանդիսացող երեխայի որդեգրումը**

Հայաստանի Հանրապետությունում երեխա որդեգրել ցանկացող օտարերկրյա քաղաքացիները կամ քաղաքացիություն չունեցող անձինք որպես որդեգրողի թեկնածու հաշվառվում են որդեգրման հարցերով հանրապետական հանձնաժողովում: Օտարերկրյա քաղաքացին հաշվառման համար հանրապետական հանձնաժողովին կարող է դիմել ինչպես անձամբ, այնպես էլ լիազորված անձի կամ տվյալ պետությունում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսական մարմնի միջոցով:

Որդեգրման հարցերով հանրապետական հանձնաժողովը, երեխա որդեգրել ցանկացող օտարերկրյա քաղաքացու դիմումի հիման վրա ուսումնասիրում է դիմողի կենսապայմանները և որդեգրման հնարավորության մասին դրական եզրակացության դեպքում տվյալ օտարերկրյա քաղաքացուն հաշվառում է որպես որդեգրողի թեկնածու և լրացնում է որդեգրողի թեկնածուի անձնական քարտ:

Որդեգրման հարցերով հանրապետական հանձնաժողովի կողմից որպես որդեգրողի թեկնածու գրանցված օտարերկրյա քաղաքացին, ընտրելով որդեգրման ենթակա երեխային, դիմում է երեխայի բնակության վայրի համայնքի ղեկավարին՝ որդեգրման մասին որոշում ընդունելու համար: Համայնքի ղեկավարը որդեգրման մասին որոշումն ընդունում է ՀՀ կառավարության թույլտվության հիման վրա:

### **6.2.2. Ի՞նչ փաստաթղթեր է պահանջվում ներկայացնել օտարերկրյա քաղաքացուն կամ քաղաքացիություն չունեցող անձին որպես որդեգրողի թեկնածու հաշվառելու համար**

Համաձայն Երեխայի որդեգրման մասին կարգի՝ օտարերկրյա քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը որպես որդեգրողի թեկնածու հաշվառվելու համար որդեգրման հարցերով հանրապետական հանձնաժողով ներկայացնում է.

- դիմում,
- անձնագիրը,
- իրենց պետության իրավասու մարմնի թույլտվությունը կամ երաշխավորագիրը՝ իրենց կողմից երեխա որդեգրելու վերաբերյալ,
- տեղեկանք բնակարանային պայմանների և ընտանիքի կազմի մասին,
- տեղեկանք աշխատավայրից՝ զբաղեցրած պաշտոնի և աշխատավարձի մասին,
- բնութագիր՝ տրված վստահություն վայելող առնվազն երեք անձի կողմից,
- բժշկական փաստաթուղթ առողջական վիճակի մասին,
- որդեգրման ենթակա երեխայի վերաբերյալ տվյալներ (եթե չունի ընտրած երեխա):

## **Ք3. ՈՐԴԵԳՐՈՒՄՆ ԱՆԿԱԿԵՐ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ**

### **6.3.1. Ո՞ր դեպքերում որդեգրումը կարող է վերացվել**

- Որդեգրումը կարող է դատական կարգով վերացվել, եթե՝
- որդեգրումը կատարվել է առանց երեխայի ծնողի համաձայնության,
  - որդեգրումը կատարվել է առանց որդեգրողի ամուսնու համաձայնության,
  - որդեգրողը պատշաճորեն չի կատարում երեխային խնամելու և դաստիարակելու իր պարտականությունները:

Ամեն դեպքում, այս հիմքերի առկայությամբ որդեգրումը վերացնելու հարցը լուծելիս՝ դատարանը ելնում է նրանից, թե արդյոք երեխայի որդեգրումը համապատասխանում է երեխայի շահերին:

Որդեգրումը վերացնելիս դատարանը հաշվի է առնում 10 տարին լրացած՝ որդեգրված երեխայի կարծիքը:

### **6.3.2. Ո՞ր դեպքերում որդեգրումը կարող է անվավեր ճանաչվել**

ՀՀ ամուսնության և ընտանիքի օրենսգրքի 136 հոդվածը սահմանում է որդեգրումն անվավեր ճանաչելու հետևյալ հիմքերը.

- որդեգրման մասին որոշման ընդունումը կեղծ փաստաթղթերի հիման վրա,
- որդեգրման կեղծ լինելը,
- որդեգրողի՝ անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձ լինելը,
- որդեգրողի՝ ծնողական իրավունքներից զրկված լինելը:

Դատարանն այս հիմքերից որևէ մեկի առկայությամբ կարող է որդեգրումն անվավեր ճանաչել, եթե որդեգրման անվավեր ճանաչումը համապատասխանում է որդեգրված երեխայի շահերին: Որդեգրումն անվավեր ճանաչելիս դատարանը հաշվի է առնում 10 տարին լրացած՝ որդեգրված երեխայի կարծիքը:

### **6.3.3. Ի՞նչ հետևանքներ ունեն որդեգրումը վերացնելը և անվավեր ճանաչելը**

Որդեգրումը վերացնելու կամ անվավեր ճանաչելու դեպքում դադարում են փոխադարձ իրավունքներն ու պարտականությունները որդեգրողի ու որդեգրվածի միջև, և վերականգնվում են փոխադարձ իրավունքներն ու պարտականությունները երեխայի և նրա ծնողների միջև: Որդեգրումը վերացնելիս կամ անվավեր ճանաչելիս՝ դատարանի վճռով երեխան հանձնվում է ծնողներին, իսկ եթե դա հակասում է երեխայի շահերին, երեխան հանձնվում է խնամակալության և հոգաբարձության մարմիններին:

### **6.3.4. Ո՞վ կարող է հայց հարուցել որդեգրումն անվավեր ճանաչելու կամ վերացնելու պահանջով**

Եթե որդեգրումը կատարվել է առանց որդեգրված երեխայի ծնողի համաձայնության, ապա որդեգրումը վերացնելու պահանջով դատարան կարող է դիմել երեխայի ծնողը: Այն դեպքում, երբ որդեգրումը վերացնելու համար հիմք կարող է հանդիսանալ որդեգրողի ամուսնու համաձայնության բացակայությունը, որդեգրումը վերացվում է որդեգրողի ամուսնու պահանջով:

Որդեգրումը վերացնելու պահանջով ցանկացած ժամանակ դատարան կարող է դիմել խնամակալության և հոգաբարձության մարմինը, եթե այդ են պահանջում որդեգրված երեխայի շահերը:

### **6.3.5. Կարո՞ղ է, արդյոք, որդեգրումը վերացվել երեխայի չափահաս դառնալուց հետո**

Որդեգրումը կարող է վերացվել, քանի դեռ չի լրացել որդեգրված երեխայի 18 տարին: Որդեգրվածի 18 տարին լրանալուց հետո որդեգրումը հնարավոր է վերացնել որդեգրողի, որդեգրվածի և վերջինիս ծնողների համաձայնությամբ:

Հավելված 1

**Ամուսնալուծության վերաբերյալ հայցադիմում**

Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների  
առաջին ատյանի դատարանին

Հայցվոր՝ \_\_\_\_\_  
(անուն, ազգ., հայրանուն, հասցեն, հեռ.)

Պատասխանող՝ \_\_\_\_\_  
(անուն, ազգ., հայրանուն, հասցեն, հեռ.)

**Հ Ա Յ Ց Ա Դ Ի Մ ՈՒ Մ**  
**ամուսնալուծության վերաբերյալ**

\_\_\_\_\_ թվականին ամուսնացել եմ պատասխանող \_\_\_\_\_  
(անուն, ազգ., հայրանուն)

հետ: Այդ ամուսնությունից ունենք երեխաներ \_\_\_\_\_ :  
(երեխաների անունները, ազգ., հայրանունը, ծննդ. տարեթիվը)

Մշտական գծությունների և տարածայնությունների պատճառով մեր համատեղ կյանքն անհնարին է դարձել:

Գույքի բաժանման կապակցությամբ իմ ու պատասխանողի միջև վեճ չկա: Իմ ու կնոջս միջև համաձայնություն է ձեռք բերվել նաև երեխաների դաստիարակության կապակցությամբ: Կինս չի առարկում ամուսնալուծությանը:

ՀՀ ամուսնության և ընտանիքի օրենսգրքի 33 հոդվածի հիման վրա՝

**ԽՆԴՐՈՒՄ ԵՄ**

Լուծել ՔԿԱԳ տարածքային բաժնում \_\_\_\_\_ — թվականին գրանցված մեր  
ամուսնությունը:

Կից ներկայացվում են.

1. ամուսնության վկայականը,
2. երեխաների ծննդյան վկայականների պատճենները,
3. պետ. տուրքի վճարման անդորրագիրը,
4. հայցադիմումի պատճենը:

\_\_\_\_\_ 20\_\_թ. \_\_\_\_\_  
(ստորագրություն)

Հավելված 2

**Հայցադիմում ամուսնալուծության և գույքի բաժանման վերաբերյալ**

Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների  
առաջին ատյանի դատարանին

Հայցվոր՝ \_\_\_\_\_

(անուն, ազգ., հայրանուն, հասցեն, հեռ.)

Պատասխանող՝ \_\_\_\_\_

(անուն, ազգ., հայրանուն, հասցեն, հեռ.)

**Հ Ա Յ Ց Ա Դ Ի Մ ՈՒ Մ**  
**ամուսնալուծության և գույքի բաժանման վերաբերյալ**

\_\_\_\_\_ թվականին ամուսնացել եմ պատասխանող \_\_\_\_\_

(անուն, ազգ., հայրանուն)

հետ: Այդ ամուսնությունից ունենք երեխաներ \_\_\_\_\_ :

(երեխաների անունները, ազգ., հայրանունը, ծննդ. տարեթիվը)

Ամուսնական հարաբերությունները փաստացիորեն դադարել են սկսած 19-- թվականից: (Նշել այն բոլոր պատճառները, որոնք ըստ հայցվորի կարող են հիմք հանդիսանալ ամուսնալուծության համար):

Մեր միջև համատեղ սեփականության ներքո գտնվող գույքի բաժանման կապակցությամբ համաձայնություն ձեռք չի բերվել: Համատեղ կյանքում ես և պատասխանողը ձեռք ենք բերել հետևյալ գույքը.

(նշել համատեղ սեփականություն հանդիսացող յուրաքանչյուր իրը, դրա արժեքը, այն ձեռք բերելու ժամանակը, գտնվելու վայրը)

Համատեղ սեփականության ներքո գտնվող գույքի ընդհանուր արժեքը \_\_\_\_\_ դրամ է:

ՀՀ ամուսնության և ընտանիքի օրենսգրքի 33 և 36 հոդվածների,  
ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197 և 199 հոդվածների հիման վրա՝

**ԽՆԴՐՈՒՄ ԵՄ**

1. Լուծել ՔԿԱԳ տարածքային բաժնում \_\_\_\_\_ թվականին գրանցված մեր ամուսնությունը:

2. Բաժանել իմ ու ամուսնուս համատեղ սեփականության ներքո գտնվող գույքը՝ ինձ հատկացնելով \_\_\_\_\_ :  
(իրերի անվանումները, դրանց արժեքը)

Ինձ հատկացնել գույք՝ \_\_\_\_\_ ընդհանուր արժողությամբ:  
Պատասխանողին հատկացնել \_\_\_\_\_  
(իրերի անվանումները, դրանց արժեքը)

\_\_\_\_\_ (ընդհանուր արժողությամբ)

Կից ներկայացվում են.

1. ամուսնության վկայականը,
2. երեխաների ծննդյան վկայականների պատճենները,
3. ամուսնության ընթացքում ձեռք բերված գույքի ցանկը,
4. պետ. տուրքի վճարման անդորրագիրը,
5. հայցադիմումի պատճենը:

Հավելված 3

**Հայցադիմում գույքի բաժանման վերաբերյալ**

Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների  
առաջին ատյանի դատարանին

Հայցվոր՝ \_\_\_\_\_  
(անուն, ազգ., հայրանուն, հասցեն, հեռ.)

Պատասխանող՝ \_\_\_\_\_  
(անուն, ազգ., հայրանուն, հասցեն, հեռ.)

**Հ Ա Յ Ց Ա Դ Ի Մ ՈՒ Մ**  
**գույքի բաժանման վերաբերյալ**

\_\_\_\_\_ թվականի դատարանի վճռով լուծվել է պատասխանողի  
\_\_\_\_\_ հետ մեր ամուսնությունը:  
(անուն, ազգ., հայրանուն)

Համատեղ կյանքում ես և պատասխանողը ձեռք ենք բերել հետևյալ գույքը.

(նշել համատեղ սեփականություն հանդիսացող յուրաքանչյուր իրը, դրա արժեքը, այն ձեռք բերելու  
ժամանակը, գտնվելու վայրը)

Համատեղ սեփականության ներքո գտնվող գույքի ընդհանուր արժեքը  
\_\_\_\_\_ դրամ է:

Ամուսնալուծության վերաբերյալ հայցի քննության ընթացքում գույքի բաժանման պահանջ չենք  
ներկայացրել՝ հուսալով հարցը լուծել փոխադարձ համաձայնությամբ: Սակայն նման  
համաձայնություն ձեռք չի բերվել:

ՀՀ ամուսնության և ընտանիքի օրենսգրքի 36 հոդվածի, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197 և 199  
հոդվածների հիման վրա՝

**ԽՆԴՐՈՒՄ ԵՄ**

Բաժանել իմ ու ամուսնուս համատեղ սեփականության ներքո գտնվող գույքը՝ ինձ հատկացնելով  
:

\_\_\_\_\_ (իրերի անվանումները, դրանց արժեքը)

Ինձ հատկացնել գույք՝ \_\_\_\_\_ ընդհանուր արժողությամբ:

Պատասխանողին հատկացնել \_\_\_\_\_

\_\_\_\_\_ (իրերի անվանումները, դրանց արժեքը)

\_\_\_\_\_ (ընդհանուր արժողությամբ)

Կից ներկայացվում են.

1. ամուսնության վկայականը,
2. ամուսնության ընթացքում ձեռք բերված գույքի ցանկը,
3. պետ. տուրքի վճարման անդորրագիրը,
4. հայցադիմումի պատճենը:

Հավելված 4

**Հայցադիմում երեխայի համար ալիմենտի բռնագանձման մասին**

Շենգավիթ համայնքի առաջին ատյանի դատարանին

Հայցվոր՝ \_\_\_\_\_  
(անուն, ազգ., հայրանուն, հասցեն, հեռ.)

Պատասխանող՝ \_\_\_\_\_  
(անուն, ազգ., հայրանուն, հասցեն, հեռ.)

**Հ Ա Յ Ց Ա Դ Ի Մ ՈՒ Մ**  
**երեխայի (երեխաների) համար ալիմենտի բռնագանձման վերաբերյալ**

\_\_\_\_\_ քաղաքացի անուսնացել եմ պատասխանող \_\_\_\_\_  
(անուն, ազգ., հայրանուն)

հետ: Նրա հետ համատեղ բնակվել ենք մինչև \_\_\_\_\_  
(եթե ամուսնալուծված եք, նշեք նաև ամուսնալուծության ամսաթիվը)

Այդ ամուսնությունից ունենք երեխա (երեխաներ) \_\_\_\_\_ :  
(երեխայի (երեխաների) անունները, ազգ., հայրանունը, ծննդ. տարեթիվը)

Երեխաները գտնվում են իմ խնամքի ներքո: Ամուսինս հրաժարվում է երեխայի (երեխաների) համար ապրուստի միջոց վճարելուց:

Պատասխանողն այլ անչափահաս երեխայի համար ալիմենտ չի վճարում:

ՀՀ ամուսնության և ընտանիքի օրենսգրքի 104 հոդվածի համաձայն՝

**Խ Ն Դ Ր ՈՒ Մ Ե Մ**

Պատասխանողից հօգուտ ինձ՝ երեխայի (երեխաների) համար \_\_\_\_\_  
(երեխայի (երեխաների) անունը, ազգ., հայրանունը, ծննդ. ամսաթիվը)

բռնագանձել ալիմենտ՝ \_\_\_\_\_ չափով՝ սկսած \_\_\_\_\_ ից մինչև \_\_\_\_\_  
երեխաների չափահաս դառնալը:

Կից ներկայացվում են.

1. ամուսնության վկայականի պատճենը (ամուսնալուծության դեպքում՝ ամուսնալուծության վկայականի պատճենը),
2. երեխայի (երեխաների) ծննդյան վկայականը,
3. տեղեկանք առ այն, որ երեխան (երեխաները) գտնվում է հայցվորի խնամքի ներքո,
4. տեղեկանք պատասխանողի եկամուտների մասին,
5. հայցադիմումի պատճենը:

Հավելված 5

**Դիմում երեխայի համար ալիմենտի գանձման մասին**

Շենգավիթ համայնքի առաջին ատյանի դատարանին

Դիմող՝ \_\_\_\_\_  
(անուն, ազգ., հայրանուն, հասցեն, հեռ.)

**Դ Ի Մ ՈՒ Մ  
երեխայի (երեխաների) համար ալիմենտի գանձման վերաբերյալ**

\_\_\_\_\_ ֆեբրուարին ամուսնացել եմ \_\_\_\_\_  
(անուն, ազգ., հայրանուն)  
հետ: Նրա հետ համատեղ բնակվել ենք մինչև \_\_\_\_\_  
(եթե ամուսնալուծված եք, նշեք նաև ամուսնալուծության ամսաթիվը)

Այդ ամուսնությունից ունենք երեխա (երեխաներ) \_\_\_\_\_ :  
(երեխայի (երեխաների) անունները, ազգ., հայրանունը, ծննդ. տարեթիվը)

Երեխաները գտնվում են իմ խնամքի ներքո: Ամուսինս չի առարկում երեխայի (երեխաների) համար ապրուստի միջոց վճարելու դեմ:

Ամուսինս այլ անչափահաս երեխայի համար ալիմենտ չի վճարում:

ՀՀ ամուսնության և ընտանիքի օրենսգրքի 104 հոդվածի համաձայն՝

**Խ Ն Դ Ր ՈՒ Մ Ե Մ**

Պատասխանողից հօգուտ ինձ՝ երեխայի (երեխաների) համար \_\_\_\_\_  
(երեխայի (երեխաների) անունը, ազգ., հայրանունը, ծննդ. ամսաթիվը)  
գանձել ալիմենտ՝ \_\_\_\_\_ չափով՝ սկսած \_\_\_\_\_ ից մինչև \_\_\_\_\_  
երեխաների չափահաս դառնալը:

Կից ներկայացվում են.

1. ամուսնության վկայականի պատճենը (ամուսնալուծության դեպքում՝ ամուսնալուծության վկայականի պատճենը),
2. երեխայի (երեխաների) ծննդյան վկայականը,
3. տեղեկանք առ այն, որ երեխան (երեխաները) գտնվում է հայցվորի խնամքի ներքո,
4. տեղեկանք պատասխանողի եկամուտների մասին,
5. ամուսնուս համաձայնությունը ալիմենտ վճարելու մասին,
6. դիմումի պատճենը:

\_\_\_\_\_ 20\_\_ \_\_\_\_\_  
(ստորագրություն)